

Բ Ի Ի Ր Ա Կ Ն

Լ Ր Ա Գ Ի Ր

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԱՄԷՆ ՉՈՐԵՔՆԱԳԹԻ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Ս Յ Է

Դառանքն ու Պոլսոյ Տարեկան 50 Դրուշ

در سعادتده بفتح قیوستده قاضسکر خاندده

» » վիցամսեայ 30 »

« پوراعن » غزتمسی ادارمسنه

Օտար երկիրներ [6 Բուպի] 15 Գրամի

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ԲԻՒՐԱԿՆԻ
Գալստէր խան, Պահել գարու, Կ. Պոլսո

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄ (1)

Մօտ Չ տարի է ձեռնարկած ենք պատարաստելու նախակրթ ու թեան նորագոյն և ամբողջ դասընթացք մը, հետեւողութեամբ Ա. Սէնէզիէնոր Գլխոց (Ecole Moderne) անուն գործին որ Ֆրանսայի մէջ դպրոցական մատենագրութիւնը յեղարկելից, Կ'արմէ քիչ մը ծանօթութիւն տալ այս նոր դրութեան վրայ որ մանաւանդ մեր ազգ. վարժարաններուն համար անձամբ մտատ օգուտ պիտի ունենայ նոյն իսկ առաջին օրէն որ սկսինք դասն երեւան բերել: Արդարեւ մեր մէջ դպրոցական կանոնագրեր ու կրթական ծրագրեր կը յաջորդեն իրարու, բայց կարելի չըլլար, զժբաղդաբար, ձեռք բերել լաղձալի կրթական միութիւնը որ այդ ծրագրերներուն ու կանոնագրերուն զլիտա.որ նպատակն է, եւ այդ անյաջողութիւնը արգելք կ'ըլլայ կրթական գործին զօրաւոր մղում մը տալու: Արդ, մեր հետեւած դրութիւնը կը հաւատանք թէ ըստ այս անպատեհութեանց ու անյաջողութեանց առաջին անեւելու մեծապէս

պիտի նպաստէ ըստ դպրոցները ինքնուրու ընթացողով մը անզգալապէս բերելով միասնաբար ուղղութեան, էլ զով Մօտեւանի նորին կարելի պիտի ըլլայ 1. Բաւաստուները հրահանգել այնպէս որ ալ անոնցմէ ամէն մէկը քմահաճ ու կամայական դրութիւններ չգործադրէ, 2. Կրթական ծրագրերներու պէտպետութեան տեսլքն անել, 3. Դպրոցներու և դասարաններու աստիճանները ճշդել և ըստ այնմ կառավարել, 4. Որչէ ժամանակացոյց մը գործադրել ամէն տեղ միօրինակ եւ պարտաւորիչ կերպով, այնպէս որ այս ինչ օրը այս ինչ ժամուն Պոլսոյ այդ ինչ վարժարանին մէջ ինչ դաս որ կ'աւանդուի, գաւառական ո՛ր եւ է դպրոցի մէջ ալ նոյն օրը նոյն ժամուն միեւնոյն դասը պիտի կրնայ աւանդուիլ, եթէ այդ դպրոցը առաջին համապատասխան աստիճանով դպրոց մ'է, 5. Աշակերտներուն օրական, շաբաթական եւ ամսական ուսանելիքները սահմանադրել, այնպէս որ տրուած չափէն ո՛չ աւելի և ո՛չ պակաս աւանդուի և այս ինչ թաղի դպրոցէն որ եւ է ատեն հրատարակելով ուրիշ դպրոց մը զացող տղան ճշդիւ կարենայ հետեւիլ իր պատկանած դասարանին, 6. Ա-

8601

[1] Ազգ. թերթերէ կը ինչգրուի ներկայ յօդուածը արտասպէլ նշմութեամբ կամ համառօտակի:

չակերանները ունենան անյեղիօրէն միօրինակ դասադիրքեր՝ կամ տեւի ճիշդը, միակ ու համանման դասադիրք մը եւ երբ կամ ո՛ր որ երթան, կամ ո՛ր եւ է ատեն եթէ դասատու փոխուի, աչակերանները չտարպուին դասադիրք ու միթառ փոխելու եւ այս պատճառով թանկագին ժամանակ կորսնցնելու եւ նոր դասադիրքերու համար զրամ վատնելու :

Ecole Moderneի այս դրութեամբ, որ գերազանցապէս օգտակար միօրինակութիւն մը պիտի բերէ մեր կրթական դրութեան մէջ, աչակերանը պիտի ունենայ ամբողջ տարիին մէջ միայն երեք դիրք կամ հատոր, մէն մը հատորը համապատասխանելով եռամսեայ ընթացքի մը, և պարունակելով իր մէջ ինչ դաս որ տղան պիտի կրնայ ուսանիլ նոյն երեք ամիսներուն մէջ : Հասկնալի է, ուրեմն, թէ այդ եռամսեայ մէն մի դրքին մէջ բաժնուած ու պէ՛տք եղած չափով գասաւորուած պիտի լլան ուսումներու բոլոր ճիւղերն այ՝ բարոյագիտութիւն, քաղաքացիական դիտութիւն, հայերէն լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, թուարանութիւն, գիտական ճիւղեր, օտար լեզուներ ևայլն, այս ամէնը համակեդրոն դրութեամբ եւ երեք աստիճանով, ինչպէս կը արամադրէ Ազգ. Կնդր. Վարչութիւնէն հաստատուած վերջին Կազմական Կանոնագիրը որ պարտաօրիշ է ամէն հայ դպրոցի համար, թէ եւ յարզ կարելի չեղաւ ամէն տեղ և նոյնութեամբ զործարկել—անոր համար որ այդ կանոնագիրը գործադրելի ընելու նպատակ ուրիշ կարգ մը բաներ չէր կարելի մէկ քանի տարուան մէջ ունենալ, օրինակի համար նոյն Կանոնագրին արամադրութեանց համեմատ պատրաստուած ուսուցիչներ, ծրագրի համապատասխան դասադրքեր ևլն, Հիմա մեր հրատարակելիք դասընթացքներով արդէն յաջողութեան կէտը ձեռք բերուած կ'ըլլայ եւ անոր չնորհիւ այլ ուսուցիչները պիտի հասնին փախաքուած վիճակին :

Մեր հետեւած ու պատրաստած ձեռնարկները, այսինքն էգոյ Մոսկոնի դրութեամբ գտադիրքերը դիտութիւն պիտի տան ընել ինչ որ ցարդ կարելի չեղաւ, և վստահ ենք թէ մեր այս առաջադրութիւնը ջերմ ընդունելութիւն մը պիտի գտնէ որքան պաշտօնական չրջանակներու, նոյնքան ալ զպրոցական վարիչներու, ուսուցիչներու և հանրութեան կողմէ :

Չաճապարե՛նք, սակայն, հիմակունէ ամէն բան զլուցելու, թողունք որ գործը խօսի և ինքզինք ցոյց տայ : Այն ատեն, անուշատ ամեն որ պիտի համոզուի անոր արդիւնաւորութեան մասին :

Ս. ԴԱԻԹԵԱՆ

ՄՕՏԵՆԱԹՈՍԱԿԱՆ

ՓԻՒՈՆ ԵՐԲԱՅԵՅԻ ԵՒ ԵՂԻՆԷ

Մեր Մատենադարանի թ. 157 ձեռագիրը որ կը պարունակէ 1. Փիլոնի գործերը՝ ընդօրինակուած 1298 թուի զբրչութիւնէ մը. 2. Եղիշեցական Կանոնագիրք. և 3. Գոտաստանագիրք : Յուցակագրելու ատեն, միտք ծագեցաւ մէջս իմանալ, որ Փիլոնի գործերէն իբրեւնախնեաց թարգմանութիւն՝ տո՛ճային մտանադիրք ի՛նչ փոփոխութիւնները րամ են առ այս աչքէ անցուցի ճնախնեաց թարգմանութեանց մատենագրանոյր, յորում ներհուն աշխատասիրողը, էջ 742-7 մի առ մի յատա՞ր բերած է եղած փոփոխութիւնները, ի միջի այլոց ևւ Եղիշեցիէն : Բայց որովհետեւ Փիլոնի « Յաղագս կենաց վարուց տեսականին » ևւ Եղիշեցի « Բան խրատու յաղագս միանձնաց » համանիւթ են, առ հետաքրքրութեան բաղադատեցի և այսպիսի համոզման եկայ, որ մեր աղուարան Եղիշեցի ձեռնարկով Փիլոնի վերոյիշեալ ճառը, զուցէ ևւ թարգմանիլը ըլլալով՝ նորա վրայ չարած ձեւած ևւ կազմած է Միանձնաց խրատու թէ ևւ առաջին նալուածքով Փիլոնը իւր ճոխութեամբ ևւ Եղիշեցի իւր հա-

մատուցութեամբ շատ կը զանազանին իրարմէ, բայց յապագելով Փիլոնի այն մասերը, որ կը վերաբրին նախնի իմաստասիրաց վարդապետութեան՝ նըկատմամբ չորրից տարերաց, Եղիպտոսաց եւ այլոց ազգաց բնապաշտութեան եւ անպաշտութեան ու զինաբրտաց զեզժ՝ չուայտ ու ցոփ կեանքի նկարագրութեան, մնացեալը, շատ աննշան տարբերութեամբ, Եղիշէի «միանձանց խրատ» յի նախագազափարը կը կազմէ:

Ստորեւ կ'ամփոփենք մեր բազմատուութեան արդիւնքը, ուր ակններու պիտի տեսնուի Եղիշէի բուսականաչափ վերաբերութիւնները թէ՛ ըրտերու, թէ՛ իմաստի եւ երբեմն նախադասութեանց, թողունք Երկոթին գրութեանց նիւթի համակարգութիւնը, կ'ուզենք առաջ բնութեցողին ու չաղրութիւնը դարձնել Եղիշէի մի քանի չեղումներուն վրայ, որոնք ըստ մեզ կամայական են:

Փիլոնի Յեսեանց առաքինութեան հանդիսավայրն է Եղիպտոս, Մարեայ լճի եզրերը, բարձրավանդակի մը վրայ, որ իւր ծովամերձ դիրքով եւ առողջարար կլիմայով « առողջաբոյն հաստատութիւն կենաց գործէր »: Իսկ Եղիշէ իւր միանձանց բնակավայրը «Տարաւ» անորոշ բառով միայն ցոյց կը տայ: Եթէ հարու բարդ այն սեղմ մտքով ընդունինք, զոր կրնու թէ Եղիշէ բառը ըլլայ իր սեղւոյն նկատմամբ, պէտք է ուրեմն հասկընանք Միջագետք կամ Ասորի, բայց Միանձանց ծագկիման միջոցին, եւ անկէ առաջ ու վերջը այդ սեղերը, որ Պարսից եւ Յունաց մէջ անընդատ պատերազմներու թափարներ էին, կրնային յայտնուիլ մեան պահել միանձանց յայրանք բաղմութիւն: Ըստ մեզ Եղիշէ « Հարաւ » բառով Եղիպտոսը կ'ակնարկէ. իսկ բուն բարդ գործածելու զգուշութիւնը մեզ համար թարգման է:

Փիլոնի Յեսեանց մէջ սրբատէր կլիներ այ կան. » Յողովք ի նոցանէ պատուական կոչաք». իսկ Եղիշէի Միանձանց բաղմութիւնը է « առանց կա-

նանց միարժեանութեան ». կարծես Եղիշէի բողոքիկեալ ջրամահները առ կանայց շատ բնասարսիկ է. որովհետեւ մարդիկ, որ ի մանկուքէնէ իրենք զիրենք կը նուիրեն աստուածաշնորհութեան ու կը կրթուին մշամարերութեան մէջ, չենք կարող ըսել, որ այդ առաքինութիւնները այդ մարդկանց միայն յատուկ են ու կլին մարդիկ չեն կարող ունենալ: Իսկ եթէ Եղիշէ մարդիկ բառով միայն տըրեր կը հասկնայ, բաւական էր այդքանը, այլեւս հարկ չէր մնար չեշտել շատանց կանանց միարժեանութեան: Այս ալ պարզագոյն ըստ մ'է:

Մեր այս ենթադրութիւնը աւելի հաստատուն կրտան մի կ'ունենայ հետեւեալին մէջ. Եղիշէ կ'ըսէ, «եւ զարթութուցեալք առհասարակ անչն ի շրջանս պարուց դարբին»։ Երեսնակամէ պարը ամէն զատաղայիներուն ծանօթ է. այս ձեւ պարը կ'ունենայ մէկ զլխաւոր, կամ առաջնորդ, որ պարի եղանակաւոր երգը կը նուազէ ու պարաւորք նոյնը կը կրկնեն, ըստ սովորութեան իրարու հակառակողներ եւ ընդդիմացողներ չեն ըլլար: Բայց Եղիշէի «ո՛չ հակառակք եւ ո՛չ ընդդիմացեալք» բացատրութիւնը կասկածի կ'ենթարկէ պարի ձեւը. ուստի կրնանք ենթադրել շղթայանքի կրկին պարք զէմ առ զէմ ու այն ատեն պարաւորք ուրոյն առաջնորդներ կ'ունենան ու այս պարագային հաւանական կը լինին «հակառակք եւ ընդդիմացեալք»: Փիլոն կ'ըսէ. «երկուք լինին պարք, մին արանց եւ մի կանանց»։ Ըստ այսմ երկու առաջնորդ կ'ընտրուին «պատուաւորապէս ունեւազաւորագոյն» թէ եւ Եղիշէ պարագոյն կանանց պարը յիշելու անպատեհութենէն ուզած է խուսափել ու այս պատճառաւ զմիանձանս «ի շրջանս պարուց» կը բողոքէ, բայց մի քանի սող վարք «Առաջնորդք զատուցն» բացատրութիւնը ակնյայտի սպացոյց է թէ պարերը կրկին են:

Եղիշէի այս մի քանի աւերելոյթ տարբերութիւնները ու իւր ժամանակին

միանձանց ուղղած բաւական երկար սուր խրատականը վերցնենք. մնացածը ըստ ամենայնի Վեաղապ կենաց վարուց տեսականին» է. և միթէ ըստ տեսանեմ ի մերում աշխարհիս ևւ ո՛չ գոք ազատեալ... յախտիցս խօսքն ալ չի՞ հաւաստիացնէր զմեզ, որ եղիշէի գաղափարական միանձունք իւր ժամանակինը

Եղիշէ սպ. Ս. Երուսաղեմի 1865

Հեռանան ի հայրենի բնակութեան:

Ո՛չ իբրև չարակենլով նախանձորգի փախուցեալք:

Եւ շինեն իւրաքանչիւր խցկունս... որմ ղուզմաքայ առ յցոյն պահպանութեան, և զոյգ նմի ձեկուն՝ առ արեգական պահպանել. յասակ անպանոյն՝ շասացեալ խոսեղեն սնկողնօք:

Առնեն և նոքա հանդերձան պահանջան ևւ յոյժ գծուծս, կողքս ամարանի ևւ բեգանաւորս ձմերանի արկանն ևւ աղաբողոս մեկնաւորս:

Մանաւանդ ի պարս շրջապայ անդադար պաշտամանն՝ երգս հողեւորս:

Զաջ ձեռն ի վերայ ձնօտին երբեալ ևւ զանեակն ի վերայ կրծիցն:

Եւ օրհնութիւն եռաշափս:

Վանդի մարմին ունին... ուսեն զի մի բաղցիցեն ևւ րմպեն զի մի ծուրաւեսցին:

Հայ ե նոցա անպանոյն ևւ բանջար վայրենի, զոր համով արեն համեմեն ևւ ջուր յսակ... ուսեն հաց ևւ զոպայ ևւ րմպեն ջուր ցուրս:

Այլ միաբան պահելով գերկայնութիւն աւուրն:

Սակայն ևւ զայս ոչ երբէք ի տուրջեան մատուցանեն ի դարման պիտոյից մարմնոյ:

չեն, այլ քրիստոնէութեան նախնական դարերու այն անապատականներն էին, որ առանձնացած աշխարհի արմուկներէն՝ կ'ապրէին Եգիպտոսի անապատներուն մէջ, որոնց կենցաղը իբրև վիպասան ճշմարտարանս Փիլոն շատ կանուխ քան զԵղիշէ կենդանադրած է իր Տեսականին մէջ:

Փիլոն թիւ 167

Փախչին... լքեալ թողեալ... Իլ զաւառս յորում ձնեալ եղեն ևւ սնան,

Ո՛չ զմիայնութիւնն ախորժեցին վասն մարդատեցութեանն:

Իսկ սուսք ի մի վայր եկեղոցն յոյժ գծուծ են, առ երկուս իրս հարկաւորագոյնք, ձեկուն ի վերոյ ունելով՝ զյարեգականն խոբումն ևւ զօրոյն ցրտութիւն... ևւ պարելք են ի ղուզմաքայ նիւրոյ, յորոց կարի գծուծ գետնաստորս ի գաւառային պրտոյն:

Եւ զգեսն եղնպէս ղուզմաքայ ևւ առանց պանուսանաց առ ի յապրանս ի ցրոյ և ի սօրոյ, քանզի վերակու թաւ մորթոյ ձմերանի ևւ թիկնանց ամարանի:

Երգոց փրկաւեսաց պարսուորաց շրջմամբ ևւ բազմաշրջմամբ:

Զաջն ի մէջ կրծիցն ևւ ձնօտին, իսկ զանեակն զսպեալ ևւ ամփոփեալ առ կշտին:

Եւ նուազս բազումս թողին տաղից եռաշափսց:

Վասն այտորիկ ուսեն, զի մի բաղցիցեն ևւ րմպեն, զի մի ծարաւեսցին:

Եւ կերակրին ո՛չ բազմապատիկ խահուրք, այլ հաց անպանոյն ևւ ալ խորտիկ, զորս... համեմեն զոպայիւ, ևւ է րմպելի նոցա վտակային ջուր:

Իսկ զաւառուօք մինչև ցերեկոյ գերկայնութիւն տուրջեան առ հասարակ ամենեցունց վարժանք տեսութեան:

Բայց կերակուր ևւ րմպելի ո՛չ ոք ի սոցանէ բնկայցի յաւաջ քան զմուս արեգական:

Ի խաւարային ժամու զխաւարային կերակուրս խաւարային մարմնոյ տացուք :

Քանզի զոն ի նոսա ծեբք փախկալարք մատուցանեն ջուր ջեբմ... այլ զինի... եւ գտանի ոչ ի սուրբ միայնանոցս նոցա :

Նաեւ եթէ յամեն եւս ի քունն, երազ հոգեկան տեսնեն եւ անդէն զանուրջսն մեկնեն իբր զբանս սուրբ մարգարէիցն :

Եւ զարթուցեալք առ հասարակ անդէն ի շրջանս պարուց բոլորին :

Առաջնորդք դասուցն հնչումն ձայնի արձակեն, երգս հոգեւորականս քաղցրասուլակս փոփոխելով . իսկ կրտսերացոյնքս ձայնիցն միտ զնելով՝ խառնեն զիրքքանչիւր բարբառոսն յարմարելով :

Արմատախիչ զճառաւուցնս քեանտեացն կոտորեցուցով :

Իսկ որ ունին շնորհս վարդապետութեան առնեն մեկնութիւն ի մխիթարութիւն լսողաց :

Եւ խաւարին զմարմնոյն հարկաւորս :

Գինի... ամենեւին ո՛չ տանին ի ներքս, այլ ջուր ակնանկիտ, յուրովաց ի նոցանէ հով, բայց ջեբմ ծեբուեցացն փախկակեցացն :

Մինչտ անմտաց ունին զԱստուծոյ յիշատակն, մինչ զի եւ ի ձեռն անբջից ո՛չ այլ ինչ, այլ զգեղեցիկ եւ զաստուածային առաքինութեանց, եւ զօրութեաց տեսակ տեսնեն. քանզի եւ բազումք խօսին ընդքու զանուրջսն մեկնելով զասուածայինսն :

Յոտն կան առհասարակ ամենեքին... նախ զառաջինն երկուք ինին պարս :

Ապա երգս արարեալ օրհնութիւնս յԱստուած բազում չափօք եւ նուազօք միովն առհասարակ հնչին ամենեքին եւ միասովն զուգածայն յարմարութեամբ :


Հեձեն եւ ճառակոտոռ առնեն զքրեցածեացն երկիբ :

Գահերէցն խնդիր ոմանց, որ ի սուրբ տէրունանս կայ, առարկիւրց լուծանէ եւ մեկնէ .
Եւուսադեմ ՍԱՀԱԿ ԵՊ. ԽԱՊԱՅԵԱՆ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

Հ Ա Յ Պ Ա Տ

ՈՒ ԺԱՄԿՈՉ ՍԱՐԳԻՍ



Բնութեան մասնաւոր խնամքովը ձեռուած ու թափուած՝ բարձր եւ ուղղաձիգ կողերով անտոիկ բերդի մը նմանութեամբ՝ սակայն լեբի ու անջուր՝ մշտօրեայ արեւին տակ կառուած՝ ուրուրնեւրու թառ՝ ու բոյն օձերու՝ մենիկ ու լոին՝ Բալուրի հիւս. արեւմտեան կողմը լեռան մը վրայ կը կանգնի ապառաժի հակա կոյտ մը, թէեւ զուրկ ամէն տեսակ հրապոյրներէ եւ վայելչութիւններէ, բայց էն հնչատուտ վայրերն իսկ կը նսեմանան ասոր քով՝ Բալուրի գիւղա-

ցիներուն բարեպաշտական զգացումներուն մէջ : Հոգեւորական պաշտօնմի մարմնացումն եղած է ան այն օրէն ի վեր, երբ՝ անորոշ ժամանակներու մէջ՝ բացառիկ պայմանով մը զո՞ն եղած է նա, որուն պատմութիւնը միշտ կ'աւանդուի մեծ եռանդով՝ միամիտ օճախներու շուրջը :

Հոտ՝ այդ ժայռերուն տեղը՝ հովիւ մը իր ոչխարներուն հետ ծարաւէն պապական՝ մօտերը գտնուող սուրբէն ջուր կը խնդրէ՝ զո՞ն խոստանալով : Կը լսուի աղերսն ու պաղպաղուն աղբիւր մը կը բղխի. բայց ազո՞ս աղբերարկուն թէեւ ուխտը չի դո՞ժեր, սակայն փոխարկնութիւնը չարաչար կ'ընէ, Սուրբը իր խառուելուն վրայ զայրանալով՝ հովիւն ու հօտն անմիջապէս քար կը զարձնէ : Աղբիւրը կը ցամբի եւ հսկայ ապառաժ կը

յաջորդէ, Իսկ այդ կենսատու ակին չուք ընող միարմատ զոյգ մը ինկկնինները (բււեկնի) դեռ կ'ապրին ուխտաւորնե-րու քուրչերովը կապուած: Այն օրէն ի վեր Բայուի գիւղացիներուն ու այդ կոյտին միջեւ հաւատքի զօրաւոր ու նոր կապ մը կը հաստատուի ճանչցուե-լով Սուրբին զօրութիւնը, Ամէն կիրա-կի, աջալոյտին կամ կիրակմատքին, կիներ՝ հարսներ՝ աղջիկներ ու տղաք-ներ կը յաճախեն հոն՝ սլլպացող աւելի մտախի կ'ատղեղուն ու զով սիւքին տակ գեշերելու:

Կողերն առապար ու մտղցիկ՝ ելքը դժուարին ու երկար. քայլ ինչալով ել-լելով առաջացող ուխտաւորին քրտին-քին մէն մի կաթիլը իր բարեպաշտա-կան եռանդն ու հաւատքին մակարդակը կը բարձրացնէ, որուն մէջէն կը տա-րամբժուի քայլ քայլ աշխարհայինն աշխարհայինն համար եւ աշխարհայինի բուն բաղձանքը կը բարձրացնէ զինքն այնչափ հոգեկան վերացումի, ուր այլևս կը մոռնայ ամէն յոգնութիւն ու նեղու-թիւն: Հաւատքի այս աստիճանաւոր վերացումն երբէք չի կատիւր մինչեւ որ աչքն իննան այն երկու քա՛ղքն ու պատ-մակն ինկկնինները, որոնց քսու տնակ մը կայ իրենց տերեւներով քողքուած կիսովին: Հո՞ն է Հայպատ, աղջիկին ու մանկամարդ հարսին սուրբը՝ սուրբերուն վեհագոյնն ու ա՛հաւորը՝ երիտասարդն ու հսկան: Հոն այլ եւս իր իղձերուն կեդրոնն է, որուն կը պլլուն իր ամբողջ հաւատքին հետ ետանդով արցունքո-տած սիրտը. եւ խոյս կուտան իրական երեւոյթները: Հոն հաւատքը կ'իշխէ զլիսովին աչքին, կամքին ու դատումին՝ բիրտ զմայլումներ ցողացնելով այդ կոյտ կոչտ ժայերուն մէջ փոխանակ այն ճշմարիտ վայելչութիւններուն, ո-րոնցմով քողքուած երբեմն լեւներ ար-ցունք կը թափեն իրենց կողերէն: Խըն-կենին ամբողջ անտատ մ'է. որուն մէն մի ծիւղէն հրեշտակներ կախուած են, ջղջիկի տեղ: Փոսուսան հրեղէն կայծ մ'է. ուր ուրի՛ս սոյն անուշ՝ օճը՝ սուր-

բին աղղեցութեան տակ անվառ ու ար-գահատելի սողուն. ամէն բան զմայլում է եւ ամէն զմայլումներ կը խտանն, կը թխմին, կը ծածանին, կը գալար-ուին նկարներու պէս հաւատքին մէջ՝ հաւատքի սիւքէն. եւ հոգեւորական բիրտ պատկերներ դէմ դէմի, քով քովի, հակադիր՝ ուղիղ՝ շեղ՝ անհուն լեփլեցուն կը շեշտուին ու կ'աղնտան միշտ բարեպաշտիկ երեւակայքին մէջ, ուր ջերմեանդ զգացումներն ու միա-միտ դատումը յափշտակուած՝ զինով՛ բաժնուած՝ պղտկցած՝ հիւլէի վերած-ուած այդչափ վերացման մէջ՝ իրակա-նին յաջող բան մը չեն աւելցրներ:

Հաւատքի մասնաւորութիւն մ'է աս եւ ոչ այն սովորական ու տեւական հաւատքը՝ զոր ունինք մեր տան դէմ՝ միշտ աչքի տակ շքեղ կամարներով շքարուած Ս. Թորոսի վրայ, հաւատք մը՝ որ այս կամ այն Սուրբին յատկու-թիւններուն ու ոյժին վրայ կաղմուած գաղափարով մը կը մասնաւորուի: Կրօնի առողջ ըմբռնումէ մը աւելի ու թեղ՝ միամիտ դասակարգին մէջ, ուր աւելի եւս ազգային արժագանակ կը գտնեն Սուր-բին ինկարկուններու՝ ժամկոչին ու քա-հանային՝ արժարժած հաւատքի մասնա-ւորութիւնը:

Հայպատի հաճելի մարդ մը կար, ո-րուն կարծես միակ պաշտելին Հայպատ էր. ինքն անորը եւ ան իրենը. անգրու՛թ անվճատ պատաւորն ու թարգմանը՝ ո-րուն ակամջէն Սուրբը կը փոփարտ աղ-ջիկին ու հարսին: Այդ մարդը Սարգիս Եւսեան որուն կապերաէ անգրաբաճ-կոնակը կը ցուցնէր թէ խունկի ու մոռի սպասաւորը՝ յաճախ մենութեան ու լոռութեան մէջ ճգնող՝ աներևոյթներու հետ խօսող ու սարդող պատկանկի մարդարէն էր Ինք, ու իրմով միամիտ բարեպաշտիկները չէին ճանչնար Հայ-պատէ աւելի մեծ Սուրբ մը եւ ամենքէն աւելի ինքն էր միանակ Հայպատի էն մօտիկ հաւատացեալը: Բարձր հասակն ամբողջացնող պղտիկ դուխը՝ տափակ ճակտին տակ վառող փոքր ու չինական

աչքերը մեր գիւղի զիմագծերէն զուրս մէկը կը ներկայացընէին զինքը, եւ ամէնէն աւելի, հանդարտ ու միամիտ խօսուածքը՝ որ միշտ Սուրբին պատմութիւններն նիւթ ունէր, իր սպառօտնի մէջ ետեւն ու հաստատ համոզումներու տէր մէկը կը ներկայացընէր։ Իրօք ալ ճարտար ու վարժ հոգեբան մ'էր փաստելու եւ բացատրելու Սուրբին էութիւնն ու մեծ ոյժով Մենք մանուկներս անոնց հոգեւոր ազդեցութենէն կը զգածուէինք ու կը վախճայինք ձեռքի գաւազանէն, որուն ստորին ծայրը սոդպատէ շիշ մը ազուցուած էր, կարծելով թէ վերէն արուած է։ Աւտար մարդոցմէ շատ վեր՝ իսկ սուրբերէն քիչիկ մը վար կը զատէինք զինքը եւ խորին կրկնազանգութեամբ կը փոխայինք մանուանգ՝ թէ ինչպէս ցուրա ձմեռներն երբ մոլի քամին հոս հոն սուշելով պուղելով ձիւնը ողոր մալրը յորձանքներու մէջէն կը մտնան եւ այդ ձիւնեղէն յորձանքներու մէջ կ'երեւակայէինք թէ նօթմութենէ քերփումն՝ բերանին միշտ բաց՝ սոսկալի գայլեր խոււր խոււր կը խիզախէին, կը խաղային ոռնալով։ — Ինքը՝ Սարգիս հրաշալի գաւազանն իր ձեռքը՝ կէս զիւրկին՝ անվախ կը ծակէր այդ յորձանքները, կը հասնէր Հայպատ, կը քերէր ձիւնն, կը սոդէր, կը լողէր տանիքը, կը տօփնէր ցուրեքները, կը լուսէր, կ'ազօթէր եւ արշալոյսին ձիւնի կոյտ մ'եղած կը գտնար զիւրը՝ Զէթ, իսկ փոխարէն այսպէս անձնուէր ծառայութիւններու, մեծ շնորհներ ստացած էր սուրբէն, գայլեր կը սանձէր, օձեր կը զիւթէր, դող կը կապէր կ'ըսէին թէ սրբ Բիւրանիս ալ ունէր. նուսխան զօրաւոր ու վճռական արիւնք կուտար միամիտ հաւատացողներու. քանի՞ քանի անգամներ ալ ա՛ւուար սուրբն իր աչքովը տեսնելու բարձր շնորհքին արժանացած ըլլալը սոսկուածով կը պատմէր՝ նկարագրելով թէ ինչպէս վեհագոյն սուրբին մէկ շրթունքն երկինքն էր միւսն ալ՝ գետնը։ Մենք մանուկներս կ'աւելցընէինք՝ երեւակայելով թէ


անշուշտ գոյնն ալ սեւի սեւ՝ խափշիկ մ'ըլլալու էր. ուստի կը դողայինք եւ նուիրէինք Հայպատի ինչ որ գողնայինք սուսնէն կամ ձեռք ձգէինք սակէ անկէ՝ փոխարէնը խնդրելով որ մեր վարժպետին վիւնիւսը վերցընէր։

Սարգիսի պաշտօնը սահմանափակ չէր, նա սրբավայրին բացարձակ տէրն էր՝ հեռո՛ւ ուրիշներու նախանձէն. որովհետեւ ոչ մէկ անհատ կրնար վտտահլ իր հոգեկան կարողութիւններու վրայ ե ոչ մէկն ունէր Սուրբէն շնորհուած եւ Սարգիսի վայելած շնորհները։ Սարգիս կ'երեւի թէ այսպիսով ալ դո՛ւ չէր ըլլար այլ մեռնելէ վերջն իսկ չէր ուզեր մնանիլ եւ այն սպատակին համար զուցէ հետեւեալ բարեպաշտիկ միջոցը մտածեց ու զործադրեց։

Բարեղիպութեամբ, Հայպատի շէնքը հինգսմ էր։ Ասկէ 20 տարի առաջ հիմնովին նորոգեց եւ Բարթեղիմէոս Վ. Պաղճեանի օժնւ տալով Ս. Սարգիս վերածել սու.աւ. Հայպատ անուրը Միջոցը բաւական ճարտար է։ Եթէ՛ յայսպիսի բան մը չլուսացուի Սարգօթի պէս անուս մարդու մը կանխամտածումէն, անոր բնազդումին կը տրուի ի հարկէ, սակայն ես աւելի ճիշդը կ'ըսեմ թէ իր եռանդն ու բարեպաշտութիւնը, որուն պատմութիւնը եթէ մոռցուի, իր անունը պիտի խնկարկուի։ Դեռ 15 տարիներ ծառայեց անվհատ իր սիրած սրբավայրին եւ վերջին ժամուն փախքելով որ գէթ իր սուրբներն հոն խնկեխիլին տակ հանգչին, քահանային ու զաղաղակիրներուն մեծկակ զրմարներ խօստացաւ. ոչխար մըն ալ հօգու. հաց, թաղուճը զիւզին էն պատուաւոր թաղումներուն շափ շքաւոր եղաւ։ Ազօթքներն ու մրմունջները՝ սովորականէն աւելի եռանդազին ու սըրտայոյզ։ Քահանան կրկնեց իր աղօթքը բսկելով. « Օրհնուի զերեզմանն այն անձերու որոնք այսպէս կը մեռնին... զուժարը՝ մե՛ծ, ոչխարը՝ զէր... » Իրօք ալ այլ զէր էր... զեռան օրեր անձկանքով կը նկարագրէին զէր ոչխարը։

Սարգիս ննջեց Ս. Սարգիսի ծոցը :
 Հ'նա միամիտ հաւատացեալներուն մե-
 ժ մէջ ու խունկովը սեւցած է իր գե-
 յ եղածնը : Մեռնելէ վերջն ալ իր բարե-
 խօսութիւնը կը շարունակէ աղջիկնե-
 րուն ու հարսներուն նկատմամբ՝ սուր-
 բին մօտ : Անորոշութիւն մ'առաջ դա-
 լով՝ անուններու նմանութեամբ Սարգիս
 Սո՛ւրբ եղած է . . . :

Քեարիկ ԱԶԱՐԻԿ ԳՕԼՕԵԱՆ

 Բացուած է բաժանորդագրութիւն
 ԲԱԶՄԱՎԷՊԻ, 1900, Տարեգին 10 Քը-
 րանք հասցէ Rédact. de la revue
 «Pazmave» St. I azare, Venise (Italie)
 կամ Կ. Պոլիս Ս. Դաւթեան (խմբագր.
 Բիւրակնի) :

ՄՏԵՓԱՆՈՍ

Երբ կարդացի օգտաշատ Բիւրակնի 42
 թիւին մէջ Ս. Ն. ստորագրութեամբ
 « Աղամամութ » անուն յօդուածը, ան-
 միջապէս յիշեցի Ստեփաննոս նախա-
 սարկաւազին եւ առաջին մարտիրոսին
 ծնունդն ու համասօտ պատմութիւնը,
 որ ինչպէս Պր. Ս. Ն. ի նոյնպէս և ինձ
 պատմած է հաւատաւոր ծերունի մը :
 Արդարեւ դիտելի պարագայ մըն է որ
 այդպիսի ժողովրդական համոզում-նա-
 խապաղարումներու անգիր դպրութեանց
 պատաստիկները կը գտնուին ընդհանրա-
 պէս հաւատաւոր ծերունիներու քով եւ
 որոնք ամենայն ինամով եւ ճշդիւ կ'ա-
 ւանդուին որդիէ որդի :

Երբոր Յիսուս իշու վրայ նստած ե-
 րուսաղէմ պիտի մտնէր, այդ փառաւոր
 քաղաքին բոլոր բնակիչները մեծ ոգե-
 ռորութեան եւ եռուզեռու մի մէջ էին
 տեսնելու համար աշխարհի Փրկիչը, եւ
 ամէնքն ալ կը փութային դունդադունդ
 առաջ երթալ Յիսուսի, բացի աղջիկնե-
 րէն եւ նոր հարսներէն, որովհետեւ այն
 ատեն Հրէաներու մէջ սովորութիւն մը
 կար որուն համեմատ աղջիկները, նոր

հարսները եւ վերջապէս այն ամէն կի-
 ները որոնք զաւակ մը չունէին, չէին
 կրնար ո՛ր եւ է հրապարակային եւ ժո-
 ղովորդական այդպիսի հանդէսներու մաս-
 նակցիլ :

Նոր հարս մը, տիեզրքի Փրկիչը՝ Յի-
 սուսը՝ տեսնելու համար բուն փափա-
 քով մը կը մրրկէր, եւ որովհետեւ զա-
 ւակ մը չունէր, հետեւաբար զուրկ պի-
 տի մնար այդ շնորհը վայելելէ : Աւտօի,
 հասարակութեան խճճանքին առարկայ
 չըլլալու եւ իրեն այդ բուն փափաքին
 յազուրդ տալու համար, քար մ'առաւ և
 մանկական զանազան շորերով զարդա-
 րելէ վերջ իբր մանուկ մը գիրկը անն-
 լով բազմութեան մէջ խառնուեցաւ. եւ
 երբոր Յիսուս արտասանեց այն ահաւոր
 և խորհրդաւոր խօսքը « Եթէ դոքա լը-
 սեսցեն քարինքդ աղաղակեսցեն » նոր
 հարսին գիրկը գտնուած քար-մանուկը
 կենդանանալով բազմութեան հետ ա-
 զաղակել սկսաւ « Ովաննա » : Եւ ահա
 այդ քարէ յառաջ եկած — ինչպէս կ'ը-
 սէր, կը պատմէր ծերունին — մանուկը
 մեծնալով եղաւ Ստեփաննոս առաջին
 մարտիրոս, որ նոյնպէս քարով, քար-
 կոծուելով մեռաւ : Քարէ յառաջ գալով
 եւ քարով մեռնելով :

Ն. Ս. Տ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարգուսնի մեջ

1. Գայրան ժամանակ, կրննր՝ իրենց
 մագերուն ծայրէն մաս մը կտրելով վա-
 զուն ջուրի մէջ կը ձգեն, որպէսզի բոյ-
 սերուն հետ իրենց մագերն ալ աճին :

2. Հացի փշրանքի վրայ կոխելը, եւ
 գետինը ինկած հացը աննելէ վերջ չի
 համարում՝ տեղը դնելը մեղք կը հա-
 մարին :

3. Կրները հաւ կամ ուէ շնչաւոր ջնն
 մորթեր. եթէ հաւ մը մորթել պէտք
 ըլլայ ու տան մէջ էրիկ մարդ չգտնուի,
 հաւն ու դանակը աննելով փողոց կ'ել-

ին որպէսզի մարդ մը տեսնելով՝ հաւը անոր մորթել տան :

4. Յորենի հասկը դեղնեղէ առաջ՝ կանաչ խոտ չորցնելը կամ այրելը, սուփի պատճառ կ'ըլլայ :

5. Նոր լուսինին ծայրերուն դէպի վար ըլլալը, այն ամառան մէջ անձրև տեղալուն նշան է . իսկ եթէ դէպի վեր ըլլայ՝ երաշտութեան նշան է :

6. Մանուկին՝ ակառային տեղը երբ ուսնալ սկսի, խառուած ցորեն կը լեցընեն մանուկին գլխուն վրայ :

7. Երբ մէկուն վրան ձիու ճանճ դայ, անոր տունը հիւր կուգայ :

8. Եթէ տղու մը վրայէն ցատքելով անցնուի, այն տղան կարճահասակ կ'ըլլայ :

9. Ուրաթ օր՝ երկաթի դպչիլը, դամ չինելը մեղք ունի . Բրիտասը խաչողնեբուն պէս եղած կ'ըլլան :

10. Անծեղին՝ տունի մը մէջ գալով խօսիլը լրարեութիւն կը կարծեն . և եթէ այն տունէն պանդուխտ մը կայ, կըսկսին իրարու հարցնել , անծեղին բերած լուրը ինչ է արդեօք :

11. Բուին , տունի մը վրայ գալ և «Դուք կու կուլաք» ըսելով խօսիլը , այն տունէն մեռել ելլելուն նշանն է . բայց «կու կուլաք» ըսելով խօսիլը , այն տունին յաջողութիւն մաղթել է , կ'ըսեն : Բայց երկու պարագային ալ , եթէ այն տունին մէջ հիւանդ կայ , հիւանդը բուին խօսքին զանազանութիւնը հասկնալ չկարենալով , խեղճը օր առաջ կը մեռնի վախէն :

12. Երբ մէկուն ականջը դռնչէ , անպատճառ մէկը զինք յիշած է : Փնդտալն ալ մեղմէ աղէկներուն (ճին) իր վրայ խօսած ըլլալը կը յայննէ :

13. Արագիլը , եթէ բերանը ցորենի հասկով մը վերադառնայ զարնան ժամանակ , առատութիւն կ'ըլլայ այն տարին :

14. Ան տարին որ վարսի վարդենիին պտուղն առատ է , ձմեռը սաստիկ կ'ըլլայ :

15. Եթէ լուսինը մատովդ ցուցունես ,

քեզմէ փորձառունքը կ'ըսեն «մատդ խած , մատդ խած » , եթէ ոչ մասնչուրթ կ'ըլլաս : (1)

16. Թուցիկ թուցնելը սով կը պատճառէ :

17. Տղաքներ երբ դանակով խաղան , պատերազմ կ'ըլլայ :

18. Ընտանիքի մը եթէ շատ դժբաղդութիւններ պատահին , «այս տունին սեմը մեզի աղէկ չի դար կոր» ըսելով , փողոցին դռան սեմը կը փոխեն , եթէ ստով ալ ըլլայ , տունը ամբողջ կը ծախեն և ուրիշ տուն մը կ'առնեն :

19. Իրմէ մեծին ճամբան (ուղուրը) կտրելը մեղք ունի :

20. Ճամբորդին ձին , եթէ ախոռէն դուրս հանելու ատեն , ետ ետ կենալով քալել չուզէ , ճամբան դժբաղդութիւն մը պիտի պատահի ըսելով , ճամբորդութիւնը քանի մը ժամ կամ օր մը կը յետաձգեն :

21. Սենեակը աւելու ատեն , աւելը աղէկ չընող ու կարգով չաւուրդ աղջըկան նշանածը գոչ կամ քարձ (քէօսէ) կ'ըլլայ կ'ըսեն :

22. Կէկը , զուխին վրայ քանի պըտուկ (2) որ ունենայ այնչափ անգամ կ'ամուսնանայ :

23. Արեւը մարը մոտեցնել վերջը , խմոր կամ քացախ չեն հաներ անէն դուրս :

24. Գառուն օրուան չեղած մանուկ մը՝ գիշեր ատեն ծոցը հայ չըրած՝ զըռնէն դուրս չեն հաներ :

Վեպ (3)

Անգամ մը , նոր հարսին մէկը , իրիկուն ատեն , բրինձը խաչելով քամած տաք ջուրը սենեակէն դուրս կը նետէ . կերտ-

(1) կամ բուր կ'իւլէ կ'ըսեն . (Թութը կոճակի պէս բան մ'է որ կը գոյանայ ձեռքին վրայ) : Ծ . Խ :

(2) Երբեմն մարդոց զուխի մաղը վարդաձև պտոյտ կ'ըլլայ զոր հոս պտուկ կը կոչեն :

(3) Այս քաղաքին մէջ պատահած ու իրաւ ըլլալուն հաւատացնել կը ջանար՝ լինի պատմողը :

կուր կ'ուտեն ու ամուսինը կ'երթայ տեղը կը պահկի Քիչ վերջը, հարսն ալ իր գործերը լրացնելով, պատկի կ'երթայ, բայց զարմանքով կը տեսնէ թէ՛ ամուսինին քով ուրիշ հարս մը պատկերէ՛. ինքը կայնած կը մնայ Այսպէս վեց ամիս կը շարունակէ այս բանը, Այդ ժամանակին, Ճանիկ վարժապետ մը կայ եզեր որ ճիներուն կամքը կը հասկնայ եզերս վերոյիշեալ հարսին ամուսինն ու եղբայրները կ'երթան ու վարժապետին կարգալ կուտան՝ եզելութիւնը պատմելէ վերջ՝ վարժապետը կ'ըսէ թէ, այդ հարսը իրիկուն տանն այդ ճինին տղաքներուն ինքացած տեղը տաք ջուր վաթելուն համար այդ բանը պատահած է. հիմա ես ձեզի տոմսակ մը գրեմ, առանց անիկա բանայու, առէք գացէք, պզտիկ բաղնիքին դրանք քով իրիկունը կայնեցէք, այն ատեն բոլոր ճիները ներս մտնելու համար կուգան բաղնիքին դրան առջեւ կը հաւաքուին, երբ դուռը բացուի, պիտի տեսնէք ներսը, անոնց պետը ամբողջ վրայնտած, տարէք թուղթը անոր առէք, անիկա այն յանցաւոր ճիւղը դուրս կը ձգէ ու դուռը կը գոցէ. այն ատեն կրնաք ըսպաննել անիկայ ու ազատիլ, Իրենց պատուիրումին պէս կ'ընեն եւ իրօք մէկ հատը դուրսը կը մնայ, այն ատեն փայտով քարով կը սպաննեն ու սուրով երկուքի կ'իսելով կը ձգեն տուն կը վերադառնան, ու շարիքէն կ'ազատեն: Հետեւեալ առաւօտ կ'երթան կը նային որ իրիկուն իրենց սպաննած դիակին տեղ, երկուքի կ'իսուած սեւ շունի մը դիակը կայ:

ՅՈՎՍԷԻՓ Յ. ԱԼԷՔՍԱՆԵԱՆ

Մարզուան
Անաթոլիա Գօլէն

ՄՐԱՏ ԴԱԻՔԱՆ
ԳՈՐԾԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
 ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ԳՐԱԿԱՆ

ՎԵՐԱՅԱԿԱՆՆԵՐ ՊՍԱԿԸ

1. Տե՛ս սա մարդուկը դիտե՛ իր երես, Ո՛րչափ խանգոտ է ազգափն ի սես, Ետ հառաչանցներ կը հանէ արեւն, Երբ տեսնէ խեղճեր ինկած դես ու դեն, Խօսի, համոզէ փառափչ կհրամ, Որ դարման տարուի այս հեք բուտաւաց, Բայց այն պայմանաւ որ ինք չի այս սսակ Ձի հետ ֆակիկն չի լինիր կասակ:

2. Տե՛ս սա մղուսին, դիտե՛ իր արարք Որ միտ կ'երբայ ժամ, չի խոտեր իր պանք, Կարծես ճգնաւոր Անտոն մ'է դարձած, Մինչ իսկ ՄեծՊափն մէկ ժամ կ'ուտէ հաց: Խօսի, յորդոք որ շինուին ժամեր, Ինչպէս եւ բոլոր խարխրած վաններ, Բայց այն պայմանաւ որ ինք չի այս սսակ, Ձի հետ ֆակիկն չի լինիր կասակ:

3. Տե՛ս սա պարոնք, լսե՛ իր խօսքեր, Ի՛նչպէս կը փաստէ, կ'ընէ յորդոքներ, Ջասագովելով դպրոց եւ ուսմանք, Կարծես մարգարէի քայտեն իր շքուրդ: Խօսի, համոզէ շինել զպրոցներ, Որոնց համար չէ անոնոց անարբեր, Բայց այն պայմանաւ որ ինք չի այս սսակ, Ձի հետ ֆակիկն չի լինիր կասակ:

4. Տե՛ս սա գրագէտ, կարգա՛ գրածներ, Ի՛նչպէս խրնամով տղած է բռտեր, Նեանակելով անարբերութիւնն Որ լուես ցուցուի հանգեպ որբերուն: Կազմել յորդոք ետ որբանոցներ, Անօրութեան փրկել հայ որբեր Բայց այն պայմանաւ որ ինք չի այս սսակ, Ձի հետ ֆակիկն չի լինիր կասակ:

5. Անա՛ պսպուկ է աստուած վիճակ, Ձեւին ու խօսքին, գրին եւք ասակ, Եւ ամեն գործի որոճման պանուն Կարծես ետ ու եփ կ'ելլէ մեր արին: Իսկ գործնակաթին երբ հասնի խեղդի, Ամենա՛ մեյմէկ կողմ կ'ըլլանք ցանուցիր, Ձի պայմանն այն էր որ չսայիմք սսակ, Ձե՛, քրտալի հետ չի լինիր կասակ:

Վաս

ԼԵՈՒՆ ԾՈՒՎԱՆ



Հ Ա Ն Ե Լ Թ Ի Կ

վարժապետս մ' եմ' խուլ աչազուրկ եւ
անճայն.
Զուցիմ ոսկեք' ոչ ձեռք, ոչ կիր, ոչ
բերան:
Ամբողջ կեանքս մեկ մարդու կը նը-
ուիրեմ,
Ուզածին չափ կը խօսիմ կամ կը լռեմ,
Բայց երբ խօսիմ արդիւնաւոր է դասքս,
Վրկայ ըլլան հազարաւոր սաներքս,
Որոնք ինձմով միայն ուսան սարեական
Կանոնները իրենց յեզուրին մայրական.
Հօրձ խորք են իմ էոյրերքս, քեւ կան
Որ մեկ մօրձէ ճրնուող առած այ ըլլան
Բայց հարագաս ունիմ եղբայր՝ սարագով
Մեկ՝ մեկ բնութեամբ, կերպարանով
ու գործով.

Ու մենք բուսլ *խառնուց* եւ *չորս հա-*
գար,
Հինգ ակուցեով ճնած եկած այս առ-
խարհ,
Գարուցին մեզ ըլլալով դեռ մեր կեան-
քին
Հիմակուրեք պարճանք ենք մեր Հայ-
րիկինք:
Եւ փոխարեւն ծառայութեան, գիտե՞ք,
մեր ամեն մեկին
Ի՞նչ է վարճքը: — Մի գարմանք, հազիւ
երկու հացագին:
ԱՐՇԱՒԻՐ

Այս հանելուկը լուծողը պիտի ստա-
նայ մեր հրատարակութիւններէն զիրք
մը, ընտրութիւնը իր կամքին կամ 1900ի
Յուլիանոսի մը եւ կամ 'ն. 4. Պէրպլը-
եանի Տարեցոյց մը (= զին 10 դահկ.)
Ս. Դ.

Գործցական ո՞ր եւ է ինչրի եւ
յանձնարարութեան համար զլլաւոր
կեղրուն է Դաւթեան Գործակալութիւնը
որ օգտակար կրնայ ըլլայ Պոլսի, գա-
ւաններու եւ արտասահմանի հայ եւ
օտար զարդներուն ամէն կարգի պէտ-
քերը հոգալով:
Ինչ որ ուզուի, առժեք կանխիկ դրկել
در سعادتده آنچه قوسنده قاضی مکر خاند
سباط داودیان
հասցէով

Լ Ե Զ ՈՒ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

Հ Ա Յ Ե Ր ԷՆ Է Փ Ո Ւ Ն Ա Ռ Ե Ա Լ Բ Ա Ռ Ե Ր
Թ ՈՒ Ի Ր Ք Ե Ր ԷՆ Ի Մ Է Զ

Ուրախայի՛ է որ Պ. Հ. Յ. Աճառեանի
կոչը անլսելի չմնայ եւ իր օգտակար
հետեւութիւններն ունեցաւ եւ կ'ունենայ
հեազհեաէ հեռաւոր եւ մօտաւոր կեղրուն-
ներու մէջ: Այդ կոչին ուղղակի մէկ
արդիւնքն է որ կը վայելենք ժամա-
նակէ մը հեաէ ըմբոխնելով սիրուն
սփնիններն այն բառերու, զորոնք Պատ-
Բիւրակնիդ ծաղկահոտ էջերու միջոցով
կը հրամցնեն Զեր բազմաթիւ ընթեր-
ցողներուն՝ բառե՛ր որոնք զանազան
ժամանակներ մուտ գտած ըլլալով Թուրք
ժողովրդին մէջ՝ ա՛յսօր ալ կը զորճա-
ծուին ստանց անպատկանութեան՝ ա՛լ
զրեթէ հոն վերջնապէս գրաւած ըլլալով
իրենց տեղը:

Որպէս մին այդ բանահաւաքներէն՝
կը փութիմ ես ալ Բիւրակին ներկա-
յացընել այն հայերէն բառեր, զորոնք
հաւաքած եմ խնամով ու երկար աշ-
խատութեամբ եւ որոնք կը գործածուին
թրքերէնի մէջ: Թէ ինչպէս այդ բառե-
րը մուտ գտնած են Տարէնտէի մեր իս-
լամ հայրենակիցներուն մէջ, քանի՞ որ
Հայոց ու Թրքաց թաղերը բոլորովին
անջատուած են իրարմէ թօխմա գետա-
կին միջոցով, այս երևոյթը կրնայ բա-
ցատրուիլ երբ յետահայեաց ակնարկ մը
դարձնենք դէպի 50-60 տարի ստալեան
ժամանակները, երբ հին Տարէնտէի ըն-
դարձակ ու սոսկազգեցիկ աւերակները
կը կազմէին շէն, ճոխ ու ծաղկեալ
քաղաքները, ուր Հայերն ու Թուրքերը
միասին կ'ապրէին՝ դուռ դրան վրայ՝
զրկից, զրաջի, ամէն օր ու ամէն պա-
րագայի մէջ իրարու կեանքին ու գոր-
ծերուն հետաքրքրուելով ու յարաբե-
րութեան մէջ զանուելով:

Ետքէն-ե այս 50 60 տարիներ շըր-
ջանի մը մէջ կատարուած իրողութիւն
մին է տակաւին—ժամանակի բազմա-
զան երևոյթներ ծնունդ տուած են նորա-

նոր պէտքերուն, որոնց շնորհիւ արդի Հայ ազգաբնակութիւնը մէկ կողմէն ու թուրքերը միւս կողմէն հին Տարէնտէն իսպառ թողով՝ եկած հաստատուած են թօխմայի երկու եզերքները, ճիշդ իրա-
 բու զէմ յանդիման, թուրքերը՝ իրենց թիւին անհամեմատ զերազանցութեան հետեանօք գետին ձախ եզրը, ուր ան-
 սահման, ընդարձակ ու ջրարբի դաշտեր կը տարածուին՝ երկրագործութեան, ա-
 նանանբուծութեան, այգեգործութեան, ու պարտիզպանութեան ամէն դիւրու-
 թիւն ու միջոց ընծեռելով անոնց. մինչ Հայերը՝ ընդհակառակ՝ թուով համե-
 մատապէս յոյժ ցանցառ ու անհու-
 նապէս՝ կարօտ ու հակամիտ ինքնամ-
 փոփոնելու, հաստատուած են գետին արջերը լեռան նեղ, անձուկ, անջուր ու անբեր քղանցքին վրայ, ուր ոչ հող կայ սերմանելու և ոչ առձեռն միջոցներ զարգանալու:

Այս բաները նոյն իսկ թուրք ժողո-
 վրդին բերնէն հաւաքած եմ և թէպէտ
 առնց մէջ կան կարգ մը բառեր, զորս
 ուրիշներ կանխած են գրելու սակայն
 տեղւոյն գրումը անաղարտ ու ամբողջ
 պահած ըլլալու մտածումով՝ զանց ըրած
 չեմ հոս լանցընելու: Ասոնց մէջ կան
 նաև քանի քանի մը բառեր ալ, որոնք
 էլ պիտտանի թուրք ժողովրդին բերնէն
 առնուած են և զորոնք աստղանիշով
 նշանակած եմ:

Անասրն. Անիոսն. անուշահոտ բոյս մը.
 Անահ. Հաստատուած թուի կամ
 ծառ՝ անընդունակ անելու.

Ազարլամազ. Ազարել. չիխել.
 Աւազան. Աղբիւր. Աւազանա կիտէ-
 լիմ.

Ապա. Մեծ մայր.
 Աննըխ. Անանուխ.
 Ամպար. Ամբար.
 Ախրը. Ախոռ.
 Արստաղ. Առաստաղ.
 Աւանակ. «Աւանակ մըսըն պէ՛.»
 Բալավար. Դոան վերի սեմը.
 Բանճար. Բանջար. ճակնդեղ.

Բէրնէկ. Բարունակ. խաղողին յեն-
 րան.


Բխերիք. Ծխնելոյղ.
 Եւդեղ. Իւղ.
 Զպուռն. Երեք քղանցքով զգեստ մը.
 Զաւար. Զաւարի խօշուք
 Էօրնէք. Օրինակ
 Ըռահէն. Ռահան.
 Քէթիկ. Թաթիկ.
 Թէրսիկ. դարձէք. հեծան. գերան.
 Թաղար. Թաղար.
 Թոռուն. Թոռն.
 Թանտոր. Թոնիր.
 Թարխանա. Թարխանա (անուշեղէն
 մը և մածունով ու կորկոտով շին-
 ուած ուտեստ):

Ժէն՝ գօս. Ժամկոչ.
 Իրիշկի. Երիշկ.
 Լող... Լողքար.
 Լէչէկ. Լաշակ. Լաշաղ.
 Խախուր. Խախուտ
 Խաչ. «Խաչը սույա պրագտըլար՝ մը.»
 Խարալամազ. Խարալել.
 Խընջ էթմէք. Խնչիւ.
 Խոռ. Խոր պագմազ.
 Խաչիլ. մանածը խաչիլ ընել.
 Խորթ. Խորթ զաւակ.
 Խէփէնք. կախանք.
 Կապալ. կապալի տալ.
 Կէօճէկ. կոճակ.
 Կուրթ. ձագեր ունեցող հա.
 Կիրէյի. կիւրակի.
 Հարանի. մեծ կաթնայ
 Հէնէք. հանաք. կտտակ
 Հէրկ. հարկ ընել.
 Հիմ. հիմն.
 Հեճիկ. հէճիկ, խոշոր ձաւար,
 Հէրսա. հիրիսայ
 Հէղէն. հեծան
 Հէտիկ. հատիկ.
 Հէյիք էթէյի, հայուն գող
 Հէքիւրկէ. Աղուզայ.
 Ծածըխ. Ժաթեկ, միջօրէի կերակուր
 մը՝ մածունով ու վարունգով.
 Ծիպ. խիտ շատ.
 Ծօր. Ծօր, խօք ընել.
 Ծէճ. մանրուած, շեղջ.

Մէրթէք. մարդակ.
 Մաշար. մաշարայ.
 Միւղէկ. նիղակ.
 Մաստալա. մաստափայ
 Նիւկիւ. նուկի.
 Շէլէկ. շալակ.
 Շէնքարիդ. անշնորհք.
 Շիլ. թու թին բուռերուն աւելցուքը.
 Շէմ. սեամ.
 Շախախ-ջախջախ
 Պապա. պապ.
 Պծիլիկ. պծիլիկ, դարդարուն
 Պէրիւք. պատրոյգ.
 Պարաթի. դաւաղանի վրայի խոշոր մոմը.
 Պաստրգ. պաստեխ.
 Չըզըզ. ճախարակ.
 Չիրի. չրէշ.
 Չաղայ. տղեկ.
 Սող. ձող. սիւն.
 Սալ. սալքար.
 Սանտրգ. սնտուկ.
 Սիւիք, ցուիք, ցիւ.
 Սկարայ. կասկարայ
 Տէհրէ. տահրայ (միս ձեծելու սակը)
 Տաշտ. թէշտ, դաշտն.*
 Տէօմպէկ. թմուկ.
 Տէք. դափ.
 Փէնիւր. պանիւր.
 Փիրինշ. բրինձ.
 Փեթակ. փէթէք.
 Փինթի. փնթի.
 Փիրփիրիմ. փրփրեմ. բոյս մը.
 Փէկ, բակ.
 Փազլա. բակլայ.
 Փէօշ. պոշ.
 Փուճ. փուճ տ'ղը.
 Քէթէ. գաթայ.
 Քէօմիւշ. գոմէշ.
 Քէօս. գոց.
 Քէօր. կոյր.
 Քէօսլեմէք. գոցել.
 Քիւրսի. քուսի.

Ֆէնք. վանք.
 Տարբա. աւրօս.
 Նաւաքեց

Մ. Ա. ԹՈՒՐԵԱՆ



ՍԻՎՐԻՆՅԱՐԻ ԳԱՒԱՌԱՐԱՐԲԱՌԸ
 Շար. Բիւրակնի քիւ 18ԿՃ (եջ 278)
 28 Ապրիլ 1899

Իրշիր=Արբշիւ (*) հետամուտ - Անա-
 ոակ :

Իլիւ=Լի, լեցուն:
 Իստիկել = Յստակել, մաքրել:
 Իլ = Յօղ, յօղուած:

Իրկիր = (Երկիր) Օտար,
 Իրնոքսուզ = Իր անձին տէրը չեղող:
 Իւկիւ=Սարսուղքեցիկ ձայն ունեցող
 գիշակեր թռչուն մը :

Իփի՞ս=Ի՞նչպէս:
 Իք=Իր, բան, մոռցածը, յիշելու հա-
 մար:

Լալիք = Լաց, ողբ : Կը գործածուի
 միայն՝ Աւագ Ուրբաթի գիշերն որակե-
 լու համար:

Լախիսիլի = Լալ, հեկեկալ, Կը գոր-
 ծածուի ծաղրական իմաստով :

Լախաիլ=Յօզնիլ,
 Լապթել=Գրգռել բերանը՝ կծու եւ
 կիզիչ համեմուտքով:

Լեղատ=Լեղուատու կ'որակէ՝ քիւրտ
 եւ չէրքէզ ցեղերը :
 Լնտած=Հնտած, նեխած, հեղուկ
 նիւթերու համար:

Լոխծնիլի=Լոգանք ընել :

Լող-լող-փայտ = Լողքարին փայտը :
 Լումիւնել, Լումիւնել = Ծամծմել ուտե-
 լիքը եւ դուն ուրեք՝ խօսքը :

Սատեի = Արար. ան խառնել, բաղա-
 զրել :

Սաթմայ (*) = Խորթ մայր, կը գործած-
 ուի՝ զոքանչ իմաստով :

Սալիք = Մանր քար որմնաղորթեան
 մէջ :

(*) Դաւօն գաւառներու մէջ պղնձէ
 կլոր տաշտ. այս բառը կը ստուգարա-
 նեն սաւօ ննչուն մեկնութեամբ. Մ. Խ.

(*) = Խաթուն մամա Մ. Խ.

Խալկինն=Մեծ կաթոսայ :
 Խալկըծուկ , խալկէճուկ=Դոյլ զոյւս :
 Խալաիլ = Արար . ܡܠܟܐ սխալիլ :
 Խածուկ = Հացի փոքրիկ պտտառ բերնի մէջ սզմեխու աստիճան :
 Խամել = Զտել , ասնտրէ անցընել բուրդը :
 Խայտիւ = Խայտուցք (ալաճա . նազչ) :
 Խայտիւիլ = Խատուտիկ զործել , նազչլամազ :
 Խանդուղակ = Խանդուղակ , փուռին կրակը խառնելու երկայն փայտ :
 Խաննել = Խաչանշել :
 Խաչըրկակ (*) = Խաչ . երկաթ , կրակարանին վրայ դետեղուած երկաթ՝ որու վրայ կը դնեն կաթսան :
 Խալուկ , կիկ = Խաղաղիկ , կամացուկ մը :
 Խաւիժ = Ալիւրով եւ իւղով խորոված կերակուր մը :
 Խըլդ = Մանր շիւղ , փոշի :
 Խըռ էնիլ = Լաւ վարուիլ , Խըռ՝ առանձին՝ խոռվութիւն կը նշանակէ :
 Խիթմել = Խիթելով ուտել , նաւակատիք ընել (խթում ընել) :
 Խիլիլ = Յափշտակել , Յանդիմանել բարոյական իմաստով :
 Խիլիլ = Խիլումիլ , խիւում ըլլալ , որ եւ է շոր բան մը թրջել :
 Խոյիւլ = Ծուռ ծուռ նայիլ :
 Խոռմխոտ = Խոռվարար :
 Խովակ = Խողովակ , պատերու ստորորար բացուած ջրի խիտ նեղ անցք :
 Խորաղա = Կտտակ :
 Խորխալ = Խորխտանալ , յաչաղել :
 Խորխարանք = Խորխաւար , մթին , աղջամղջային :
 Խոցձի = Սուտ :
 Խոււմ խոււմ էնիլ = Կեր ու խոււմ ընել ընկերակցութեամբ :
 Խուրտ խալաչ ըլլալ = Զարդ ու բուրդ ըլլալ (Պարակ . ܡܠܟܐ) :
 Խոչակ հանել կամ մեծցնել = Ծաբունակ զդպուել :
 Խոտել = Խոտանալ , սաստկանալ :
 Խոու խուուկին էթալ = Խոտակնել ,
 (*) Նմանաձայնուած :

զժիւամակիլ , զժուարը գալ :
 Խրիա = Դիւրափոշուր (կարկանդակ եւ ըն Սոյն բան՝ աւելի յաճախ կը գործածուի՝ գնումի իմաստով (Պարակ . ܡܠܟܐ) :
 Զոր օրինակ խրիսի կրալ՝ գնումներ ընելու համար :
 Խրինճուկ = Խրախ-խնջոյք , կ'որակէ՝ բաղմանդամ ընտանիք մը :
 Խոտե = Խոտեչիէ , վախնալէ եւ այլ պատճառէ՝ յիթանց եւ ընդանց վրայ յառաջ եկած փոքրիկ պալարներ :
 Խորագուկ = Խորտան :
 Խցընվիլ = Խցուիլ , պապանձիլ , — Ախորժակը զոգոտիլ :
 Ծիւան ծիւան ըլլալ = Սաստիկ փոփաքիլ Խիտ հետաքրքրուիլ , Ծաղրական իմաստով :
 Ծիւմխել = Դանդաղ շարժիլ կերակուրի եւ խօսակցութեան մէջ . ծաղրական իմաստով :
 Ծծկան = Սանտու :
 Ծծցնել = Ծիծ տալ , դիեցնել :

(Շար .) ՍԵՐՈՎԹԷՎԱՐԺԱՊԵՏԵՆՆ

ՅՕԴՈՒԱՄԱԳԻՐՆԵՐՈՒՆ

Բիւրակնի 21 թիւով ինչըրած էինք որ մեր Մեծ . աշխատակիցները պատասխանելով 12 հարցումներու՝ իրենց կենսադրականը տեղակայարեն :
 Շատերն արդէն պատասխանած են , սակայն պատշաճ դատեցինք նոյն հարցարանը վերստին հրատարակել անոնց համար որոնց ուշադրութեանէն վրիպած է նախորդը :
 Այս առթիւ մտադիր կ'ընենք բոլոր հին ու նոր աշխատակիցները թէ այս տեղեկութիւնները կարեւոր են , եթէ մանաւանդ նոր , պատասխան եւ անձանոթ անձեր լաւ կ'ընեն որ այս հարցումներուն պատասխանեն . մեղի համար սանհրաժէշտ է լաւ ճանչնալ յողուածադիրները :
 Երբ յօդուածագիր մը ծածկագիր կը ստորագրէ եւ չուզեր իր անունը հրա-

տարակել, կը յարգենք իր փափաքը, բայց ծածկանունին հետ պէտք է իմացընէ իր բուն անունը՝ եւ մանաւանդ այս պարագային, պէտք է պատասխանէ այս 12 հարցումներուն:

(Թիւերով գատուած մեն մի հարցման կը խնդրուի պատասխանել նոյն կարգով)

1. Անուն, հայրանուն եւ մականուն:
1. Տարիք եւ ծննդավայր:
2. Պաշտօն, զբաղում եւ ընկերային զիբք:
4. Քաղաքային վիճակ (ամուրի՞ թէ ամուսնացած, ընտանիք, զաւակներ եւ այլն նշանակել):
5. Ո՞ր եկեղեցիի կամ դասնութեան կը պատկանի:
6. Ո՞ր զպրոցէ ուսում առած է եւ ո՞ր թուականին:
7. Ի՞նչ լեզուներ ուսած է:
8. Ի՞նչ մասնագիտական զբքեր կարգացած է:
9. Ի՞նչ ճիւղերու մասնաւոր հակում ունի եւ ի՞նչ ճիւղեր մշակելու հետամուտ ու փափաքող է:
10. Ուրիշ ո՞ր թերթերու աշխատակցած է եւ ի՞նչ նիւթերու վրայ:
11. Ո՞ր եւ է գրական երկ հեղինակած կամ թարգմանած է:
12. Կենսագրական մասնաւոր ծանօթութիւններ եւ այլն:

Ս. Գ.

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒՆ

Ինչպէս վերջընթերթ թուով զրած ենք, վենետիկի Միսիթ. Հայերը դովելի գաղափար ունեցած են, շայ-որբերուն օգնելու համար, Վեազմալէպի բացառիկ թիւ մը հրատարակել որ պիտի վաճառուի 21/2 ֆրանք:

Դիմել Բազմավեպի Խմբագրութեան Ս. ՂԱԶԱՐ, Վենետիկ (Իտալիա) կամ Խմբագր. Բիւրակին հետեւեալ հասցէով.

Simbad Davidian, Agent-Commissionnaire, Kazaskér-han, Bahdgé kapou, Stamboul.

ԸՆԿԵՐԱԿԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Այցելութեանց մեակերպուրբիւններ

Ընդունելութեան օրը. — Ընդունելութեան եւ այցելութեան ընդարձակ յարարութիւն ունեցողները մասնաւոր «ընդունելութեան օր» մ'ունենալու լաւ սովորութիւնը ունին: Տան տիրուհին առաջին անգամ եկող այցելուին կ'ըսէ. «Ճատ զո՛հ պիտի ըլլամ զձեզ տեսնելով իմ մտերիմներու շարքին մէջ՞՝ ընդունելութեանս օրերը՞՝ երկուշաբթի կամ երեքշաբթի»:

Կիները՝ իրենց այցետոմսերուն վրայ կը նշանակեն կամ տպագրել կուտան իրենց ընդունելութեան օրը. որով բարեկամներ պարագ տեղ դուռ մը դարկած չեն ըլլար ե կրակին քով նստող՝ կամ աշխատութեան սեղանին մօտ եղող սնեցիները անհանգիստ չեն ընեն:

Այցելութիւններն ընդհանրապէս ժամը երկու քէն հինգ կը կատարուին. սակայն եւ այնպէս, Բարիդի մէջ կարգ մը ընտանիքներ հիւր կ'ընդունին ճաշէն վերջ մինչեւ ժամը տասնըմէկ: Լուրջ պարտզաներու մէջ միայն կարելի է որոշուած օրէն զուրս այցելութեան երթալ, Գործի մը համարիս՝ առաւօտուն այցելել անպատեհ է. վասն զի այն տան կիները իրենց զարդասնեակները, իսկ այրերը կիսամերկ գտնել կը դատապարտուին: Ընդունելու ճաշի ժամուն այցելելը՝ կենցաղավարութիւն չդիտնալ, փափկանկատ չըլլալ եւ հացկատակ ըլլալ կը նշանակէ. — Ուրիշ բան է կիցէ մտերմութիւնը ներելի ընէ այս պարագան:

Արդուզարդեր. — Տան տիրուհին զընդունելութեան մասնաւոր արդուզարդն ունի, իր գլխաւոր գոհարելէններով կ'ըրեւայ եւ ասով կը շնանայ հանելի ըլլալ այցելուհիներուն եւ այցելուներուն: Առաջինները լաւ խնամուած չքեղ արդուզարդեր կը կրեն. իսկ այրերը բրտեկնոր կամ ժափեր կը հագնեն ժամը իննէն տասնըմէկ ժամանակամիջոցին կատարուելիք այցելութեանց համար սե.

զգեստները ընդունուած են :

Այցելուները հող կը տանին նախասենեակը կամ սպասուհիին քով թողելու իրենց հովանոցը, վերարկուն եւլն : Կիները իրենց քով կը պահեն իրենց թաթպանն (manchon) ու հովանոցը : Երբէ՛ք ներելի չէ այրերուն՝ վար դնել իրենց զլխարկն ու գաւազանը, Ամէնքն ալ ձեռնոցով պէտք է ըլլան : Երբ իրենց զովացուցիչ մը հրամայուի, այն ատեն միայն ձեռնոցներն կը հանեն, եւ այն ատեն տան տիրուհին զանոնք կ'առնէ մէկ կողմ կը պահէ :

Տեղ. — Ընդունելութիւն. — Տան տիրուհին կարելի եզածին չափ մեկուսի շիրք մը կը բռնէ՝ կրակարանին մօտ՝ թիկնաթոռին կոնակը դէպ ի պատուհանը դարձուցած, ձերերն եւ տարիքոտները կրակարանին մօտ կը նստին, մանկամարդ աղջիկ մը կամ կին մը պատուոյ տեղը կը նստի եւ երբ տարիքոտ կին մը գայ, անզգայապէս տեղը կը փոխէ :

Այցելուի մը գալուստը սպասուհին իմացընէ թէ ո՛չ, երբ հիւրանոց մտնէ տան տիրուհիին կը մօտենայ, յարգանքք բարեկերտ՝ որպիսութիւնը կը հարցնէ, եթէ այցելուներ ալ կան՝ հաւաքաբար բարեւ մը տարով կը նստի :

Բազմութեան մէջ, ձեր մը կամ կին մը ընդունելու համար միայն տան տիրուհին տեղէն կ'ելլէ երկու քայլ յառաջանալով, թէ եւ այս բացարձակ օրէնք մը չէ : Ամէն նոր եկողի ոտքի ելլելու եւ յարգանք ցուցընել պատշաճ է : Երբ կին մը ներս մտնէ էրիկ մարդիկ պէտք է միշտ ոտքի ելլեն, մինչդեռ կիները կրնան նստիլ, լոկ շարժումով մը պատասխանելով իրենց բարեւ տրուողներուն :

Խօսակցութեան նիւթը տան տիրուհին կ'ընտրէ եւ կ'ուղղէ որպէս զի ամէնքն ալ կարողանան մասնակցիլ անոր, հող կը տանի ներկաներուն սրբած հետաքրքրաշարժ նիւթերը հայթայթելու : Բամբասանք ու վէճ յարուցանողներուն ստաջքը կ'առնէ, ներելի չէ իրեն՝ ո՛չ

լրագրի վրայ հայեացք նետել եւ ո՛չ ալ կարգալ երբ հիւր ունի, նոյն իսկ ստիպողական նամակ մը կարդալու համար պէտք է ներողութիւն խնդրէ :

Այցելուներն ալ ինքզինքնին զուարթ եւ հաճելի կը ցուցընեն : Եթէ խօսակցի մը անհամակրելի է, կըզգուշանան իրեն զգացնելէ :

Տղաքը այցելութեան չեն տանիր մինչեւ որ չափահաս ըլլան, պզտիկներուն ամէն բանի խառնուելէն աւելի անքաղաքավար բան չկայ : Յայտնի է թէ չուշակն իրենց յատուկ որջը կը թողուին եթէ զիւղի այցելութիւն մը չէ ուր ընդարձակ բակեր կան :

Դեռտատի աղջիկները, մանկամարդ այրիները միշտ ազգականուհիի մը, տարիքոտ բարեկամուհիի մը եւ կամ բարեկիրթ խնամակալուհիի մը հետ կը կատարեն իրենց այցելութիւնները :

Մեկնումը. — Մովորական այցելութիւն մը քսան վայրկեանէն աւելի տեսելու չէ, որքան ալ հետաքրքրաշարժ ըլլալ խօսակցութեան նիւթը : Երբ այր ու կին այցելութեան միտանի ելած են, կինը միշտ մեկման նշանը կուտայ : Միշտ գալու եւ երթալու ատեն նոյն ձեւակերպութիւնները կը կատարուին : Այցելուները իրենց նստած տեղէն ոտքի կ'ելլեն, կը բարեկեն տան տիրուհին, ընդհանուր խոնարհութիւն մը կ'ընեն միտահիւրերուն՝ որք արդէն ոտքի ելած են : սակայն կիները կրնան նստած մնալ երբ էրիկմարդ մ'է մեկնողը :

Մովորաբար մեկման պահուն տան տիրուհին միայն տեղէն կ'ելլէ, մինչեւ զուտը կ'տառջնորդէ հիւրերը, երբ օրա՛նը ուրիշ մարդ չըլլայ, կամ եթէ հիւրն ալ պատուաւոր անձնաւորութիւն մ'ըլլայ մինչեւ սանդուղը կ'երթայ :

Տան տղան կամ երիտասարդը որ ընդունելութեան ներկայ կ'ըլլայ, այցելու ակիւնները մինչեւ իրենց կատարելագոյնը, երբ տարիքոտ կին մը եւ իր աղջիկը կառքով եկած են, նստաղջիկը կ'իջնէ կառքէն եւ մեկման պահուն ալ վերջը կը նստի :

(Թարգմ.) ՃԻՒԼԻԱ

ՎՊՂՈՎՐԻԱԿԱՆ ԲԱՆԱԷՒԻՍՈՒԹԻՒՆ

Ե Ր Գ Ր

ԻՌԸ ՀՈԳԵԿԱՆ ՊԵՏՏ

(Ուսումնասիրութիւն)

(Շար. Բիւրակի 48 քիւէն)

Փաւտական մահերգն ու մեռելոյթի ընդհանուր սովորութիւնները բոլորովին ըր տարբերին պատկաններէն : Հոս մահուան պատահար մը կայմակի արագութեամբ կը ներգործէ մտքերու վրայ, ու մեր առջեւ կը բանայ տարօրինակ տեսարաններ : Քրիստոնէական կրօնի մաքերու թեւադրած յարութեան յոյսը և անդրիբրիման կեանքի քրիստոտոնէական անյագ բաղձացումը հոս ալ կը դադրին իրենց հետ խօսելէ, ու մահը իրեն հետ կը բերէ հեթանոսական կեանքի ու մեռելոյթի անմահ survivance (վերակենցաղում) : Հակառակ կըրօնի այն կանոնական արգելքներուն որոնցմով եկեղեցին՝ իր նիմարկութեան օրէն՝ դատապարտեց կոծ դեմը և լաւկան գուսաններու վարձուրութիւնը (Տեւ. Զեռագիր կանոնագիրք. ՅԼԷ. ՆԺԶ. ԾԵԲ. ԾԵԲ. ԶԻԳ. ԻԻԴ. և ԻԻԵ. Կանոնները) ցարք քրիստոնէական հերանոսութիւնը չէ կրցած ինքզինքը վեր բռնել այդ ձեւապաշտ հրահանգութեանէն : Հիմա ալ՝ վարձկան գուսանները որոնք դրամով կը կշռեն իրենց արցունքին կաթիլները՝ իրենց դերը կը կատարեն մահեւեան կարամուտի գացող կիներու համար : Այս վարձուր գուսանքը կը հարկադրեն ւրսարցումի եկողները, սեւեակէն ներս չմտած՝ թաշկինակը աչքին տանելու, իրենք որ սպիտակած են՝ գոնէ սովորութիւնը յարգած ըլլալու համար՝ վայնասուն ճիւ մը ձգել տանը կիններկայացուցչին հանդէպ՝ ծուռգի գալով մէջտեղը պատրաստ դրուած մինտրին վրայ : Տանտիկինը պարտաւոր է մխիթարանքի եկողին լաց ընել, որուն փոխադարձ շատ անգամ կ'ընդունի գի-

մացինէն, ամբողջ ներկաներու կակճուտ աղաղակին հետ, մինչդեռ հոս, այս մահսան մէջ, միխթարութիւնը պէտք էր իր գործը կատարել. հաւատքի ու յոյսի երջանկութեան բառերը կը մնան ներկաներու սրտի յետախաւին մէջ, ու նմանարուժական մէթոտը կուզայ արցունքը արցունքով սրբելու : Եւ այս ամենուն մէջ զարմանալին սա է որ մեռելոյթի տունն այցելողներէն, փոխանակ ներկայ դազալը լալու, ամէն օք առիթ կը քաղէ անկէ՝ իր հին կամ նոր մեռելը ողբալու :

Այնքան նախապաշարուած են միտքերը՝ դաւառի կնիկներուն, մահուան աւերքին հանդէպ՝ որ երբ մեռել կը վերցուի իր ննջած տեղէն, հոն՝ անոր տեղ քար մը կը դնեն, որպէս զի մահուան ողին, նոր թեթեւացումով մը ուրիշի մը վրայ չկրնայ փորձել իր աւերող զօրութիւնը : Մահուան պատահարէն մինչեւ երեք օր աւելուք չեն ընելը ընաւ տան մէջ, վայնասով թէ մահուան ողեկան միկործները փռչի մանր մղեղներու հետ կը ցրցքունին տան մէջ, եւ ուրիշներն ալ զուրս կը վտարեն մինչեւ գերեզման : Եթէ մահը իրիկուան զէմ պատահի, ճրագը մշտապառ կը թողուն գիշերն ալ ամբողջ, անոր անտես ողին ճառագայթելու համար : Իրիկունները պաշտօնական լացի formalité ն կը դադրի, յաջորդ օրը վերակեցիլու պայմանով, գիշերին սեւ սարուոր՝ խառնուած մահուան զալուկ սոսկումին՝ կ'աւարակէ կինները : Այս կիններուն ալ եղած է այն հաւատքը, թէ մեռելին թարմումէն վերջ, անոր հողին երիկնադէմի կ'այցելէ իրեններուն ու տանը մէջ կը շրջի սոսանձին. զուրսի պզտիկ ճիկ մը, լացող ջըրերու երեւքի թնշուժ մը մտքին ուղղութիւնը զէպի այն կողմ կը հակէ. այն պէս որ հովիտ սողին, դրան ճանչումն կամ ուրիշ ո՛ր է աննշան աղմուկի մը մէջ իրենց մեռել սիրելիին ձայնը լըսել կը կարծեն :

Աս գիշերի սս դուրս ելայ, Ողբողները ձան մը կուզար.

Տաճոցայ ու տկանճ զրի ,
 Իմ որդեկիս ձանն էր կուզար :
 «Տարէք հօր ու մօր դոնակ վար դրէք
 Պօճ մի լացէք ,
 Դառնուկ մարիկը վար կանչեցէք ,
 Մարած աչերը լացուցէք :» (*)

կամ

— Աթէչ ախշմուշ օրմանա ,
 Պագընըդ օրման եանմայա ,
 Իչէքտէն պիր սէս կրիխօր
 Պագըն աղամ օլմայա :

Դագազներու յիշատակին երգում ող-
 բերը կանխամտածումի ու նախապատ-
 րաստութեան արդիւնք չեն բնաւ , ձ
 l'improviste եղած յանկարծախօսու-
 թիւններ են անոնք՝ աարբեր դիմանու-
 թիւններով , վիշտը կը զրդէ սգաւորնե-
 րը , որպէս զի տխուր հատուածներ զը-
 ննեն մեռնողին բերանը , և իրենք անօր
 կողմէն երգեն , աղբարսխանն արցունքով :

Վ չէքիմները ճամբըները չափեցին
 Կ'աղէկնաս ըսին՝ իս ալ խարեցին ,
 Ինծի համար շատ արցունքներ թա-
 փեցին :

Կուլամ , ողորմած աէր , սս ինտօր
 աէրտ է :

Լալէն աչուըներս կապեր է փէրտէ :
 — Մարըս , միրը գասնը չպառկիս օտաս
 Ղւմգի կիւլ չունիս՝ ի՞նչ պիտի հօտաս
 Տիրոջը շատ աղաչեցի չի տարաւ դասս
 Կուլամ ողորմած աէր , ետքի իմ ես
 Անուսն է դրած վիաւելի եմ ես :

— Շարմաղ բերէք , վերիս ֆէօղը մա-
 ղեցէք ,
 Տաւեհն բերէք մերմեր քարեր կըլցէք
 «Մուրասուղ է ելերս՝ վրաս գրեցէք :
 Իսկ կոյս մեռնողի մը կողմէն սապէս
 կ'նղերներգեն :

Մէղէրիմ աէրին ետին
 Սու սէրփին , սէրին ետին .
 Պու տինեատա մուրատ ալմատըմ
 Ախրէլտէ կէլին ետին :

Դիտելի է որ դագազներու նուիրումած
 երգերէ մեծ ազոյն մասը թրքերէնով կ'ար-

տալներուն . հայերէն այս կարգի ող-
 բերը շատ ցանցատ թիւ մը կը կազմեն ,
 կցկոտուր յօրինուածութեամբ : (*) Թե-
 րեւս այս երեսուցիկ արդիւնքն ըլլայ
 առուղական հին (եւ նոր) սովորութեանը
 որով անոնք իրենց երգերը կը յօրինե-
 ին թուրք-Պարսիկ-Արար լեզուներով ,
 թողլով որ հայերէնը աղօթքի ու ըն-
 տանիքի լեզուն մնայ շարունակ :

Շատ անգամ կը պատահի որ մեռե-
 լին թաղումէն վերջ , սրտերը դեռ չը
 հօվածրին , ու վիշտը երթալով «խոր-
 ուրնայ» : հոս ալ սուգը կ'ելլէ իր եփ
 ելած վիճակէն , ու իմաստնախոհութեան
 հանգամանքը կ'անէ : Մեռած սիրելին
 անուշ յիշատակներով կը խօսի , ու ընկ-
 ճուած սիրտը զանի առարկայ կ'ընէ այն
 զեղումին , որով վշտահար հոգիները կը
 բանաստեղծեն միսիսի խորհողութեամբ :


Սա միսիսի վրէպրզը կրնայ խըր օրի-
 նակ ծառայել այս վերջին գասազրի
 ողբերուն .

Վ Գիշերն ի գուրս ելայ ճնճուղներն ու
 ճըլվայիսն ,
 Մէկը միւսին կ'ըսէր «Ի՞նչ դիժար է
 եզեր մանուկան հոգին » :

Մանուկն ալ երէկ մեռու
 Այսօր ըպաթնը վերուցին ,
 Տարին ծովեզեր դրին ,
 Ծովի ջրով վլացին .
 Մատնին սանղ ըրին
 Ու պատանքը կարեցին ,
 Ականները խունկ ըրին ,
 Ու իր վրայ ծխեցին ,
 Ճիվերը կերան ըրին
 Ու իր վրայ վառեցին :
 Մարիկը վերեւէն բերին
 Մանկան դիակը ցցուցին ,
 Մարիկն որ տղան առաւ
 Ճշվառելով վրան ինկաւ . . .

(*) Տրամադրելի ունինք Ակնայ գաւա-
 սին «Լացներէն ստուար մաս մը՝ հայե-
 րէն՝ զոր կը խոստանանք հրատարակել ,
 ցրուելու համար Գեր . Ուսումնասիրողին
 այս սխալ կարծիքը Ծ . Խ .

Երբոր պատկերն ալ եկաւ
 Հեզկիտալով ետ զարձաւ .
 Աղբարն ալ ավէն բերին ,
 Զէնքն առին ավլը թոռոցին .
 Հարսնուկն ալ հարսնից բերին
 Հինէյմունն(*) ձեռովին սեւցուցին :
 Շարունակելի ՄՈՒՇԵՂ ՎԱՐԳ .



Ա Ռ Ա Մ Ն Ե Ր (**)

ՀԱԶՐՈՅԻ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌՈՎ

1. Ուրիշի բերնով հաց կ'ուզէ :
2. Մեղաւորի փուշը տոշկի վրան է :
3. Զբի ծառի վրան ալ՝ ծառի տակն ալ տեսեր եմ :
4. Օսթոսի տունկին նստած է : (զիւնով է) :
5. Ուրիշի բերնով հաց կ'ուտէ (կը գործէ ուրիշի խորհրդով) :
6. Ելլողին տեղը՝ մեռնողին կինը կ'առնեն :
7. Մօրուքը ձեռքս է :
8. Էշը ինչ գինայ նուշը :
9. Օձ վըր օձ է : ջրի վրան զմարդ չը խիթէ :
10. Շունն շան մին չուտէ :
11. Իմ կժովս ջուրը մ'երթէք :
12. Աղբուր զգաղձ չուզէ , կ'երթայ կ'իգայ աղբ կը բուսնի : (Կ'ըսուի չը սիրուած մէկումը) :
13. Խոնջած ձեռքը հանգիստ սրտին :
14. Իր անիծը պատուեր է (չափէն անցեր է) :
15. Խորոզ չեղած՝ մի կանչեր ,
16. Միտ անտկոր չ'եղնի :
17. Մանր փարայ է (փորձանք է) :
18. Բակի խառը լեղի կ'եղնի :

(*) Հինէյմունն=հինա դրուած :

(**) Այս առածներուն լեզուն անհարազատ կը թուի , չինք յուսար որ Հաղբուրի մէջ այսքան մաքուր հայ . խօսուի : Երանի թէ տեղական լեզուով գրէիք :

ԴԻՏ. ԽՄԲ.

19. Տան հորթիկը տան շունէն չի վախնար :
20. Սատկած էշ կը փնտռէ նալը քաշելու համար , (ձրի բան կ'ուզէ) :
21. Սիրահարին սպասողը անկին կը մնայ :
22. Գտալով ժողվեց չերիփով տուեց :
23. Բերեց դռներէն տուեց մեռելներուն :
24. Ալիբը մաղբը է մաղը կախեր է ,
25. Էզի մը տուեցի ձութ մը խաղող չտուեց :
26. Ուզողին մէկ երեսը՝ չիտողին երկուքը սեւ ,
27. Սարն ինչքան բարձր էզնի , որ մը ճամբայ տընկնի զինք :
28. Բերնէ բերան , եղաւ դերան ,
29. ՏՆՈՒԼ (ԹՄՐԱԿ) ձէնը հեռեւանց անուշ կիզայ ,
30. Հաւկիթէն էլածը զհաւկիթ չը հաւնի ,
31. Խձած էղբրի ջրին մէջ թքաց (սպերախտ է) ,
32. Մեր հացին մէջ աղ չը կայ . (անբաղդ ենք) :
33. Մարդու մամ ամէն ատեն տղայ չը բերէ ,
34. Օսկրի մող է . (ժլատ է) ,
35. Զի չը կայ մուր կը շինէ ,
36. Մուր կայ մրաման չկայ ,
37. Տղան մամու փորէն կը հանէ : (Չար է) ,
38. Խաշեր է , քաշեր է ,
39. Մկան պըճածը պաղլի կերածը ,
40. Ինչ խնդրես զէն կ'ընթրես ,
41. Էշը հեծեր է , էշը կը գազտէ ,
42. Ով չը լայ իր մեծին , կը մտնայ ամպ հեծին ,
43. Սպիտակ շունը բամպկի տիրուն փնաս է ,
44. Նոր հաւ է , հաւկիթ կ'ածէ :
45. Խորոզին զրիս հաւկիթ կ'ածէ ,
46. Գլուխս որ չը ցաւայ , է՞ր քընձ (քուրջ) կապմ ,
47. Շունը կը հալայ , կարածը կ'անցնի ,
48. Պատ քեզի կ'ըսիմ , ազնիկ դու հասկցեր ,

- 40. Ուրիշին ցաւը սարէն կիզայ, իմը օտքիս տիէն,
- 50. Քոտը (կոյր) ինչ կ'ուզէ, — աչքի լոյս,
- 51. Հաւ վրը հաւը ջուր խմած ատեն վեր կը նայայ (կը նայի),
- 52. Պաքը տրեր եմ զպաքը (պատուհան),
- 53. Քոտը քոտին ճամբայ կը ցնընէ,
- 54. Պողպատը պողպատէն չ'ուտէ,
- 55. Կանկառին ըսին «քու բունը ո՞ր է», ըսաւ քսովն զինայ,
- 56. Բանի մէջ բան ընկայ,
- 57. Էրտը քու մը էր, մարագ ալ քո՞ւմ էր,
- 58. Քաղցր բնութիւն՝ մինչեւ ծերութիւն,
- 59. Էլը քերթեր է, պոչը մնացեր է,
- 60. Իմ բնոս բառներ եմ,
- 61. Մօրուք չունիմ որ խօսքս անցնի,
- 62. Գիլուն իրատու կը կարգան, ըսից չուս ըրէք գանձուկը ջրէն անցաւ,
- 63. Մկան պոչը իր տունը չ'ալըրտօի,
- 64. Շամը հեռի է, Շամչամն ալ հեռի՞ է,
- 65. Փսկան վազքը մարագի դուռն է,
- 66. Կուշտը քաղցածին մանտր կը բրդէ,
- 67. Էրիս սուեցի աստառ ալ կ'ուզէ,
- 68. Էնոր համար ձուն է կեր է որ սոք պաղի,
- 69. Կակող լեզուն օժը ձկէն կը հանէ,
- 70. Ղուկաս զինայ զիւր գրեաս:

Ֆարգին Թ. ՂԱԶԱՐԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳՐԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐ 1900ի

Զ. ԹՈՐՈՍԵԱՆԻ

Պարզ, մատիտով, ոսկեզօծ, կաշեպատ, թաւապատ, փղօսկրէ կողքով, Դիմել Ս. Գաւթեանին

ԱԶՊԱԳՐԱԿԱՆ

Ս Ի Վ Ր Ի Ն Ի Ս Ա Ր Յ Ի Կ Ի Ն Ը

(Շար. 47—48 քիւէն)

Աւխասուքիւնները քան մեզ եւ ՏԵՆ ԳՈՐԱ

Սիվրիհիսարցի կնոջ զլխաւոր դբադուսն է ճերմակ բրդէ գուլպայ հիւսել, այդ բուրդը գզել կուտան լպուաներու որ սովորաբար Թուրք են, իսկ իրենք կը մանեն գայն բոքը վրայ, յետոյ «չիշերով» կը հիւսեն գուլպայ: Այժմ շատ մը կարօտ, անօգնական ընտանիքներ կան որ միայն գուլպայ հիւսելով եւ ուրիշին գործին երթալով կ'ապրին: Սիվրիհիսարցի կնոջ ինք կը ձեւէ ու կը կարէ տան բոլոր լաթերն ու կարճըր, ինք կ'իփէ հաջը 10—15 օրն անգաս մը եւ դարձեալ ինք կը լուսայ տան ամբողջ լաթերը, ի մի բան ինք կը պատրաստէ այն համեղ եւ ընտիր կերակուրները որ Սիվրիհիսարցի կնոջ գըլխաւոր առաւելութիւնը կը կազմեն: Աղջիկներն ալ ընդհանրապէս այդ գործերով կը զբաղին տան մէջ իրենց մօր ձեռքին տակ, անոնք մեծ բաժին մը ունին ընտանեկան աշխատութեանց մէջ, զրացի կամ ազգական աղջիկներ մէկու մը տուն հաւաքուելով կ'ինքրու հսկողութեան տակ եւ կամ առանձին ամէնը մէկ գուլպայ կը հիւսեն: Աղջիկներու այդ հաւաքական աշխատութեան, որուն երբեմն հարսեր ու կիներ ալ կը մասնակցին, չափուի կ'ըսուի որ գուլպայ հիւսուելիք իւրաքանչիւր աղջըրկան բրդի թելերը հաւասար չափելով ամէնքը մէկ կըստին հիւսել, եւ ով որ կանուխ վերջացընէ, ան է վարպետը: Կըզբաղին նաեւ զորպագործութեամբ որ վերջին ժամանակներս մուտ գտաւ Սիվրիհիսարու մէջ աղջիկներու ձեռքով եւ հետզհետէ տարածուելու վրայ է, այսօր շատ մը աղջիկներ իրենց զբաղումները թողելով՝ սկսած են գորգագործութեան, ասկէ զատ աղջիկները իրր ձեռագործ կը հիւսեն նաև:

ժանեակ եւ բարդի գոյնզգոյն թելերէ շինուած գուլպաները Երբ այս աշխատութիւնները կը վերջացընէ Սիւրբիհի-տարցի կինը, եթէ ամառ է տան դուռը կը նստի դրացի կիներու հետ, կը խօսակցի եւ կ'աշխատի, իսկ եթէ ձմեռ է իրարու տուն երթալով կը նստին ու կ'աշխատին :

Այս սովորական աշխատութիւններէ դատ Սիւրբիհիտարցի կինը ունի նաեւ շատ մը գրադումներ : Երբ գարունը գայ եւ օրերը տաքնալ սկսին, նա տան բոլոր կապերաճերը սղբիւրը կը տանի լուալու համար, լաւ մը կը լուայ տունն ու բոլոր ամանները : Աշունը Սիւրբիհիտարցի կնոջ գրադումներուն ամենէն շատ ժամանակն է : այդ ժամանակին կը քաղուին այգիները եւ կինը կը պատրաստէ խաղողէ ընտիր ուռվը : Կարծիք գիտին եւ զանազան քաղցրեղէններ, ինչպէս, քարխամա, զուխակ եւայլն : Յետոյ կուգայ տան պաշարը պատրաստելու ժամանակը, ցորենը կը մաղէ, կը մաքրէ եւ էրկի մարդիկ ջաղացք տանելով ալրու գը շինեն, միեւնոյն ժամանակ կը պատրաստեն նաեւ պլուզը (ձուար) ցորենը խաշելով կը չորցնեն եւ երկանաքարով քիցկ կը ձեծեն (կեղեւը կը հանեն) յետոյ կը պատրաստեն կոնճն (տոճ, Խարու) վերեւ յիւտով քիցկին տակ ձեծելով ցորենը եւ վրայէն թեփը հանելով : Կորկոտը եւ սլղուրը ձեռքի երկանաքարի տակ կ'աղան աշնան գիւրերը խորովին հաւաքուած, դրացի կիներու եւ աղջիկներու օգնութեամբ, երգք ու խաղեր կանչելով : Կը պատրաստեն նաեւ եփունը խալուած կորկոտէն մաս մը թողելով տինկի տակ ձեծելէ վերջ, որմէ կը շինուի ընտիր հեռեմ (խէրխա) :

Ահա ասոնք են Սիւրբիհիտարցի կնոջ գլխաւոր գրադումները, որուն մէջ ամէն կին փոխադարձաբար կ'օգնէ իր դրացուոյն ամէն աշխատութեան, տան վերաբերեալ ամէն կաշ կարասի իրարու փոխ ալով եւ անձեղով :

Դիս. Խմբ. Հոս մտացուած կը տես-

նենք դաւառացի կնոջ ուրիշ մէկ քանի գրադումները :

8.

Ընտանեկան բարեւ ու սովորոյքներ եւ սոնմային յատկութիւններ .

Ա.

Նշանատի և հարսնիկի սովորութիւններ

Ինչպէս յայտնի է աղջկան դիրքը ա'ւ աւելի կը ճշդուի տան մէջ երբ շափահատութեան եւ նշանուելու տարիքը մօտեանայ : Նշանտու քի եւ հարսանիքի սովորութիւնները շատ նշուաբարական են Առանց փեսացուին կամքին եւ հաւանութեան նայելու, հայրը, մայրը, եւ ազգականները կ'որոշեն իրենց հարսնացուն, եւ երբոր երկու կողմէն ալ համաձայնութիւն մը կը գոյանայ, այն առտն կը սկսին նշանտուքի սովորական ձեւակերպութիւնները : Ընդհանրապէս երեք տարեց կիններ, որոշուած օր մը մանչուն կողմէն աղջկան տունը երթալով իրենց դիտաւորութիւնը կը յայտնեն աղջկան մօրը եւ հոն գտնուող մի քանի ազգականուհիներուն : Աղջկան մայրը երկար վարանումներէ վերջ իր էրկան վրայ կը նետէ վերջին խօսքը, եւ այդ կիները մօրը հաւանութիւնը ստանալով շիրիկունն ալ էրկի մարդիկ պիտի գան : Ըսելով կը մեկնին : Նոյն իրիկունը քանի մը պատուաւոր անձեր երեւին քահանայի մը ընկերակցութեամբ կ'երթան աղջկան տունը ուր հաւաքուած կ'ըլլան ազգականները, սովորական բարեւներէ ետքը խօսք կը բացուի անեւտուրի եւ այլ նիւթերու վրայ, վերջապէս խնամխօսի (այսպէս կը կոչուին այդ գացողները) գացողներէն մէկը կամ քահանան ճարտարութեամբ մը խօսքը նշանտուքի վրայ դարձնելով՝ կ'ըսէ տանտիրոջ եւ կամ հոն գտնուողներէն աւելի մեծին (եթէ կայ) թէ մենք հոս եկած ենք ձեր աղջկը կնութեան խնդրելու մեր աղուն, Աստուծոյ հրամանով : այս միջոցին կը սկսին կատակները, ներկաները միա-

բերան կը գանգատին աղջկան հօր՝ թէ այդպիսի քան մ'ուսնի եղեր եւ իրենցմէ կը ծածկէ, ան ալ բնաւ տեղեկութիւն չունենալը կը յայտնէ, խնամխօսի գացողներէն կը պահանջին որ եթէ այդ բանին համար եկած են, դարձեալ նոյն ճամբով վերադառնան եւ այլն (1)։ Վերջապէս ամէն տեսակ կատակներ ընելէ եւ խնամխօսի գացողները բաւական յոգնեցնելէ վերջը կը հաւանին եւ կ'որոշեն նշանին ժամանակը։ Այն ատեն ներկաներուն օդի հրամցուելով՝ կը խմեն եւ կը մեկնին։ Նշանին որոշուած օրը թէ վերջան եւ թէ մանչուն տունը նշանի համար յատկապէս կը հրաւիրուին բոլոր ազգականուհիները, այդ հանդէսը միշտ կ'ինկրուն է, մանչուն տունը հաւաքուած կ'ինկրը կ'որոշեն որ մանչուն քոյրը եւ կամ ազգականուհիներէն մէկը տանի նշանը որ է սովորաբար՝ շաքար, չամիչ եւ եազմա մը, ընդամէնը 10—15 օխա, իսկ եթէ հարուստ է միայն եազմա մը եւ ոսկի մը (մէնսօհեայ)։ Նշանը դեռ չի տարած, հոն գտնուողներուն առջեւ կը բանան եւ ամէնքը դիտելէ վերջ, միաձայն հաւանութեամբ կ'որոշեն որ տանի. այն ատեն այդ որոշուած կ'ինքը րաւ մը հագուած սզուած՝ կը տանի նշանը աղջկան տունը եւ հոն գտնուողներուն դիմաց բանալէ վերջը, հարսնցուին ձեռքէն սուրճ մը խմելով կը վերադառնայ. այդ նշանի շաքարէն եւ չամիչէն կը բաժնեն ներկայ գտնուողներուն եւ դրացիներուն՝ «Տաօսը այսօր քիչ եւ աղայից թ'որլա՞ ըսելով, Երբ այդ նշանի հանդէսը կը վերջանայ, նոյն օրը իրիկունը մանչուն տունը կը հաւաքուին խումբ մը երիտասարդներ եւ ազգականներ, աղջկան տունը քիչիւր քեօքիի երթալու համար, ժամը 2—2 1/2 ին այդ երիտասարդներու եւ ազգականներու խումբը ծայր կուտայ մեծ թափօր մը կազմած, իրեն ետեւէն քաշելով ման-

(1) Այդ տրամախօսութիւնը կ'արժէր ամբողջովին ու հարազատօրէն գրի առնել, յ. Խ.

չուն մօր եւ ազգական կ'ինկրու խումբ մը որոնք իրենց հետ թաշկինակ մը շաքար եւ չամիչ կը տանին. երբ այդ թափօրը աղջկան տունը կը հասնի հոն նշանուած մանչը, ամէնէն տարեցէն սկսելով մինչեւ փոքրը, կարգով ձեռքերը կը պահէ, մինչ այդ միջոցին կ'ինկրը հարսնցուն իրենց քով առած՝ անոր դիմագծերը կը զննեն ու կը խօսակցին։ Այդպէս մինչեւ ժամ 6—7 բաքոսի խնկարկութիւն ընելէ վերջ, կը մեկնին. հետեւեալ օրը իրիկունն ալ աղջկան կողմէն մանչուն տունը կողգան նոյն թափօրով եւ միեւնոյնը կ'ընեն, Այս քեօքիի հանդէսներուն մէջ կատակներ ընելու համար երբեմն գաւաթներ, շիշեր եւ այլ բաներ կը գողնան գաղտուկ եւ իրենց հետ կը տանին. անց այդ կերպով կը վերջանայ քոյիքիք (նշանտուք) եւ երկու կողմէն ալ կը շարունակուի խնամութիւնը, արդարեւ շատ դժուար է այդ խնամութիւնը շարունակել, որովհետեւ ամէն տաղաւարի պէտք է որ մանչուն կողմէն աղջկան տունը կօշիկ, հիմն, մատանի եւ այլ բաներ զրկուին, մանչուն պարագաներ եւ ազգականները դրամ տան իրենց հարսնցուին, փոխադարձաբար բաշխիք երթան եւայլն. վերջապէս հազար ու մէկ սովորութիւններ որոնց քիչ մը քանցաւութիւնը տեղի կուտայ երկու ընտանիքներու մէջ կեցած կամ տեղի ունեցած խնամութեան սերտ կապակութիւնը խլելու։

Երբ այդպէս մի քանի տարի խնամութիւնը կը շարունակեն, երկու կողմէն ալ կ'որոշեն հարսանիքի ժամանակը եւ այն ատեն կը սկսին օրինական ձեւակերպութիւնները, ընդհանրապէս հարսնիքէն 15—20 օր առաջ նշանտուքի զրկած մարդերուն նման տղուն կողմէ աղջկան տունը 2—3 պատուաւոր անձեր կը զրկեն, որպէս զի հարսնիքի խօսքն առնեն, եւ երբ խօսքն առնուի, կը սկսին երկու կողմէն ալ հարսնիքի պատրաստութիւնները. հարսնիքէն 8 օր առաջ մանչուն կողմէ աղջկան տունը կ'ին մը երթալով հարսնցուին զգեստ-

ներուն շափը կ'առնէ որուն կ'ըսուի չափ սանիլ: Երբ որոշեալ ժամանակը կը հասնի, մեծ աղմուկով կը կատարեն հարսանեկան հանդէսը: Հարսնիքի կը հրաւիրուին բոլոր ազգականներ՝ ընտանիքով եւ պսակն ալ երկուշաբթի օրը կը կատարուի: պսակի երկուշաբթիէն շաբաթ մը առաջ կը սկսի հարսնիքը տղուն կողմը: Բշ. գշ. դշ. դիւշերներ ազգական աղջիկները եւ կամ թաղին դրացի աղջիկները հաւաքուելով՝ երգեր եւ խաղեր կը^(*) կանչեն միտման օտն ալ զարնելով: Իսկ Եշ. օրը փեսային բարեկամներուն եւ երիտասարդներուն հրաւիրագրեր կը ցրուին, եւ օրուընէ սկսեալ մինչեւ հարսնիքին վերջը մասնաւորապէս բաղնիքի ներկայ գտնուելու համար, ուր՝ եւ չը. օրերն ալ՝ դրացիներու, ջոջերու եւ քահանաներու:

Եշ. իրիկունը խումբ մը երիտասարդներ հաւաքուելով տղուն տունը՝ մինչեւ լոյս բաքսի խնկարկութիւն կ'ընեն սազ, ջուլթակ կը նուագեն պարելով, եւ առաւօտուն դէռ միջնազ՝ սիմփսը ուտելով հրաժեշտ կուտան. նոյնը կը շարունակուի նաեւ ուրբաթ իրիկուն. բայց շաբաթ ցորեկ նորէն նոյն երիտասարդները կը հաւաքուին եւ աղջկան կողմէն ալ մի քանիներ միտնալով կ'երթան փեսայ-բաղնիք: նո ազգածուները հնչեցնելով իրենց գործիները եւ ամբողջ ետեւէն երթալով, Այդ ամբողջ բաղնիքը թողլով՝ գանձ հիմա աղջկան կողմը. այնչափ նշանակութեան արժանի սովորութիւններ չկան աղջկան կողմը, միայն ազգականները հաւաքուելով իրեն կը զնեն հարս ախնիքին (դէռ հարս չեղած աղջիկ որ շաբաթէ մը հարս պիտի ըլլայ) գլուխը ձեռքերը եւ ոտքերը, եւ տղուն կողմէն գալիք մարդոց կը սպասեն, ահա այնչափ միայն. դատնանք այժմ՝ բաղնիքը լուացուողներուն. ասոնք լու մը լու-

ացուելէ վերջ, նոյն շաբաթ տուն կը վերադառնան. իրիկունն ալ նոյն ամբողջ կը շարունակէ իր շահաստակութիւնները աւելի բուռն, որովհետեւ որչափ հարսնիքը իր վախճանին հասնի աստիճանաբար կը սաստկացնեն մեր երիտասարդներն ալ իրենց էկշիք:

Հետեւեալ օրը (կիրակի) փեսան եկեղեցի կ'երթայ հաղորդուելու համար, իսկ «հարսնտխճիւր» նախապէս հաղորդուած ինելով՝ տղուն տունէն եկած խումբ մը կ'ինկրու եւ նոր հարսերու հետ բաղնիք կ'երթայ, որուն կ'ըսուի հարսախնիք բաղնիք: Եկեղեցիէն վերջ տանտիրոջ բարեկամներ, ազգականներ եւ դրացիներ կը հրաւիրուին ներսէ ճաշակելու, եւ իրիկունան դէմ խումբ մը կ'ինքը իրենցմէ մէկը կրելով նաև պող (ծրար) մը՝ որ տղուն կողմէ շինուած աղջկան զգեստները կը պարսեակէ, խանն այրելով ու պղտիկներով նուագածուները առջեւէն կ'երթան աղջկան տունը որուն կ'ըսուի պարսոճոճիկ: Այդ ծրարը հոն հոն ձգելէ եւ սուրճ խմելէ վերջ՝ շապիկ մը կ'առնեն եւ կը մեկնին. մի եւ նոյն ատեն ալ այրերը կ'ընթացային հետ որ կը կրէ ծայրը մէճիտ (20 զըշ) ովթակի նակ մը եւ քիշ մ'ալ պարունակող ծրար մը՝ կ'երթան եկեղեցի, որուն կ'ըսուի խարնմալու. այդ ծրարը եկեղեցիին մէջ օրհնուելով՝ ժամկոչը կը տանի աղջկան տունը, իր իրաւունք իր այնքան տարիներ գուրգուրանքով մեծցուցած աղջկան (ի՛նչ ատան) յետոյ փեսային համար մատանի մը առնելով՝ կը տանի տղուն տունը: Իրիկունը քահանան կուգայ ու կը կատարէ հալաի հանդէսը, փեսային եւ կնքահար զգեստները խանի (սկիւր) մը մէջ զրուելով կը բերուի քահանային առջեւ եւ նա օրհնելէ վերջ, ժամկոչին բերած մատանին փեսային ձեռքը կ'առնէ, ետքը փեսին ազգականներէն երկու անձ կը հազուեցընեն փեսան եւ կնքահարը: Փեսան հազուեցընէր անձը նախ գլխարկը զնելով կը համբուրէ

(*) Որո՞նք են այդ երգերն ու խաղերը:

անոր ճակատը եւ եթէ դժբաղդարար հարանետան եւ կամ ազգականներուն մէկ անդամը մեռած է, կը սկսի լացն ու կոծը եւ քիչ մը առաջուան ուրախութիւնները դադարելով՝ վայրեանի մը համար կը տիրէ տիրութիւնը. փեսան ու կնքահայրը հաւաքուելով՝ քահանայէն սկսեալ բոլոր ներկայ եղողներուն ձեռքերը կը համբուեն. գիշերը ժամը 2-3ին հարանետան մէջ բոլոր գտնուողները փողոցին մէջէն նուագելով՝ կ'երթան կնքահօր տունը որուն կըսուի փեսայ տուն երթալ. հոն մինչեւ լոյս Բաքոսի խնկարկութիւն կ'ընեն եւ հետեւեալ օրը (Թշ.) առաւտտուն փեսան եկեղեցի կ'երթայ, քանի մը կիներ ալ նոր հարսերու և այլերու ընկերակցութեամբ կ'երթան հարս տանելու. աղջիկը լաւ մը կը քողեն, այսինքն երեսը քողով կը ծածկեն եւ եկեղեցի կը տանին: Պսակէն վերջը փառաւոր թափոր մը կազմուելով՝ դպիրները, փեսան և այլերը առջեւէն եւ երկու նոր հարսեր հարսին թեւերը մտած՝ կիներու հետ ետեւէն, կ'երթան փեսային տունը եւ բոլոր հըրաւիրեալները կը ճաշակեն համեղ ու ընտիր մատաղը, սեղանին վրայ, աղջրկան հօր կողմէն եկողները, որոնց գալուն իւզեցիլիկի երթալ կ'ըսեն, կատակի համար ի վարձ իրենց աղջկան, բան մը կը պահանջեն տանտիրոջմէն եւ ան ալ իր այգին, տան կէսը եւ այլ բաները տալու դիտաւորութիւն կը յայտնէ. կը պատմեն թէ հին տաններ իւզեցիլիկի գացողները այդպէս տանտիրոջմէն բան մը պահանջելով տանտիրոջ խոստացածը այդչափ մարդերու մէջ, աղջկան հօր սեփականութիւնը կ'ըլլայ եղեր իբր գին իր աղջկան. բայց այդ սովորութիւնը վերնալովայժամ միայն անոր խօսքը կ'ըլլայ կատակի համար Փեսան կնքահայրին հետ մէկտեղ միշտ դրան առջև կեցած՝ գացողներու ձեռքերը կը համբուէ և կը սեղմէ, հարսն ալ կիներու շրջանակին մէջ բոլոր և կող դացողներու ձեռքերը կը

համբուէ եւ ոմանք այսչափով ալ չը գոհանալով հարսին երեսի քողը կը վերցնեն եւ կը դիտեն ըսելով « մաշալլահ, անուշ հարս եղեր ես եւ այլ », այդպէսով հարսանիքը կը վերջանայ: Բայց քիչ մ'ալ պիտի դադարենք՝ ընթերցողները ընտանեկան շրջանակին մէջ, Հարսանիքին հետեւեալ օրը, Գշ. հարսին երեսը կը բացուի, բոլոր ազգականները հաւաքուելով նոր հարսը անոնց ձեռքերը կը համբուէ մեծէն սկսեալ միեջեւ պղտիկը եւ դրամներ կըստանայ, հոն գտնուողները նիվան և ոչխարի գլուխը ճաշակելով կը մեկնին: Կէսօրին եւ կամ մի քանի օր վերջը ազգականները եւ դրացիները հաւաքուելով՝ կին մը փոքրիկի մը հետ կը բերէ նոր հարսին պոռուք (ճէհէզ) եւ հոն գտնուողներուն դիմաց բանալով՝ մի առ մի կը համբէ, տանտէրը պոռուք բերողին ինչպէս նաև փոքրիկին դրամ տալով կը մեկնին. Գշ. կամ Դշ. իրիկուն աղջկան ծնողքն ու բոլոր ազգականները աղօթիքստի կուգան իրենց փեսային տունը, հոն ժամը 4-5 նստելով իրենց աղջիկը (նոր հարսը) կուգայ և ներկայ եղողներուն ձեռքերը կը համբուէ: Հետեւեալ օրը իր կունն ալ փեսան եւ հարսը իր ծնողքին եւ ազգականներուն հետ կ'երթան հարսին ծնողքին տունը: Մի քանի օր վերջը նոր հարսը ընծայ կը բաժնէ (սիւրիւն) այսինքն շապիկ՝ անոնց որ իր երեսը բացուելու ժամանակ ստակ տուած է էին:

Եւր. Կ. Ս. Տ. ՆԵՐՍԵՍԵԱՆ

Բ Ա Ռ Գ Ի Ր Ք

ԳԻՏՈՒԹԵԱՆՅՆ ԵՒ ԱՐՈՒՆԵՍԻՏ

Բրեսնայան աշխատախրուիւն

Հ. Մ. ՊԱՃՈՒՆՅԻՔ

Վեհ. Մխիթարեան Միաբանութեան
Գին 60 Քրանք

ԳՐԱԿԱՆ

ՍԻՐԱԽԱՐԱՆԻ ԵՐԿՏՈՂԸ

Բարեկամ՝ մ, սիրոս կէս էրած փայտի պէս կը մտայ, մատաղ սիրոս կանաչ ճիւղի մը պէս սիրոյ բոցերուն մէջ կը մտայ: Չուսացածս գտայ, չակնկալածս զիմացս կայնեցաւ: Սէրը, ըսին, չհասկըցայ ես, սիրոյ վրայ կարգացի՝ շփոցայ ես, չհասկցայ ես սէրը մինչև սիրել չակայ: Այսօր՝ սէրը ճանչնալէ ետք սիրախար ըլլալու դասն ալ սորվեցայ: Բայց ասի շատ դասն է: Բայց դուն կ'ըմբռնեն՝ սիրախարութեան դասն թիւրինը՝ դուն որ ոչ սիրած ես ոչ ալ գիտես թէ խարուիլն ի՞նչ է:

Երկտողով մը սրտիս պատկերը գծեմ, Տարիներով բաղձանքիդ ետև վազելէ ետք, երբ հը՝ հը՝ հասնելու կ'ըլլաս, յանկարծ հարուած մը կուզայ բերնիդ ու քեզի կենակիդ վրայ կը կործէ, դուն խարուած ես: Երբ աղջիկ մը կը ցուցնեն քեզի, սիրէ՛ կ'ըսեն, դուն կը սիրես եւ այն վայրկեանին որ ալ ձեռք պիտի ձգես, ուրիշ դուռ նայէ կ'ըսեն քեզի եւ աղջիկը կ'աներեւոյթացնեն, սիրախար եղած ես: Ահա խարուած եւ սիրախար սրտիս պատկերը: Բայց սիրոս ո՛ւր... այս պատկերն ուր: Այս տողերը սրտիս ծաղրանկարներն են, աչքս կը սրբեմ հաւտալու թէ սա սիրախար սըրտիս լուսանկարն է արցեօք:

Կը ճանչնաս Բէֆէրախը — Շիրոյի կուրծքը, բլուրներու կողքին քովէն դաշտին վրայ ծիծաղող Բէֆէրախը: Ոտքդ հոն դրած չես, բայց անով այնքան հետաքրքրուած ես որ ա՛լ քուկդ է անի, կարծես դուն ալ վայլեր ես անոր պաղուկ ջրերն ու կապոյտ երկինքին ծիծաղներն ու կնճիւնները, դուն ալ անոր հակա լեռներուն շունչովը սնած Շիրոցի մ'ես:

Հոն գեղեցիկ է բնութիւնը: Կը նայի՛ս. ասի ջուր մ'է՛ որ քարին տակէն կը պղկայ, անի առուակ մ'է՛ որ կարմիր եւ գունեղ ծաղկներու երկայնքէն կը հոսի: Մէ՛կ կողմի խաղողը, կարմիր

անոյ խաղողը որթերէն կը կախուի, մեկալ կողմի պարտէզները հեւքեր կ'առնեն հովերէն եւ ծափ կուտան փոխարէն: Արշալույսը կ'ուզե՛ս տեսնել, վերջալոյսին կարմիրը որ կապոյտին հետ կը գրկուի, կ'ուզե՛ս տեսնել՝ Հոն եկ'ուր, հոն որ գեղեցիկ բնութիւնը տեսնես: Հոն լուսինն ալ աղկէ՛կ է սիրարկուներու լուսինը որ արծաթ-լուսով աստղերու մէջէն կը զլորի: Հոն գեղեցիկ է բնութիւնը եւ ես այդ գեղեցիկ բնութեան էն գեղեցիկը սիրեցի:

Շիրոցին այդ բնութեան խորթ զաւակն է կարծես. ժայռին պէս անտաշ է, դժնիկին պէս անտարբեր—դժնիկին պէս, որ ձեռքդ կը ծակէ եւ արցունքիդ վրայ կարմիր՝ քու արիւնովդ կարմիր հեզ-նանքներ կը թափէ: Առտուն՝ մութն ու լուսուն երբ մեռնող աստղերը փթթող ծաղկներուն հետ իրենց աղօթքը կը ծրարեն, նա այդ տիեզերական պատարագին վանկ մը, խորհրդաւոր վանկ մը ակեցնելու տեղ վայրի միջոց մը կը զրկէ: Հոն կոչնակը գեփուտին թեւերուն վրայէն իր օրհնեալ ծայրը չիտրսկեր, Փառք մեզ Աստուածը չի լուսեր գեղջուկ շրթներէն, զի այդ սրտերը տէրտէրի ձայնով չեն թրթթած եւ ասպախարանքի արցունքով չեն թրջած՝: Գերեզմանները քանի՛ մեռելներ կան որոնց հոգիները աղօթքի կարօտ կը դեղերին, քանի՛ ածինացած սրտեր կան որոնք հոգեհանգիստի շարականներուն կըսպանեն բայց գեղջուկին վայրի հայտնը կը լսեն: Առոյգ է Շիրոցին, կորովի է, սիրելի ալ զիտէ, ինչ որ իրեն կը պակտի՝ մաքուր աղօթքն է: Ես այս մարդերուն էն գեղեցիկը սիրեցի:

* *

Պղտիկ էի. մայրս զիս դարբնոցը զրկեց որ արհեստ սորվեմ: Ես՝ փքոցին կտես նստած հնոցին (փուռին) զոյգ թոքերը կը շարժէի: Մէ՛կ աչքով փքոցին՝ միւսով նարեկին կը նայէի: Նարեկն ու Մաշտոցը փուռին կայծերուն մէջ կարգացի: Բայց տարին հազիւ երկուք բարեց ես մտորը մուշտային եւ սալը

կոծին հետ փոխեցիւ Վարպետ Քաչոփն քով գացի կօչկակարութիւն սորվելու : Վարպետս առաջին օրն իսկ հաւնեցաւ կութերուս և զիս գովեց, Վարպետիս կինը Մարիամն ալ զիս տեսաւ ու շատ սիրեց, Հազիւ քանի մը ամիս անցած էր, ես այդ խանութին ու տանը էն սիրելին էի : Մարիամը տաքուկ համարոյներ կուտար ինծի ու զիս կը շոյէր : Այլ փոխուած էի, գիրքն ու գրիչը մոռցած, կ'ուզէի որ երեսներս զգուէր, ձեռքը զլիսի վրայ դնէր ու քովէս չի հեռանար : Զէի գիտեր թէ այդ ձեռքերը գործողութիւնս կը շինէին :

Վերջապէս հասկցայ այդ գգուանքին իմաստը . հակըցայ թէ Մարոնի որ պզտի եղանակ ինծի նշանել կ'ուզէ : Ես իր գըզուանքներուն մէջ կակզցած, իր նայուածքներէն մեծաբարացած օվկիմ մ'էի : Ես չկրցի առարկել : Լեզուանի Մարոն վաղուց արդէն մօրս զուլսը թառած՝ դայն համոզած էր :

Օր մ'ալ ըսին թէ այսօր նշանտուք է : Այդ օր վարպետս զիս տունը չկանչեց, ամէն օր եթէ նա մը տունը գար, զիս կը կանչէր : այսօր նշանտուք կար՝ չը կանչեց : Ես գոզնոցս քակեցի եւ նեղսիրտ տուն գացի : Լացս պուկս փակեր էր ու քունս չեկաւ :

Կէս դիշերը վաղուց անցած էր երբ մայրս տուն եկաւ եւ իր բերած մատնին ձեռքս (մատս) զրաւ : Նա օրհնեց, գովեց զիս եւ քանի մը պուտ ալ արցունք թափեց հօրս վրայ, որ իր տղուն օրն ու արեւը շտեսաւ : Մատս մատնի մը դրին բայց տէրտէրը օրհնած չէր այդ մատնին :

Այդ օրէն ինծի ըսին թէ վարպետ Քաչոփն աներդ է, այդ օրէն աշկերտի սկանածանքին հետ փեսացուի լուսթիւնն ալ միացաւ ու ես խանութին մէջ նոր հարս մ'էի, իսկ տանը մէջ տան տղայ մը : Ամէն անգամ որ տանիքին վրայ ղեփռտուք մը լսուէր, սիրտս զոզ կ'ելէր, ասեղը շուք կ'ընէի ու մէյ մը տուննէն ներս կը մտնէի տեսնելու թէ ո՞վ կար տանիքը : Մէյ մը տանիքը, մէյ մը

սխտը. մէյ մը թոնիր տունը կը վազէի, բուն մը կը փնտռէի, ես ալ չէի զիտեր ո՞վ : Երբ անեցիք ինծի կը նայէին, ամբնջալէն մուշտային քով կը վազէի ու սրտիս տրոփին ներդաշնակ կախն կը ձեռնէի :

Առտունէ իրկուն աչքս կը ծլէր . զէ՛ կ'ընէի . ե՞րբ տի մարի սի արեւը որ սխտը վազեմ Մարոն ու Եղան սի տեսնեմ, » Երբ վարպետս խանութը ինծի յանձնած՝ զիւղէր կ'երթար, ալ Բեճիս վրայ Բեճ չիկար : Այլ ուղած տեսնուտունը կը վազէի, զի ալ վարպետիս խոտոտ նայուածքները չկային որ զիս կոծին զուլսը գամէին : Ես ազատ, կը վազէի մայրիկին, (ալ Մարոն մայրիկ էր եղեր) զրկաց մէջ ու անոր գգուանքներով կը լոկնայի : Իրիկունը եղայային հետ մայրիկին ծնկան վրայ դուռս զըրած կը պտակէինք, երբ նա մէյ մը զիս կը համբուրէր, մէյ մը աղջիկը կը համբուրէր : չեմ զիտեր ի՞նչ անոյշ բերկարնք էր որ հողիս կը լեցնէր : Կըզպար թէ սիրտըս արագ կը բաբախէր որ քիչ կը մնար կուրծքս պիտի պատուէր և զօրս իյնար : Իրիկունը ներս հետ աստղերուն տակ — Երեոյին աստղերուն տակ — կը նստէինք ու կը խաղայինք . նէ քովէս կը փախչէր ու մօրը զրկացը մէջ կը պահուրէր, մօրը զրկացը մէջ որոյ մէկ մասը ես զբաւած էի արդէն :

Երբեմն լուսինն ալ կուգար իր մահաւանթը ցոլքերը մեր ժայիտներուն խառնելու : Դառամի օրէնքներ թափել մեր սրտերուն վրայ բոնք բերկրանքի մէջ կը հալէին :

Փեսացու ընկերներս հազար երնէկ կուտային ինծի, որ օր մը չէի անցնէր առանց սիրելիս տեսնելու : « Դունս ըլ փեսայ ես մենք ըլ, դու ամէն օր աներանցդ առունէն շես ելլար, մենք անոնց դունէն իսկ անցնելու չենք, Երնէկ քեզի, աշխարհի մէջ վայելքը ասիլը, Գալթիւնը մնաց : Մուրսի մեր զլխուն... զար մենք ըլ փեսայ ինքքը : Վայլէ : Բարեկամ, վայլէ կեանքը, մեր մուրատ մարը փօրը մնաց : » Այսօր թող անգամ մ'ալ

զիս տեսնեն այդ ընկերները, թող տեսնեն թէ երանելի աղեկը թշուառ մ'է այսօր:

Անշուշտ չես ուզեր որ սիրուս մանրամասնութիւնը նկարագրեմ, ա՛լ ինչ պէտք ըսել խնճօքի շփոնը, զուարճութիւնները, ի՛նչ պէտք միշտ կազանդչէքները, Զատկի ու տօնի նուէրները, թող անոնք մոռցուին, թող անոնք մանանիս չցանեն այրած սրտիս վրայ:

Պարագաները, զիս Քէֆէրտիսէն բաժնեցին: Քսան ու Հինգ տարի էր որ նայրս այդ հողէն բաժնուած էր, ես ալ վերցուցի ոտքս ու չէի գիտեր թէ ճորս շաւիղն կը հետեւէի: չէի գիտեր թէ այդ վերջին անգամն էր Քէֆէրտէսը եւ Քէֆէրտիսի գեղանկին պիտի տեսնէի: Խարբերք եկայ: Այլ հետի էի մօրս սէրէն ու մայրիկին զգուանքէն: Երազներովս մի այն զանոնք կը վայլէի: Երազներովս նոն էի միշտ, կ'ամ կոճին զլուսը եւ կ'ամ տանիքին մէկ անկիւնը: Երբ կ'արթննայի՝ կը զգայի ցուրտ պարտանքը, կը զգայ թէ սրտիս հետ մինակ էի, սրտիս հետ որ ամուր կը սրտփէր:

Ես հետացայ զիս փայփայող մայրիկէն եւ այդ մայրիկը սկսաւ զիս ատել կ'աշիճ ըլլալ իմ սիրուս: Այլ մտոցած էր զիս եւ իմ գիրքս ուրիշներու կուտար: Ես հետի Քէֆէրտիսէն, հետի իմ մօրը գորովէն, երազներով կը հովհարէի: Ես հետի Շիրոյէն, անոր երկինքին ու ջուրին կարօտով կ'այրէի, կը յուսայի թէ Քէֆէրտիսի գեղանկին իմ քովը պիտի գար ու զիս զուարթացընէր իր նայրենիքին հրապոյրներովը: Բայց խարուած էի: չէի գիտեր թէ զիս սիրող մայրիկը, զիս իր աղջկան հետ համբուրող, ծնկանը վրայ օրորող մայրիկը՝ զիս մոռցած եւ սէրս ուրպացած էր:

* * *

Հիմա քանի որ Քէֆէրտիսի գեղանկին, անուշ աչուի, նուշ բերան, խնճօր երես աղջիկը կ'անհետանայ իմ աչքէն, աւելի կ'անուշանայ իմ աչքին, աւելի եւ աւելի կ'անուշանայ իմ երազները իրենց մորմօքիչ յոսախարութեամբը: Հիմա նէ ալ

կ'երազէ, նէ ալ զիս կը սիրէ, բայց մօրը դահիճ ձեռքին տակ պիտի կոխտէ իր սէրը: Հիմա զազոտուկ կուլայ, ինքն իր մէջ կը վառի, թաց փայտի պէս կը մխրտայ:

Ուր է՛ր մէջ մը երթայի, երթայի ու տեսնէի այն երեսները՝ որոնց չորս տարիէ իվեր կարօտը կը քաշեմ, տեսնէի այն երեսները որոնք օր մը համբուրեցի:

Հիմա ո՛ւր է նէ, Հիմա քիչ մը աւելի գեղեցիկ, փէշերը դօտին, սափորը փէճը՝ աղբուրը կ'երթայ ու կուգայ եւ իր ակնարկները՝ կոտորող լեռներուն մէջէն՝ իմ հետեւ կը հառաչէ: Ո՛ւր էր մէջ մ'ալ տեսնէի այդ բարկուկ հասակը եւ իւղ կապէի: Օր մը շատ տեսայ իս այդ աչքերը, բայց անոնց հմայքը չէի գիտեր ու Հիմա կարօտը կը քաշեմ այդ նայուածքին, սեւ թարթիչէն փախչող կապոյտ նայուածքին:

Այդ սեւ աչուի մարդոց մէջ ուրկէ՞ առաւ այդ կապուտիկ բիւրերը սեւ թարթիչներու մէջ: Նէ բնութեան գեղանկ զաւակն է: Արշալոյսը ամպիկներուն ճերմակ կաթովը լուաց երեսն ու մարմինը: Սեւ գիշերը սեփ սեւ մազեր հիւսեց զլուսն հետեւ, սեւ յոնքեր զրուս սեւ թարթիչներու հետ ճակտին առջեւը: Անտառները հիւսնալի հասակ մը տուին երբ վերջալոյսը չրթուանքն ու այտերը կարմիր կը նաշխէր: Երկինքը — Շիրոյի կապոյտ երկինքը նախանձեցաւ անոնց եւ ինք ուզեց գեղեցիկն էն հրապուրիչ մատովը օժտել: Երկու ցօղ կաթիցուց, որոնք երկու կապոյտ աչքերն եղան սեւ թարթիչներուն մէջ: Այդ կապոյտ աչքը երկինքին մանրանկարն է: Սեւ լեռներով եղբուրած, սեւ անտառներով գոգաւորած երկինքին նկարն է ու մարմինն էն հիւսնալի մասը:

Բայց ա՛լ իմ չէ Քէֆէրտիսի զաւակը, ա՛լ իմ չէ բնութեան հրաշակերտը, Ո՛վ գիտէ, ո՞ր կոշտ ձեռքին տակ պիտի փռչըրի, ո՞վ գիտէ ո՞ր ազէտ վայրի մարդու մը չուճովը պիտի թողմի: Նէ ալ, իր երկրի ազուորիկ կապոյտ ու կարմիր ծաղիկներուն պէս, իր շուք ձգած սեւը

պիտի բուրբ ու թոռմի եւ արեւ աշխարհը պիտի չտեսնէ:

Ալ իմս չէ այդ աղջիկը: Ամէն անգամ որ այս տխուր իրողութիւնը կը յիշեմ, գլուխս կը գառնայ, խեղքս կ'ողբուի, լալս կուգայ բայց չեմ կրնար լալ:

* *

Անցան տարիները, անուշիկ տարիները, Անոնք գացին ու սրտէս շատ բան գողցած տարին: Տա՛րին ինչ որ վայելք էր, տարին ինչ որ սէր էր ու հիմա սիրտըս թաց փայտի պէս կը մնայ: Այդ մարդերը խաբեցին զիս. սէրս խաբեցին: Լա՞մ, ի՞նչ օգուտ, դանգատի՞մ, ո՞վ կը լսէ: Վազեմ երթամ չունչս վարպետ Սալօն դո՛ւնն Կաննեմ ու Մարօէն Սղաս՞ու ուզեմ: Ալ ուշ է, շա՛տ ուշ:

Գու բարեկամ, Շիրոցիէն այս չէիր յուսար, մանաւանդ Շիրոցի կնոջմէն. որ մը ես ալ չէի յուսար. հիմա իրականութեան դառն փուփին մէջ կըզգամ թէ ոտքերս կը սառին եւ սրափուկ մը մարմինս զոջ կուտայ:

Անա բարեկամ, տէրտէրի ձայն չլսող ժողովուրդը այսպէս է, աղանիթի պէս ձեզ կը սիրէ եւ եթէ քովէն հեռանաս, քու տեղդ ուրիշ մը կը գտնէ: Չաղօթող սրտերէն վախցիր, շատ վախցիր: Փափուկ են ացդ կանացի սրտերը, գեղեցիկ են անոնք, ինչ որ այդ սրտերուն կը պակսի աղօթքն է:

Շ Ի Ր Օ Յ Ի Ա Ս Գ Ր Ա Ս

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Ա Ռ Ի Թ Ե Ա Մ Բ Ս Տ Ա Ց Ա Ն Բ

1. Բրոֆ. Ժօզէֆ Քարսթի Aussprache und Vokalismus des kilikisch-Armenischen որ Աթրազպուրկի Կայսր-Վիլնէլի Համալսարանի առջեւ յիշեալ ռօֆէսէօտի խօսած թէզն է, գեղեցիկ ուսումնասիրութիւն մը կ'ըլլիկեան գաւառաբարբառին վրայ:

2. Երեւանի Հայոց բեմական հոգեւոր դպրանոցը եւ հասարակութիւնը, զորք բժիշկ Սիմէօն Շահ-Նազարեանցի Տեսուչ նոյն դպրանոցի:

4. ձառ. դպրանոցին ներկայանալիս, զորք նոյնին:

4. Գպրանոցի աշակերտներին մի քանի խրատներ՝ նոյն:

Հ Ո Գ Ի Ն Ե Ր Ո Ւ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ն Կ

Թ Պ Ա Պ Է Ս Բ Տ Ի Կ Ը

Ա.

Յուշատետրին մէջ դրած, Թղթէ սիրտ մը կարմրուուն, Մասունքի պէս էր պահած, Գեղջուկ աղջիկ մը սիրուն:

Դարս չունէր նէ, կամ թէ վիրտ իր մէկ տեղը ցաւցընող. Բայց իր նայուածքն, ա՛յ, ընդ մըշտ Ամէն սրտերն հանէր զոջ:

Ու միշտ անշարժ, սեւեռուն Աչքը թղթէ սրտիկին, Ձիյտեմ ինչո՞ւ աղ առտուն Առատ արցունք հոսէին:

Մտեցայ ես ներս քով Մտերսի պէս հին օրի, Ակնածանքի լուռ դէմքով Գաղտնիք կորզիլ փորձ բրի:

Ու նէ խորխտ շարժումով Կուրծին հեւքէն կատաղի, Թղթի կտորն ինձ առաւ Թրջուած շիթովը դա՛նս աղի:

Օ՛հ, առաջին կպումէս կարմիր սրտին՝ ցունց մ'առի, Ու աչքերէս, անոր պէս Արիւն հուէր անարի:

Այդ թղթի թերթն աննշան Ինչ գագառնիքներ անասիկ Ունէր, սարսղ զիս այնքան Պատում՝ ձեզի... աւասիկ:

Բ.

Չուխտակ սիրտեր օր մը իրար սիրեցին, Սակայն անգութ պարկաները չարակնած Գերանդովով վերջ մը տուին... ու բաժնած Պարմանն ու կոյսն, լուկ օր մ'իր ուր սիրեցին:

Ու բաժնուող սէրն ետեւէն իբր ա-
ւանդ
Թղթի կարմիր թեթ մը թողուց աղջիկին,
Որուն վրայ իր մատները գրեցին
Սա չհշտերը - սե հառաչներ, իբր աւանդ

* * *

Հիւանդութեանս անկողնին քով վշտա-
դարբ (*)

Աղօթելու հարկաւ գայիր, Գիւլիզար,
Անձանօթին որ ողջ պահէ միշտ քու ետք
Որպէսզի, մենք իրար վայլենք սիրատարփ:

Սակայն աւա՛ղ այս տաժանքի օրերէն
Անդին ես չեմ տեսներ արև նոր կեանքի
Սիրտս հալումա՛յ հողիս տարտամ կը
յանգի՛ . . .

Ու չպտի ես սիրերդ հիւսեմ քեզ նորէն:

Բարով մնաս, իմ պաշտելի Գիւլիզար,
Վերջին սիրոյս յիշատակը թող ըլլայ
Թղթ է սրտիկն՝ առ պահէ գուն կուրծ-
քիդ վրայ,
Երկնքու մը օր մը տեսնենք պիտ'իրար:

Գ .

Բախտը փոխեց իր ընթաց
Ու ծիծաղկոտ Մայիսին,
— Հովեր կեանքի սրբեթաց —
Օրեր բերին մահի, սին:

Շատոնց արդէն մոռցայ ես
Գիւլզարն ու իր արցունքներ
Եւ իւր նայուածքն, խոնարհ հե՛զ
Շուա անցաւ զերդ երազներ:

Բազըր փոխեց իր ընթաց
Ու ծիծաղկոտ Մայիսին,
Հովի նման սրբեթաց
Յաջորդեցին օրեր սին:

Ու երէկ մահն զժողովներ
Յաղթանակեց լու՛ս անձայն,
Եւ սեւազգեստ Տէրտէրներ
Յանձնեցին սեւ հողին զայն:

(*) Վշտով դարբնուած:

Շատ հառաչներ, ինձ ըսին
Իր ոսկորէն հաներ է,
Աղու նայուածքն իր վերջին
Արցունքով մը փակեր է

Գերեզմանի մուտք փոսին
Մէջ՝ դէմքն հեղ մ'ալ ես գտայ,
Մեռած չէր նէ, սուա ըսին
Հրեշտակ մ'աւաղ որ հեւք տայ:

Ու մատներուն նրբաւարտ
Միջեւ տեսայ թղթ է սիրտն .
Փոսին մէջ իսկ, ինչո՞ւ արդ
Անկից բաժնուիլ չէր կարող:

* * *

Տա դիմացի հողակոչտին լայնատակ
Ներքեւն աղջիկ մը անխըռով կը ննջէ
Մասունքի պէս կրծին սեղանձ, դեհ գուցէ
Կարմիր սիրտ մը՝ իր սիրածին յիշատակ

* * *

Երագիս մէջ երկինքն էի գնացեր
Ու սուրբերուն բոլորին մէջ, ես միայն
Երկու հողի տեսայ ուրախ անվեհեր
Մին Գիւլիզարը, միւսն ալ իր սիրական:
Խարբերդ-Մեգրաւ Խ . ՔէնճեճեԱն

ԲԱՐԵՓՈՒՆՈՒԱՄ ԵՐԳ ՄԸ

Հանրածանօթ թէլայաճառ Եւզլուու-
եան Խազաղեան Տունը իր յաճախորդ-
ներուն հաճելի անակնկալ մը ընկու
համար, մասնաւոր աուփերու մէջ զետե-
է ժողովրդական երգերու հատուածներ,
որոնց մէկն է հետեւեալը՝ արևելեան
երկիրներու մէջ զօղարիկ եղանակով
ծանօթ:

— « Հնդկաստան ընտիր տեղ է
Ջուրն ալ հիւանդի զեղ է
Դաւաթ գաւաթի վրայ
Խըմեցէ՛ք, շատ համեղ է,
— Ու մի ու մի առէք թէյը տաք,
Պարպեցէք մինչեւ յատակ
Գըձովի կամ կըծովի (*)
Դաւաթ մ'ալ ինձի կուտաք, և այլն:

(*) Գրձովի՝ թէյին շաքարը գաւաթին
մէջ ձգուած, իսկ կիծովի՝ շաքարը աղ-
ուաներուն մէջ առնելով խմել թէյը:


ՄԱՆԿԱՆ ԵՐԱՁԷ

Քեւեռուն մէջ գիեւեռւան
 երբ ես նստեցիս լեռին,
 եւ պղպղղում լուսնկան
 երազիս մէջ տեսնէի,
 եւ կ'ուզէի, երկնից մէջ
 Բընակարան մ'ունենայ,
 Ուր վառէին յոյս անտեղ.
 Վա'րդ, զոյնզոյն ամենին ալ:

Ուր ծաղիկներ ծրլէին
 Սփռելով միջ անտե հոտ,
 եւ բռչնիկներ երգէին
 Խուսիք խուսիք բառած մեզի մօտ:

Ո'ն, ես ալ հո'ն կ'ուզէի
 Ուր՝ ինձի՝ տան մէկ նոփ-նոր
 Քնար եւ ես երգէի՝
 Մայրիկիս հետ ամեն օր:

ԼԵՒՈՆ ՍՐԱՊԵԱՆ



ԿՐՈՆԱԿԱՆ

ԲՈՂՈՔ. ՀԱՅՏԵՐՈՒ ԵՐԳԱՐԱՆԸ


Մեր Բողոքական Հայերուն երգարանը
 ժամանակէ մը ի վեր նիւթ եղած է
 խօսքի ու գրի. շատ անգամներ, այլ և
 այլ թերթերու մէջ կարդացինք այս մա-
 սին թեր ու զէմ կարծիքներ, որոնք կը
 յանդէին միակ կըրակացութեան՝ երգա-
 րան մը ունենալու պէտքին: Առաջիկ-
 մասէրներ (այսբառին «պարագայական»
 առումով) գտնուեցան որ առաջարկեցին
 դառնալ հինին, մայր եկեղեցիի շարա-
 կաններուն և անոնցմէ ընտրանք առ-
 նել և ըստ պատշաճի ու պարագայի եր-
 գել թէ՛ ժամասացութեան տտեն, թէ՛
 հոգեւոր ուրիշ աոթթներու մէջ, Հիմա,
 Աւետարեցի վերջին թիւերէ մէկուն մէջ
 նոր գիւտմը կ'ունէ խելօք աղբօրը մէկը.
 կ'առաջարկէ sur commande երգեր յօ-
 րինել: Նորասիրութիւնը ա՛յսքան զար-

գացած է: Չէ՛, ասոր մէջ ծաղրելիօրէն
 ստակալի յամառութիւն մը հնչմանը կա-
 րելի չէ՛, առջի գաղափարը՝ հայ. եկե-
 ղեցիի նախկին երգերը վերընդունելու
 առաջարկը՝ արդէն սիրտ տաքցող մեր-
 ձեցման կապի մը առաջին հանգոյցը կը
 սեպէինք ու նոյն իսկ ամենէն մոլոր-
 անդ թունդ բողոքականներն ալ կը հաչ-
 տուէին այդ փափաքին հետ, զի անոնց-
 մէ շատերը եթէ ոչ յայտնի՝ զոնէ սրտին
 խորէն գաղտագողի(ախ) մը կը քաշէին
 յիշելով որ ստիպուած են՝ օտար միսօ-
 նարներու աղղեցութեամբ՝ կէտ դարէ ի
 վեր մոռնալ այն պատմական ու պատ-
 ուական, հոգեւունջ ու հոգեպարար, սըր-
 տաչոյց անմասն շարականներն ու երգե-
 ցողութիւններն, որոնք այսքան զարե-
 ցուեց տուած են քրիստոնեայ սրտերու՝
 հայ եկեղեցիին երկնաբերձ ու խնկարոյր
 կամարներուն տակ՝ և այդ շինիչ ու ըս-
 փարար երգերուն ու տաղերուն փոխա-
 րէն, այն պաղ, տափակ ու անյոյզ եր-
 գերը՝ անզգած ու անտարբեր ոգիով եւ
 մանաւանդ օտարտօի խաղերով ու շեշ-
 տերով կրկնելու. երգեր՝ որոնք կարծես
 հայուն անծանօթ՝ օտար Աստուծոյ մը
 ուղղուած են, որոնք սրտէն չեն բղխի,
 որոնք հոգիին ցաւերը, մորմոքները, ար-
 ցուքները, իղձերն ու մաղթանքները
 ճշդիւ չեն պատկերացնէր, անոր համար
 որ անոնք թարգմանութիւններ են ու
 շատ անգամ անհոգի ու բառացի թարգ-
 մանութիւններ, նման գորէթի մը կամ
 լեռնամէջի մը տուած արձագանքին՝ մի-
 օրինակ ու անիմաստ. Բայց Աստուած
 չիտրեր որ իրեն հետ թարգմանածոյ լիզ-
 ուով խօսինք: Ան կ'ուզէ որ ամէն ա-
 րարած ու մանաւանդ մարդ էակ խօսի
 ինչ որ իր ներսիրտին ու իր հոգիին ա-
 լիքներէն կը բղխի, ու բացատրէ իր իսկ
 հասկըցած լեզուով ու ոճով. թոչուն
 իր ճուռղիւնով, ծառերն իրենց սօ-
 սիւններով, զազանն իր վայնատունով,
 վայրենին իր զաղալակներով, կոտպաշտ
 իր վանդիւններով, եւ այլուն, հոգեւոր
 երգ որ քու և իմ հազագէս կը բղխի
 պէտք է որ մեր լեզուովն ըլլայ, մեր

(*) Շողոզուն ու փալկուն:

զգացածին ճշգրիտ ու հաւատարիմ թարգմանն ըլլալ : Դո՛ւն ալ , ո՛վ բողոքական եղբայր , լա՛ւ է որ հնչեցընես ինքնարուխ վանկերն մայրենի բարբառիդ ու նախահայրերուդ հոգեկան զգացումներով , սուրբ անչեքով լեցուն մաղթանքներուն շնորհալիին շնորհքով ակաղձուն շարականները , նարեկացիին անձնուրաց ձայները հատաչանքի և ողբերու , այն ամէն անուշ մեղեդիներն ու քաղցրանուագ փեղեղանքը որոնց զանաւլզ , զորոնք վերնդունելոյ քեղի համար պարծանք համարելու էիր : Կէս դար է ա՜նա որ փորձեցիր օտար պատուաստով կանաչցընել ծաղկեցնել հայաբուն տունկդ , ու փորձը ցոյց տուաւ թէ՛ այդ պատկիւնւմը ըսաւ զազգեր , հիւ՛թ ու սնունդ չի տար քու ծառիդ , որ կը մնայ ազգուն , անձիլ ու անծաղիկ , Դարձի՛ր ուրեմն քու նախնական ու ընամոյն մի՞նչոլորտիդ ու հողիդ ուր պարարտ սնունդ պիտի գտնէ ու ծագած հողիդ : Միժաղելի չէ՞ իրօք «պարագային համեմատ» , «սպասարուած» երգեր նոր ի նորոյ յերկրելու գաղափարը : Չկայ՝ հօգեւոր պարագայ մը որուն համար մեր երանանշնորհ նախնիքները նուիրագործած ըլլան սքանչելի տաղ մը , աղօթք մը , մաղթանք մը , աղերս մը , երգ մը , շարական մը , գանձ մը որոնց հաւատար յոյզ ու եռանդ , զմայլում ու խանդ , վերացում ու սփոփանք՝ չէ՛ , չպիտի գտնես ո՛չ մէկ լեզուի մէջ , ո՛չ մէկ թարգմանածոյ ու հետեակ երգի մէջ :

Ս. Գ.



Ի ՆՊԱՍ ՆԻՍԱՆԻ ՌԻՍՈՒՅՁԻՆ[1]

Տէր Խմբագրապետ ,

Չեր խմբագրական ազդու յօդուածը որ հիւանդ ուսուցչին նուիրուած էր , ինչպէս թիրեւս ամէն տեղ , հօս ալ իր սեղը գրաւեց և Չեր թելադրութեան համաձայն հանգանակութիւն մը կատարուեցաւ որուն արդիւնքը կը լրկուի :

(1) Դաւիթ Չէ՛ք . Սարգիսեան որուն վրայ խօսեցանք նախորդ թիւերով . Մ. Խ.)

Հանգանակողներն իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն ամէն անոնց որոնք չլլացան իրենց բաժինը վճարելու՝ օգնելու համար թշուառ բայց արժանաւոր ուսուցչին : Անուններն են


Պ. Եարման 4,75 դր. Պ. Գօճահան 4,75. Պ. Մակարեան 4,75. Պ. Փափազեան 4,75. Պ. Դանիէլեան 5: Պ. Կիւլպէնկեան 4,75. Պ. Օզանեան 4,75: Հօկայեան 25, Մանուշարեան 4,75 ու փոքրներն

Պ. Ապտալեան Լ . 4,75. Պ. Ապտալեան Մ. 4,75. Պ. Եաղուպեան 5,75 Պ. Աւագեան 7,75. Պ. Պալապանեան 4,75 և ուրիշներու կողմէ 38 դր.:

Իսոր գումարը կը հասնի 130 դրչի : Մանաւոր շնորհակալութեան արժանի են փոքրիկները որ շատ օտառաձեռն գտնուեցան բաղդատմամբ չափահասներու : Կը զովմէ իրենց աշխիւ զգացումը ու կը փափաքիմ միշտ այնպէս տեսնել :

Իզմիրի Հոգատար-Որբանմա ընկերութիւնը հրատարակած է իր տարեկան Տեղեկագիրը (1898 Ապրիլ 1—1899 Մարտ 31) որ կը պարունակէ իր հասոյթներուն ու ծախքերուն մանրամասն հաշիւը , եւ իր խնամած 35 որբուհիներուն զպրօցական դիժակացոյցը : Նոյն շրջանին մէջ ընկերութիւնը զանազան աղբիւրներէ մուտ ունեցած է նախորդ տարուան պատրաստէն զատ , 109,554 դր. (մէճիտը 33 դր.էն) եւ ելի՛ 99,955 դր. պատրաստ դրամ ունենալով 21,017 դր. :

Կանոնաւոր համարատուութիւն մը միշտ օգտակար է բարեգործական ձեռնարկներու զարգացման , եւ ուրախութեամբ տեսանք որ , Իզմիրի թեմերէն զատ , կառավարական շրջանակներն ու օտարազգիներն ալ իրենց նպաստը բերած են այս Որբանմամ Հաստատութեան :



Բ Ա Ր Ո Ց Ա Կ Ա Ն
Գեղեցիկ եի ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Ա.

(Կենսական փորձը)

— Չկայ չար ու չկայ բարի , այլ ա-
նոնց մէկին կամ միւսին տեղի տուողը
մարդ ինքն է :

— Դառնութիւնը չճաշակողը՝ քաղց-
րութեան համը չի գաբար :

— Զատրդութիւնը ուրիշ բան չէ ,
բայց եթէ յաջողութեան աւետարբեր . ով
որ օգտուիլ չգիտէ անկէ , նա ինքն է
բուն իսկ թշուառութեան պատճառը :

— Շողեարժ մեքենայ մը , որ բաղ-
կացած է հազարումէկ կտորներով և իւ-
րաքանչիւր կտոր շինուած է ու դասա-
ւորուած է իր մասնաւոր դերը կատա-
րելու համար — մէկը ներս , միւսը՝
զուրս , մէկը զօրեղ , միւսը՝ տկար , մէ-
կը փայլուն , միւսը՝ սեւ , մէկը մեծ ,
միւսը՝ փոքր — եթէ տկարը ուզէ զօ-
րեղին գործը կատարել , ներսինը դրսի
կողմը լինել , որ աշխի առջև լինի ու
երկուայ , այն ստեն յայտնի է որ մեքե-
նան փոխանակ իր նպատակին ծառայե-
լու , կը խորտակի և կամ բնաւ չի գոր-
ծեր :

— Գործնական իմաստութիւնը , կ'ըսէ
Ս . Սամյա , միմիայն կենսական փոր-
ձով ձեռք կը բերուի : Օգտակար են խոր-
հուրդներն ու խրատները , սակայն առանց
կենսական փորձառութեան՝ անոնք կը
մնան լոկ տեսական գիտելիք :

— Անհրաժեշտ ճշմարտութիւն մ'է ,
որ իր ձիրքերուն արժէքը զիտցող մար-
դը բնաւ լիմար բան մը չ'ընէր , ու խե-
լօք բան մ'ալ բնաւ չի ընէր՝ իր ձիր-
քերը ուրացողը :

Սվիճք

— Դուք միայն այն գիտէք , ինչ որ
կրնաք ընել . բայց քանի որ չիմտնաք
թէ ինչ չէք կրնար ընել , ո՛չ ձեր ներ-
քին աշխարհը ճանչնալու հնար կ'ունե-
նաք , ո՛չ ալ նշանաւոր բան մը գործե-
լու կարողութիւնը : Ֆիլիփիկոս Պետրէս

— Ո՛վ որ երբէք իր հացը արցունքով
կերած չէ , ո՛վ որ երբէք ծանրաթախիծ

գիշերներն իր անկողնի մէջ լալով չէ՝
անցուցած , նա ձեզի չի կրնար ճանչնալ ,
ո՛վ երկնային զօրութիւններ : Կեօթ

— Կանական առաքինութիւնները մեծ
գին չունին : — Մեռութեան մէջ կեանք
վարողը լոկ իր անձին կը ծառայէ : —
Առանձնութիւնը շատ անգամ մերձաւո-
րի արհամարհութեան նշան է , շատ ան-
գամ ալ աննոցութեան , երկշտութեան
ու անձնահաճութեան ապացոյց :

Ս . Սամյա

— Ժամանակն ու ես որսւ ըսես կը
յաղթենք : Լազարին

— Ժամանակը ձիւար մ'է , որուն կը
սանձահարէ երկտառարդութիւնը :

ձօճ Հեռագր

— Ո՛վ որ կառած է չքաւորութեան
և աշխատանքի դաժնութեան հետ , ա-
ւելի ամուր ու փորձաւոր կը լինի , քան
թէ նա որ մնացած է կառէն հեռուն՝
պարենակիր սայլերուն մէջ , կամ թէ
անհոգ նստած է տունը՝ բաւականանա-
լով միայն պատրաստի հաց սուտելով :

Կարիշի

— Ես չքաւորութեան կրնամ ըսել՝
գալի բարի՝ , միայն թէ կեանքիս վեր-
ջին օրերը չի գայիր :

Բիթեր

— Կարիքները շատ զօրեղ շարժիչներ
են : Ամբողջ տարի մը ես ապրեցայ մի-
այն վիճակին հետ և շատ երջանիկ էի :

Միօրի

— Եթէ կեանքը հանապազ արեւու
ճառագայթներով լուսաւորուած՝ մշտ
անսուպ , անվիշա և անտրտուժ վայելե-
ներով առատ լինի , — այդ կեանքը ըլ
լինիր , գոնէ մարդկային կեանք չլինիր : —
Մեր գործն այս աշխարհի մէջ աւ-
արտեղէ յետոյ՝ կը մեռնինք շերամի պէս
որ արդէն իր բոժոժը կապած է : Սակայն
որքան ալ վաղանցուկ լինի այս կեանքը ,
դարձեալ ամէնքս պարտական ենք ձեզ .
տիլ գոյութեան մը ամենաբարձր նպա-
տակին , եւ երբ որ այնպէս ընենք , մար-
մինս երկրորդական բան կը դառնայ իսկ
հոգին որ անմահ է՝ առաջին :

Ս . Սամյա

Թարգմ .

ԿԱՅՏՈՒԿ

ԳՈՒԴԱՐՈՒՄ ԵՒ ԲԱՅՈՒՄ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՏԳՈԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

Հայերէն Բիւրօնին ւրադիրը կանոնի հակառակ վարուած ըլլալով՝ այսօրուընէ սկսեալ անպայման կերպով դադրած է :

6 Դեկտ. 1899 Կեփ Տպագր. Տեսչութեան

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Տպագրական Տեսչութիւնը բարեհաճած է նոր հրամանագրով մը վերստին արտօնել «Բիւրակն»ի հրատարակումը եւ ըստ այնմ՝ երեքշաբաթի դադարէ ետքը, կը վերըսկըսինք Գերթը կանոնաւոր կերպով հրատարակ հանել :

Բացուած է բաժանորդագրութիւն

Բ Ի Ի Ր Ա Կ Ն Ի

1900

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՍԱՐ

Տարեգին	50 դրու
Վեցամսեայ	30 »
Արեսաահման	15 Քրանք
»	6 ռուպլ

ՎԱՐՁԱԿԱՆ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Թերթիս իրրեւ բաժանորդագին նամակագրույմ զրկողներէն դարձեալ կը խնդրենք որ յիշեն թէ Աւետաբերի ամբողջ տարեկանը վճարելու համար զըրկելու եւ մէկ դահեկաննոց երեսուն նամակագրույմ, կամ անոր համարժէքը Գիտենք թէ մեր բաժանորդները նամակագրույմ գնելու ատեն մէծիտիչն տասն եւ ինը դահեկանէն կուտան, բայց մենք չենք կրնար այդ հաշուով ընդունիլ նամակագրույմները Ապա թէ ոչ լիստ կը քաշենք, եւ որովհետեւ մենք արդէն մեր թերթիւն համար մեր առածէն շատ աւելի ծախք կ'ընենք, այս կորուստը չենք կրնար յանձն առնել :

Դարձեալ, կը խնդրենք բաժանորդներէն որ նամակագրույմէ տարբեր թըղթագրույմ (փուլ) չըրկեն, քանզի չենք կրնար առանց լիստի ծախել զանոնք : Աւետաբեր

Նոյնը « Բիւրակն » քանիցս կրկնած է, ու այս անգամ ալ շեշտելով կը կըրկեն : Միանգամայն կ'աւելցընէ թէ փուլ պարունակող նամակները պէտք է ապահովագրուած ըլլան : Առանց ասոր, պատասխանատու չենք, եթէ կորուստ պատահի :

Կը շարունակենք

Բիւրակնի 50րդ թիւը մամուլի տակ էր արդէն, երբ Տպագրական Տեսչութենէն ստացանք, 6 Դեկտ. թուակրով, առժամեայ դադարման հրամանագիր մը : Այսօր, նորէն շարունակելու արտօնութեամբ կը վերսկսինք հրատարակել Բիւրակնը, եւ, որպէս զի մեր ազնիւ ընթերցողները ոչ մէկ կերպով աօրթ չունենան զժողովուրդ, այս օրեր կուտանք երեք թիւերը, որոնցմով կ'ամբողջանայ 1899 տարեշրջանը : Ըսել

է, երեք շաբաթի յապաղումը իսկապէս չի վնասեր թերթին կանոնաւոր հրատարակման:

Առաջիկայ 1900 թուականի Յունուար 15էն սկսեալ անընդատ պիտի շարունակուի Բիւրակեր, համաձայն մեր նախնիս խոստման եւ Մրազբին զոր կարելի եղած սահմանին մէջ գործադրելու ջանացինք չթերանալ:

Հոս՝ պէտք կը տեսնենք կրկնելու թէ ինչպէս նախորդ շրջաններուն, առաջիկային համար ալ Բիւրակերի հրատարակութիւնն ապահովուած է նիւթապէս:

Ուրիշ առիթներով յայնանոց ենք արդէն թէ գծարդաբար կարելի չէ եղած զուտ ազգագրական, բանահիւտական եւ լեզուաբանական Հանդէսի մը նկարագիրը պահել, եւ հարկ եղած է տանցմէ զուրո՞ նիւթերու ալ տեղ տալ՝ գոհացընելու համար ընթերցողներու ստուար թիւի մը ճաշակը՝ որ կը զանազանի՝ երբեմն իրարու անհաշտ ըլլալու աստիճանն Այսպէս, ոմանք բնաւ համ չեն առներ նոյն մասնագիտական նիւթերէն, եւ կը պահանջեն զրական, գիտական կամ կրօնական բարոյական, եւ կամ քաղաքական եւ ուրիշ ճիւղեր: Մենք, առանց ուրանալու այս ճիւղերուն ալ օգուտն ու շահեկանութիւնը, պէտք կը զգանք շեշտելու թէ այն նիւթերը զորոնք նախամեծար կերպով կ'ուզենք մշակել՝ ազգագրութիւն, լեզուաբանութիւն, բանահիւտութիւն, տեղագրութիւն, ընկերաբանութիւն եւն, ոչ նուազ կարեւոր են, ոչ նուազ օգտակար են, ոչ նուազ շահեկան են՝ հայ իմացական գարուցիկան համար: Փոյթ չենք ընել որ այս ուղղութիւնը նիւթական հրատարակչին ընծայել, բայց յստան ենք թէ առաջադին պէտք եղած կերպով ու զոնէ բարոյապէս պիտի գնահատուի այս ուղղութիւնը:

Եւ այսօր, երկու տարուան փորձառութենէ ետքը, հասնելով Գ. շրջանին՝ կը տեսնենք թէ կամաց կամաց մտքերու հոսանքը կը դառնայ մեզի համակարծիք ըլլալու, եւ ժողովուրդը, կամ զոնէ այն մասը որ կը սիրէ զրականութիւնը եւ

անոր միջոցաւ որտի ու մտքի մտնող ու զարգացում կը փնտռէ, տակաւ կ'ըմբռնէ Բիւրակերի գրական ոգին եւ անոր ծրագրին վերին աստիճանի շահեկանութիւնը:

Այս մտաւոր յեղաշրջումը, ինչպէս և Բիւրակերի սակաւ՝ բայց ուշագրաւ յաջողութիւնը արդիւնք է այն ազնիւ անջակցութեան զոր մեզի ընծայեցին մեծայարգ Աշխատակիցներն ու Գործակալները որոնց կ'ուզընենք մեր սրտազին շնորհակալութիւնը, Անոնց շնորհիւ հանրութիւնը անշուշտ աւելի եւս պիտի գնահատէ զոնոզութիւնը զոր յանձն առած ենք յարատեւութեան մէջ պահելու համար « Բիւրակեր »ը: Ու կ'առաջագրենք, նոր Տարին ընել բեզուն ու արդիւնաւոր շրջան մը՝ նոյնը մաղթելով ամէն բարի ձեռնարկներուն համար մեր ազնիւ ընթերցողներուն ու ազգին լըլութեան:

Ս. Գ.

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ՆԱԽԱՊԱՐԱՐՈՒՄՆԵՐ ԿԻՒՐԻՆԻ

1. Այրած հաց ուտողը զրամ կը գտնէ:
2. Անլուայ երեսով հացին ամանին չին մօտենար, թէ ոչ՝ հացին պիտեհերք (օրհնութիւնը) կը փախչի:
3. Աւագ չորեքշաբթի առաւօտ խիստ կանուխ՝ տնեցիներէն մին՝ առանց ուրիշին նետ խօսելու՝ կ'ելլէ տանիքնեքը կ'աւլէ, որպէս զի նոյն տարիին մէջ շարիք մը չպատահի իրենց:
4. Գեղեցիկ աղայ մը չար նազարէ պահելու համար, անոր օժիքը փուշ մը կը խոթեն:
5. Գիշերը ծիթ (սազըզ) ծամող մեռելի միս ծամած կ'ըլլայ:
6. Գլխէն կտրուած մազերը կամ կ'այրեն կամ պատին ծակը կը խոթեն, որովհետեւ եթէ կոխիբտուի, զլուսը կը ցաւի:
7. Եթէ աղջիկ մը եղունգով գետինը փորէ, հայրը կը մեռնի. եթէ կին մը փորէ, էրիկը կը մեռնի:

8. Եթէ անծեղը կարկաչէ, նոյնպէս եթէ ափին մէջը կամ կոկորդը մարմա- ջէ, լուր կուգայ ճամբորդէն :

9. Եթէ աջ աչքը խաղայ՝ կամ ճամ- բորդը կուգայ, կամ լուր մը, իսկ եթէ ձախ աչքը խաղայ՝ աղէկի նշան չէ :

10. Եթէ գիշեր ատեն հայելին նա- յիս, «կեմից պարմիւ կ'ըլլայ» կ'ըսեն :

11. Եթէ հաւը խօսի (եղգէ), աղէկ չին սեպեր, իսկոյն կը մորթեն զայն :

12. Եթէ նորածինը ծնած պահուն ափը բացած ըլլայ, կը նշանակէ թէ առատածեռն պիտի ըլլայ :

13. Եթէ պարագայ օրրանը օրրեն, նոյն օրրանը պատկող տղան կը մեռնի :

14. Երբ գարնան առաջին անգամ երկինք որոտայ, կոնակնին գետնին տուած՝ կը պտակն, որպէս զի «գուլինճ» չունենան :

15. Երբ կատուն «լուացուի», հիւր գալու նշան է :

16. Երբ կերակրի վրայ օտարական մը գայ, «ղայնանաղ քեզի ամուր կ'ու- գէ էղէրէմ» կ'ըսեն :

17. Ծրագրին պատրոյզը երբ քիթ բռնէ աղտեղութենէ՝ կը նշանակէ թէ հիւր պիտի գայ :

18. Երբ մէկը նստած տեղը բան մը կորանցնէ՝ եւ գտնելու համար ոտքի ելլէ ու գտնէ, «սատանան պոյիղ չափեց» կ'ըսեն :

19. Երբ մէկուն տան մօտը շուն ու- նայ՝ կը կարծեն թէ այն տան մէջ մահ պիտի պատահի. ուստի նոյն տան մէջ զանուղները կամ ոտնաման մը երեսն ի վար կը դարձընեն եւ կամ դանակ մը գետնի կը ցցեն, որպէս զի չլնասուին ոտնալէն :

20. Երբ նորածին մանկան մօր կաթը նուազի, խաշնարածին հաց մը կուտան, զոր մինչեւ իրիկուն հետը պտտցնելէն ետքը՝ կը յանձնէ նոյն մօրը, որ զայն ուտելով կաթը կ'առատանայ :

21. Երբ ոտք ելած մանկիկ մը կու- ռուտ երթայ (տողալ մանկան), նշան է թէ ճամբորդէն լուր պիտի գայ :

22. Երբ սատիկ կարկուտ տեղայ՝ թոնիրին խաչ-երկաթը զուրս կը նետեն

խաչակնքելով եւ «Տէր, դու խէրով անց- նիս» ըսելով :

23. Թոնիրին առաջին անգամ եփած հացը ուտողին կինը կը մեռնի :

24. Ծաղկազարդի կիրակին ամէն տուն հատիկ (կովլայ=խաշած ցորեն) կը խաշեն, այդ օր հատիկ չխաշողը շան զուլիս խաշած կ'ըլլայ :

25. Կերակրի ամանը սկրդելով փայ- լեցընողին աննելիք աղջիկը գեղեցիկ կ'ըլլայ :

26. Կերակուր ուտելու ժամանակ մէկուն ձեռքէն ինկած պատառը ուրիշը կ'առնէ. որովհետեւ եթէ ինքն առնէ՝ ճամբորդն ետ կ'երթայ :

27. Կերակրի սեղանը երկար ատեն փոռած չեն թողուք, «սեղանը կը դո- զայ, մեղք է» ըսելով :

28. Կտրուած եղունգը ամէն տեղ նե- տելը աղէկ չեն սեպեր, այլ ընդհանրա- պէս զբան ետին կը նետեն ըսելով՝ «առ ուղունկիս, տուր ըրգակիս» :

29. Նացը դանակով կտրելը նիք համարած են :

30. Հագած լաթին վրայէն բան կա- րել չեն տար, որ մի գուցէ զուրի (զրպարտութեան) ենթարկուի :

31. Մկրատին բերանը բաց չեն թո- ղուր, վախնալով թէ թշնամիի բերանն ալ այսպէս կը բացուի :

32. Նշանածին ձայնը լսող աղջիկը արքայութեան երես չի տեսներ :

33. Նորածին կաթընկեր տղայ մը երբ իր մատները ծծէ, խեղօք (բարե- բարոյ) կ'ըլլայ :

34. Նորածինը մկրտելու համար եկե- ղեցի տարուած ատեն, հետն ալ չունի- ճով (ըպրըք) տաք ջուր կը տանին, նոյն շունիճը տանող տղան եթէ ետին նայի, երախան չի կ'ըլլայ :

35. Նոր տարիի օրն (Յունուար 1ին) փըռնգտացողին «տարին զընաընեց» (գլտորեց) կ'ըսեն :

36. Եարաթ իրիկուները տուներու մէջ առհասարակ խունկ կը ծխեն. խունկ չծխուած տունը սատանայի բնա- կարան կ'ըլլայ :

37. Ոչիւր ողջ դուրս նենտելու չէ շան կը փոխուի ու կը խածնէ :

38. Չմիրտուած աղեկի մը երեսն համբուրողին ահուան չի ցաւիր :

39. Պատկած մէկու մը վրայէն անցնելու չէ, եթէ ոչ կարծահասակ կը մնայ :

40. Տապակի մէջէն կերակուր ուտողին հարսնիքին օրը աճերու կուգայ :

41. Տերնտէսի (Տեսանքնդատաջ) երկոյնի խածաղ (քոհրած ցորեն) ուտողը մատմուր (մոտացկոտ) կ'ըլլայ :

42. Տերնտէսի նախընթաց իրիկունը սովորութիւն է կրակ վառել ի ներկայութեան ժողովրդեան. ոմանք այլ վտուած փայտէն տուն կը տանին հետերնիին, որպէս զի տան մէջ գտնուած հաւերն սկսին հաւկիթ ածել :

43. Փիլու ուտողի մը զգալին վրայ եթէ փիլուը փլչի, նոյն մարդը կը մնանի :

45. Բառասունքի մէջ եղած նորածին աղու մը տունը եթէ բեռցուած անասուն մը գայ, աղեկը դուրս կը հանեն որ «բառասունք-կոխ չըլլայ» :

46. Բառասունքի մէջ եղող կին մը որ իրչին տան սեմէն ներս չ'անցնիր. թէ ոչ՝ աստանան կը շարփեն (շարփմագ) :

Կիւրին 2. 4. ՏԷՄԻՐ ԾԵԱՆ



ԳԻՏԱԿԱՆ



ԱԼԱՇԿԵՐՏԻ ՄԷՋ ԵՒ ՎԱՆԻ ՇՈՒՐՁԸ

1882ին մայիսի վերջերն էր, երբ հրածեշանի տարով Ս. Էջմիածնայ՝ Իկտիրի ուղեգծով կ'անցնէինք, և Ապասայի ընդարձակածաւալ հովիտը կը մտնէինք, ճամբուն վրայ գրեթէ զէս ու զէն դանաղան գոյներով հանքային ջուրերու և պէս պէս քարացած իրեզննեքու կը հանդպինք, որոնք արդէն ինձի ունակութիւն դարձած յամառ հետաքրքրութիւն աւելի կը սրկէին :

Ալաշկերտի և Վանայ սահմաններուն մէջ գտնուած հանքերու մասին՝ շարունակ կը հարցատրելի տեղացի ուղեկից զիտակցիկներուս, և լսածներս ու տեսածներս՝ մատարով խկոյն կը նիշէի ծանրաբեռնեալ աւանդական յուշատետրիս մէջ :

Ահա այդ պատասիկներէն մաս մը կը զրկեմ այսօր ձեզի՝ Բիւրակցի մէջ հրատարակելու խնդրանք, գոհութեամբ զիտելով որ այդ գրական հանգէսը, ազգագրական ամիսի ուղղութիւն մը կ'առնէ և հետզհետէ կատարելագործուելով մասնագիտական պարբերական մը ըլլալ կը խոստանայ, որ ոչ նուազ միութարական երեւոյթ մ'է՛ ինձ նման Հայ հասարակութեան և ազգագրութեան հում եւ կոյս նիւթերով զբաղողներու համար :



Ո՞վ տեսած ու չէ սքանչացած բնութեան թաքուն դանձերը, բնավայրի գաղտնիքներն ու տարբերքները :

Իւշ-Բիլիտէի դէմը գանուող նէվրուզ գիւղի կից լեռը՝ համակ բերեղացեալ սպիտակափառ քարանձաք է :

Տեղացիները՝ մինչև անգամ հայելի տեղ կը գործածեն այդ քարը, որուն նոյն երկրի հանէրակները՝ Աղուեսախար անունը կուտան :

Նոյնպէս, Իւշ-Բիլիտէի թիկունքը՝ Գումու-Պուճաղ գիւղի հարաւային կողմը եղած կեալրէկեալըք կոչուած բերդին կշտի խորունկ աւազուտ ձորակը ամբողջ՝ տեսակ մը մեծ և փոքր ապակիացեալ քարերէ կը բաղկանայ, ետանկիւն, քառանկիւն, մինչև յիսանկիւն սրածայր քարեր, որոնք կը յորջորջուին ադամանդ կամ էլմաս :

Այս քարերը՝ բնորոշ յատկութիւն մը ունին. իրենց սուր ծայրը՝ ապակի վըրայ երկու անգամ տարուերիբուելու ըլլայ, իսկոյն ապակին կը կտրի՝ ճիշդ ազամանդի մը հանգոյն :

Սոյն քարերէն՝ շատ անգամ մատանիներ և ուրիշ գեղարուեստական դարուղեր ալ չ'իւնուած, ծախուած են, բնու

չտարբերելով բուն աղամանդէն:

Գումուլու-Պուճաքի լեռը զարմանալի հող մ'ալ ունի, որուն մէջէն զարնան եղանակին տեսակ մը հիւթ կ'արտադրուի, և Ալաշկերտցիք իբրև արջասպի կիր կ'անեն:

Չմոռնանք Գումուլու-Պուճաքի Գերեզմանաձորի օձ-քարերը՝ որոց մէջէն տարբեր քարեր ալ կ'ելլեն, և երբ կըրակի վրայ դուրին՝ կանաչ ու կարմիր բոցեր արձակելով կը հալին, ջուր կը դառնան և կ'ոչնչանան:

Ո՛չ այշուտի:

Գումուլու-Պուճաքի Պաղ-Աղբիւրին բղխած ջուրի աւազը՝ ոսկիաւազով ու ոսկիի կտորներով խառն է: Նմանապէս, այդ աղբիւրին ներքեւի ձորակին մէջի հողը ամբողջ ոսկի կտորներով խառն:

Վերջապէս, այդ լեռը՝ դրեթէ ոսկեհանք է, չըսեմ ոսկելեռնակ մը:

* * *

Իսկ այս տեղերէն ղէպի հիւսիս, Նպատ լեռան ստորոտը, Ս. Լուսաւորչայ կայնած ու աղօթած քարին կոնակի լեռը դացէ՛ք, այցելեցէ՛ք: Հո՛ն պիտի զտանէք տեսակ մը կարծրահիւթ ու բնական տաշուած քարեր, որ պողպատն իսկ իբրև փոշի կրնան մանրել:

Տեղացիք՝ Լուսաւորչայ քար կ'անուանեն զայն, ուրկէ մայիսի մէջ արտասուածէ ջուր կը կալըկի, և ցաւոտ աչքերու մէջ կաթեցնելով՝ բուժիչ հանգամանք մը կը ստանայ:

Իւշ-Քիլիսէէն ղէպի արեւելք, Գարա-Պազար անուն զիւղին հանդէպ և Եփրատայ Ափունքը՝ հանքային ջրէ դոյացած փոքրիկ բլրակը զիտեցէ՛ք, զննեցէ՛ք: Ի՛նչ գեղեցկութիւն որ ունի մարտիրոնը, նոյն աղւորութիւնը և փայլունութիւնը ունի ամբողջ բլրակը:

Բլրակէն մէկ ժամ հեռու, փոքրիկ ձորակի մը զլուխ, որ Զիրաւ դաշտին մէկ անկիւնն է՝ ղէպի հարաւ, ահագին տարածութեամբ տափարակ դաշտի մը հողին տակ գոյացած քարը՝ բոլորվին մարմարին է, երբ երիւ կանգուն խորութեամբ փորուի այդ գետինը:

Յիշե՛նք Եփրատ գետի ակունքէն՝ ղէպի արեւելք, այն մեծ լեռը, որուն համար Քուրդերը՝ խօս անուն մը կուտան: Ահաւասիկ այդ լեռան մէջ՝ տեսակ մը ոսկեքարեր կան ահագին քանակութեամբ: Երբ փորձուիք այս քարերէն մաղ մը կրակի վրայ դնել, պիտի տեսնէք որ կապարի պէս պիտի վառի, հալի և միայն դիտող պիտի մնայ:

Սոյն հանքէն՝ ժամանակին բուսական բանեցուցած է ոսկի հանուած է:

Գարձեալ, Եփրատայ փունքը՝ Տիասին զիւղէն ղէպի հարաւ, կը գտնուին բազմաթիւ ծծումբի հորեր, ժամանակին շահագործուած են, և զարդիս ալ կարծուածէն աւելի չափով ծծումբ կը գտնուի:

Ճիշդ այս տեղը՝ հանքային տաք ջրերուն մէջ կը գոյանան մեծ քանակութեամբ՝ համրիչի ձեւով կլորակ ուլունքներ: Ասոնցմէ շատերը՝ համրիչ կը շինեն. երբեմն ալ՝ միզարգելութեան զեղ կը պատրաստեն:

Պաւսաղ ըսուած քարը, փողովուրդը զանազան վերքերու համար՝ իբրև ղեղ կը գործածէ, վերոյիշեալ ծրմբային հորերէն՝ ղէպի հարաւ, Ս. Ոսկեանց գերեզմաններէն վար — որ Եկեղեցուձոր կ'անուանուի — համակ՝ այդ պաւսաղ քարերէն է: Եւ երբ յղկուի, կոփուի, զոյնզոյն տեսակներ յառաջ կուգան նման սոմախ ըսուած ծանօթ քարերուն:

* * *

Պրպտենք քիչ մ'ալ Արճէշու կողմը: Գնէլայ ձորը, զոր Քիւրտերը Կեկեղեռան անունով կը ճանչնան, նոյն այդ ձորակի զլուխը՝ կը գտնուին կապարի և արծաթի հանքեր:

Ասկից քիչ մը վար՝ ղէպի Թոնդրակ անունով լեռը կը յառաջանանք, հո՛ն ալ ընտիր ուրիշ տեսակ քարեր պիտի տեսնենք, որոնց մէջը բամպակի պէս կակուղ բլրակուն տեղական բարբառով՝ բամպակաւար յորջորջուած են:

Այս հանքը՝ այժմ միմիայն Իոտսամ-

Աղայ անուռնով մէկը միայն գիտէ շահագործել :

Արճէշու մէջ՝ Իրիշատ գիւղին լեբան ստորաբը, և Աղսրբու գիւղի արեւմտեան կողմը, այգիներու տակ և անոնց շուրջը այնպիսի տեղեր կան՝ որոնք եթէ երկու թղաշափ փորելու ըլլաք, ստոնց մէջէն տեսակ տեսակ ակներ, ուլունքներ, և նախապատմական ազդերու վերաբերող զանազան ձևով պղնձէ, արծաթէ և ոսկեղէն էնութիւններ և զարդարանքներ կը գտնուին, կ'ըսեն :

Մեծօփայ Ս. Աստուածածնայ վանքի պարսպին քով գտնուած անագին լեռը՝ սեւ ու կարմիր սաթերու հանք է, որոցմէ մաս մաս կարին փոխադրուելով, սիլիկոնիկներ և կիներու յատուկ զարդեր շինուելով կը ծախուին :

Դարձեալ, Մեծօփայ վանքէն դէպ ի հիւսիս, Եսաբաշուր անուռնով աղբիւրին քով՝ հին աւերակ քաղաքատեղին մօտիկ, ստուար քանակութեամբ բաբանի յղկուած քարեր՝ ջիր ու ցան տարածուած են :

Անցնինք Ոստան գաւառակը : Եէյն-Սէյիմի գիւղը՝ արտին մէջի ոսկեհանքը անսած էք, ուրկէ հանուած և վանայ կառավարութեան ներկայացուած է պատմական անոր նմոշներ : Սակայն տեղական փայտի նուազութեան պատճառաւ, անոր շահագործութիւնը՝ անտեսագիտական տեսակէտով՝ տակաւին լուծուած է :

Ի Բերկրի, Գործօթէն դէպ ի ծանիկ գիւղը, ձորակ մը ամբողջովին՝ աղահանք է : Բայց մասնագէտները չեն շահագործեր, այլ տեղւոյն շինակաները՝ զարնան ջուրերէն կ'օգտուին : Երջակայ գիւղերը՝ իրենց անական պէտքին համեմատութեամբ, աղ կը հանեն սոյն հանքային ջուրէն :

Գանի մը քայլ դէպ ի առաջ, դէպի Ս. Աստուածածին գիւղը : Այս տեղին աղ քարիւղի կամ կազի հանքերու բնավայրերն են, բայց մինչև հիմա չեն շահագործուած :

Այժմ շատերը՝ ջրին երեսէն հաւաքելով զայնս, կը տանին, կը գործածեն իրենց պէտք եղածին չափ :

Կարճկատայ լեռն՝ Փութկի Ս. Գէորգին դէպ ի հարաւ, բոլոր լեռը հանքածուխ է, որ նոյնպէս շահագործուած չէ :

Գնա՝ ուղղակի՝ այս հանքէն դէպ ի Արեւելք, այն մեծ լեռը, ամբողջ յետանաքարի հանք մըն է, որմէ օգտուելով պատահական ճամբորդներ ու ջրեպաններ կը փոխադրեն զայն՝ Պարսկաստան, Ռուսաստան և այլ տեղեր :

Հապա ո՛ր թողունք այն պատմական Անգղայ վանքին պահարանին մէջ ծորած հրաշագործ քարիւղը, որ նոյն մենաստանին պէտքերը գոհացնելէ դատ, հարիւրաւոր բաբեպատ ուխտաւորներու եւ հետաքրքիր այցելուներուն ալ բաժին կը հանէր ու կը հանէ, որուն ականատեսներէն մէկն է և սոյն տողերը նիշող եւ ծրագրողը :

Ա. Այլպղեան



Մ Ա Տ Ե Ն Ա Ի Օ Ո Ս Ա Կ Ա Ն

ԱՆՏԻՊ ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ
ԵՒ ԱՆԹԻՇԱՏԱԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մանօթ է արդէն՝ թէ Հնդկաստանի Մադրաս քաղաքին մէջ, առաջին անգամ Հայերէն Տպարան հաստատուեցաւ 1772 թուականին, ջանքով և աշխատութեամբ Պարոն Յակոբ Շահմիրեանի, կամ Շահմիրեանի, կամ Շահմիրեանի իրեն աշխատակից ունենալով իր՝ և իր եղբայր Պր. Նդիապարի ուսուցիչ ու դաստիարակ Պարոն Մովսէս Բարթամեանը :

Նոյն տարին (1772) առաջին անգամ հրատարակեցին, «Նոր տեսակ որ կոչի յուղարակ», և յաջորդ տարին (1773) «Ռեզայք փառաց» անուն գիրքերը և 1774 ին ալ՝ կը կարծուի թէ՛ հրատարակած ըլլան Նզիկըն Առաջին երկու գիրքերը Պարոն Յակոբ Շահմիրեանի երկասիրութիւններն էին :

Պարոն Յակոբ Շամիրեանի վախճանումէն յետոյ, որ 1774 ին պատահեցաւ, իր եղբայրն Եղիազար Շամիրեան, զարձեալ իր դաստիարակին՝ Մովսէս Բաղրամեանին աշխատակցութեամբ, եւ Կարապետ Մկրտումեանի ծախքով, նոյն սպարանէն հրատարակեցին 1775 ին «Մեարոպ Երեց Պատմ. Մնացորդաց», եւ 1780 ին՝ «Պատմ. Դանմագի» անուն գիրքերը, որոնցմով նոյն սպարանէն, ինը տարուան միջոցին մէջ (1772-80), հինգ հատ գիրքեր հրատարակուեցան, եւ այնուհետեւ սպարանը դադրեցաւ գործունէութենէ։

Եւ սակայն, ճիշդ ինը տարիներ ետքը, 1789, յիշեալ սպարանին յաջորդեց, Հայ Լրագրութեան հիմնադիր եւ մեր ամենուս համար սիրելի ու մեծարոյ, Շիրազեցի Տէր Յարութիւն Շամուռնեան յիշատակաց արժանի պատուական Քանանայի սպարանը, որ շարունակեցաւ մինչև 1796 թուականը, եւ ի լոյս ընծայեց ռասն երկու գիրքեր, եւ նոյն թուականին արդիւնաշատ Քանանային վախճանումով, կ'երեւի, առ ժամանակ մը սպարանը դադրեցաւ, առ ժամանակ մը, կ'ըսենք, որովհետեւ գրեմք թէ՛ Շամուռնեան Քանանային սպարանէն, 1803 ին «Բառգիրք վոտրիկ» Անգլ-Հայ. եւ 1806 ին «Անգլ կամ գործք», եւ 1809 ին ալ «Մարմոքերի» անուն գիրքերն ու տեղեկագիրը հրատարակուած են(1)

(1) Տէր Յարութիւն Քանանայ Շամուռնեանի իր կենդանութեանը ժամանակ հրատարակած ռասն երկու գիրքերու անուններն են 1789 ին՝ 1. Վկայարանումութիւն Մարիանայ. 1790 ին՝ 2. Պատմ Փոքցիանոսի, 3. Սահմանաց Դաւթի, 4. Ողբ եւ այլն, 1791 ին՝ 5. Տաղարան փոքր՝ (Միմէնն Կաթողիկոսի), 6. Քերականութիւն Համառոտ (Պաղտասարի), 1792 ին՝ 7. Օրինակ Օրհնութեան թըղ-թոյն, 8. Յիսուս Որդի 9. Օրինակ հանդ-ծանուցմանց Ա. 10. նոյնը, Բ. 1793 ին՝ 11. Ներածութիւն պորփիրի. և 1794 ին՝ 12. Ազգարար լրագիր՝ որ շարունակուեցաւ մինչև 1796 :

Մադրասի յիշեալ երկու սպարաններու մասին այս Համառոտ տեղեկութենէ կտքը, կուղանք մեր վերնագրի նրպատակին, այն է՝ 1772 ին Շամուռնի սպարանէն առաջին անգամ հրատարակուած «Նոր ճետակ» անուն գրքի յիշատակարանին՝ որ կը կարծենք թէ մինչեւ ցայսօր անտիպ մնացած է, ծանօթացընել ազնիւ ընթերցողաց, որուն հրատարակութիւնն ալ կը կարծենք նսեւ թէ՛ պատմական նշանակութենէ զուրկ չէ՛ :

Յիշատակարանը — «Բան առ համայն բարեպաշտն ընթերցողսրդ Հայոց» «Երկայնամիտ լերուք ձերուքն խոնձուր — թթեմբ և Վանդի յաղնուութեանն ձերու մղ սպասու հարկեցեալ տենչիւ իսարոզս՝ յեանորդ եւ քան զամենեւեանն էկրտսերազոյն եւ ապիկար պատանիս, զայտ եւ զայտ կացուցանել, զի ըրդ սշարադրող եւ զսպագրող տետրակիս զգիտացնել, զոր ոչ զինքն յիշատակել զինախերոզանն ճա՛ վարկեաց։ Զի մի՛ ճշաւասար նոցա ընդ քանիրուն շարադրուողաց կարգն գրեցեալ այնու համարիցի, «այլ ըստ իւրումն նուաստութեան՝ պահելով զնոցին պատիւն՝ զոր ո՛նի յար թ'ի մտի, որ եւ զնա հարկեաց հուսկ յետոյ յաւարտ տետրակիս յիշել. եւ սերելի ի մէջ շարադրողաց նախահարց սիրեւ զնոցայն յոտից թօթիկեալ փռալիս՝ եւ անկեալ առաթուր ամենեցունացն, այսինքն է Յակոբ նոր Զուղայեցի՝ որդի Շահմերի՝ որդւոյ Մուլ. խանու մի որդւոյ Դաւութ խանի՝ որդւոյ Շահմուրեի որդւոյ Մուրառամանի Շամիրեանից կոչեցելոյ, ի քաղաքէն Նախիջևանու յաշխարհէն վասպ. մերոց մեծաւորաց ։ «Զոր մեծն Շահարաս վարեաց յաշխարհն Պարսից, եւ քնակեցոյց ի ամեծ գեղաքաղաքն՝ նոր Զուղայ կուղեցեալ, ՚ի գաւառին Ասպահանայ ։ «... Իսկ զկին ժամանակաց, իրրեւ յաճախեցան սաստկացան խիստ՝ խիստ զոյժ ազմուկ շիտիւն եւ խոտվութեան յաշխարհին Պարսից ամենուստ որովք էրկիրն սկսաւ օր քան զօր ամայնալ, ։

եւ ե հարուածահար ընակիչքն որպէս եւ
 ամբ մի իսկ եմք ի նոցունց, անկեալ
 յայնսարէն Հնդկաց, եւ ուր մինչեւ
 ցայսօր եմքս իսկ և Աստանօր խորհեց-
 ածեալ եմ, զօգուտ ինչ ըստ իմուսն հի-
 ւերնչ քան զայս բարեգոյն մարթացի
 ճայթայթել ըստ իմ վարձին, զոր ըզ-
 ճակերտեալ եմ մեծաւ ջանիւ եւ ան-
 ճանդիստ աշխատութեամբ. ինչ թիկունս
 զղկատարիչն համայն ինդրուածաց եւ
 յաւէտարուղիս աղբիւրն ամենայն բա-
 րութեանց կոչեցի զհոգին Սուրբ Աստ-
 առած, որ եկն եհա՛՛ ոռոգանելով
 «զպատեալ եւ զերթացեալ խնաւա-
 զորւի անդաստան պատկեալ բազմա-
 ճնացն իմոց, եւ զիս որով կազդուրեալ
 զօրացոյց, մինչեւ ընդ լրումն այս-
 քանիւք զայս զօրեցի հասուցանել ի-
 մոսով արդեամբքն եւ ծախիւքն, հան-
 ղերձ աշխատակցան իմով՝ այսինքն է
 Սոփաէս Բաղրամնանն, զոր եւ կան-
 թխագոյն ի նախերգանսն յիշեցի: Արդ
 յուսամք ընդ յուսաղիրն ընաւ վհատե-
 շտոց, զի զսա ըստ որում եւ մեր վար-
 ճուցեալ զոլ գուցէ՛ ինչ առիթ օգտու-
 թեան ազդիս մերում, արասցէ այնպէս
 զի միթարութիւն մեզ հոգւով եւ
 մարմնով Ապա եթէ ո՛չ՝ Տէր մի՛ արաս-
 ցէ գտանիցի հակադարձ ինչ մերումս
 զվարկման, յայնժամ ձեր եւ կամք՝ կա-
 ւորոջ էք աննել որպէս հանոյ իցէ ձեզ
 զգորքան ի ձեռս ի սետարկաց արկա-
 ճիցէք: Յաւել յայցանէ հայցեմք յա-
 մենտղորմ Մարգարիէն Աստուծոյ, զի
 զղկեանս ձեր բազմապատեալ ընդ եր-
 տկարս պարագայիւք ամօք համայն յա-
 ճողութեամբ եւ բարեբախտութեամբ,
 «յաւելցէ զՏէր եւ զմիաբանութիւն մեր,
 եւ զմայրենեացն նախանձայուղու-
 ճթիւն:—Այլ եւ ողջ լիւրուք ի Տէր, որ
 է օրհնեալ... և Նղեւ ի Չինափաթնամ,
 որ ի Մարդաս, Յամի Տեանն, 1773,
 «Եւ ի Թուրք Հայոց 1222»

Մատենան է ութխոսով, ունի 238 էջ.
 վերջին էջն ինկած էր մեր ձեռքը զըստ-
 նուած օրինակէն, սպաղորութիւնը միջին

զորձ է, բոլոր մատենին մէջ, սպաղ-
 րութեան ժամանակ, զ տարին տեղ, յ
 տասը զորձածուած է:

Անյիշատակ սպաղորութիւններ են՝
 Ա. ՇԱՐԱԿԱՆ,

Գրքին հակասք. — Գ+Ի+Բ+Բ+Ի,
 Շնորհօք ամենազօրին Աստուծոյ եւ ո-
 զորմութեամբ տեառն մերոյ Յիսուսի
 Քրիստոսի, եւ յօժանդակութեամբ հո-
 գւն սրբոյ պարգեւատի, ըսկեզքն ե-
 դաք երաժշտական երգս շարականաց
 գեղեցիկ յօրինեալ ի սրբոց մերոց վար-
 ցապետաց ՚ի լուսաւորութիւն եւ ՚ի
 պայծառութիւն Հայ. Եկեղեցեաց, ըստ
 աւուրց պատշաճին զտէրունեացն, եւ
 զսրբոց զօրհնութիւնսն, քաղուածովք
 եղաք զի մի ոք աշխատիցի որոնել,
 նաեւ զղիշերապշտօնսն, զտէրունեաց
 եւ զմարտիրոսացն, եւ զաւուր պատ-
 շաճօն իւր սարքն եղաք կարգաւ: Ի
 Հայրապետութեանն Տեառն Նահապե-
 տի Կաթուղիկոսի ամենից հայոց: Տպեց-
 եալ Յամօղէլոտամում քաղաքի: Ի Քուր
 Փրկչին, 1698ին, Յամեսեանն Յուլիսի
 ԻԲ. իսկ հայոց ՌձՆԷ, եւ Քրիստոսի
 փառք յաւիտեանս, ամէն:

Էջ 2. պատկերին Երեւելք. — Ո՛վ
 սրբուհի կոյս Մարիամ, որ յերկոտասան
 նահապետացն ճող օրհնութեան եւ ձառ
 կեանց անուանեցար բերելով մեզ
 զպտղն անմահութեան, հայցեմք ի քէն
 յաւարտ եւ յանդ հանել զսկսեալս մեր.

Յիւսաւկարան համառօս.— Շնորհիւն
 Աստուծոյ աւարտեցաւ ձայնքազս սրբ-
 րազրութեամբ Սահէթճի Սարգիս վար-
 ցապետի. եթէ գտանի սակաւ ինչ սղալ,
 ներեցէք, զի ոչ է գիտութեամբ այլ
 մոռացմամբ, եւ Տէրն թողցէ զողալա-
 նս ձեր:

Մատենան է քոռածալ, սպաղորու-
 թիւնը միջին տեսակէն, ունի 492 էջ,
 երկսիւնակ:

Բ. ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ.

ձակասք.— (Կրքութիւն) Քրիստոնէա-
 կանս Հաւաքեցեալ յուսմանն բանասրէ՛

համառոտարար վասն մանկանց անվար-
 ժից կամ թերալարժից: Ի թուականիս
 Հայոց ՌԻԺԶ (=1767). Օգոստոսի ԺԵ,
 Յիսասակարանը. — Օրհնութիւն Գո-
 հութիւն եւ Պատան հանդերձ երկրպա-
 զութեամբ ամենատուրը երրորդութեան
 եւ միոյ Աստուածութեանն Հօր եւ Որդ-
 ւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Որ բարեխօսու-
 թեամբ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լու-
 սաւորչին, եզերացեալ վերջացաւ փոք-
 րիկ զբրբուկս ի վայելումն մանկանց
 Հայ եկեղեցւոյ:

Տետրակս է փոքր ութածալ, ունի
 32 էջք, տպագրութեան տեղին յայտնի
 չէ, բայց թուի թէ՛ Կ. Պոլիս ըլլայ:

Գ. ՔՐԻՍՏՈՆՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԲԻՆԵՆԱ-
 ՐԱՆ. —


ձակարկ Այբեհաբանին. — Տետրակ
 այբբենարան: Որ է գուն ընթերցական
 ուսման նարադրեցեալ սակս դեռարու-
 սիկ եւ նորարդրջ տըզայոցն: Նաեւ
 ամենից դեռ եւս ոչ ուսելոյ զգիր. որք
 ունին զլան ուսանելոյ: Տպագրեցեալ ի
 թուին հայոց ՌԻԻԱ. ի Տպարանի Պետ-
 րոսեան Ստեփաննոսի:

ձակաս Քրիստոնեականի. — Յազազս
 մանկանց առ ի կրթութիւն եւ ՚ի վար-
 ժումն ի կրօնս Քրիստոնէութեան:

Երկուքը միասին կազմուած էր, մի
 եւ նոյն դիրքով եւ միեւնոյն տպարանէն,
 միեւնոյն զարդերով շարունակուած,
 Այբբենարանը 36 էջ, 37 էջէն կը սկսի
 Քրիստոնէականը:

Շարունակելի

Տ. ԵՊ. ՊԱԼԵԱՆ



ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

«ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ «ԲԻԻՐԱԿՆ» ԶԻԿԱՐ»

Գաւառական կեդրոնի մը Միժ. Ու-
 սուցիչը կը գրէ. « Քսան երկու տարիէ
 « ի վեր այս տեղ գործելով եւ մեծերուն
 « ու փոքրերուն Պոլսոյ աշխարհաբարը
 « ուսուցանելով՝ շատ մը գաւառական
 « բառերու մոտացութեան տրուելուն

« պատճառ եղած էմ, որոնց վրայ կը
 « ցաւիմ հիմա. բայց ես ալ շատ յան-
 « ցաւոր չեմ... այն ժամանակ « Բիւ-
 « րակն» չիկար: »

Այս խղճահար խոստովանութիւնը պա-
 տիւ կը բերէ մեծարոյ ուսուցչին և ա-
 ռիթ կուտայ կրկնելու թէ մեզմէ շատեր
 նոյն խղճահարութիւնն զգալու վիճակի
 մէջ են:

Բայց, յայտնի թէ « Բիւրակն»-ի նը-
 պատակն ու փափաքն այն չէ որ դա-
 ւառական ամէն քաղաքի եւ գիւղի տե-
 ղական լեզուն նոյնութեամբ պահելով
 գործածելով՝ ընդհանրացնենք, Այս բանը
 ո՛չ միայն կարելի՛ ալլ եւ փափաքելի
 ալ չէ. գաւառաբարբառները կը մնան
 այնչափ ատեն որ դպրոցներու միջոցաւ
 տարածուի ու տիրէ, իրարու յարդող
 սերունդներու մէջ, միակ կանոնաւոր
 լեզու մը շնորհիւ միօրինակ միաձոյլ
 քերականական ուղղութեան զոր պար-
 զած ենք Տարական Քերականութեան
 և Լրացուցիչ Դարերբացիին , ինչպէս և
 մեր միւս դասագրքերուն մէջ , (եւ ինչ-
 պէս դատելի է , մեր գրքերու նորանոր
 տպագրութեանց մէջ ջանադիր կ'ըլլանք
 գործարել այդ ուղղութիւնը):

Բայց գաւառի ուսուցիչներէն եւ զը-
 րողներէն պահանջուածն այն է որ

1. Տեղական լեզուի Քերականական-
 Համաձայնական գրութիւնը գրի առնեն,
 եթէ կարելի է հրատարակութեան տան
 անկորուստ պահելու համար: Ասիկա լեզ-
 ուարանութեան համար վերին աստիճանի
 կարեւորութիւն ունի:


2. Խնամով հաւաքեն ու գրի առնեն
 տեղական լեզուի դաւառաբառները, ու-
 ճները, ստութիւնները, առածները եւլն.
 եցլն. որոնք նոյնպէս կարելոր են: Հը-
 մուս լեզուաբաններուն, գրագէտներուն
 և թերեւս օր մ'ալ գրական կաճափ կը
 մնայ նոյն գաւառաբառերու հաւաքոյթ-
 ները խնամով պրպտել, ուսուցնասիրել,
 և կեանք տալ՝ գրական լեզուին ու
 բառգրքերու մէջ առնելով այն բառերն
 ու առումները որոնք չկան մայր լեզ-
 ուին կամ գրականութեան մէջ: Այս-
 պէտքով, կարելի կ'ըլլայ կորուստէ փրկ-

կել լեզուական գանձերը, թաքուն գոհարները որոնք ժողովրդին մէջ կը գործածուէին՝ իբրև մնացորդ գրաբար լեզուին, կամ հին աշխարհարարներուն եւ արդի գաւառաբարարին որ ճոխացած է նոր նոր պէտքերէ ծնունդ առնող բաներով: Գրական լեզուն, այս տեսակետով, շատ պէտք ունի բանաւոր լեզուին. և գաւառական բաներուն այն ճոխ մըթերքը զոր « Բիւրակն » ունի այսօր, ցոյց կուտայ թէ Հայ լեզուն այն սահմանափակ ու մեծ մասամբ չինձու բաներով խճողուած Պոսոյ գրական կամ կեցրոնական լեզուն է, եւ թէ՛ այս վերջինը իր ամբողջութիւնը գանձելու համար պէտք է գաւառականներէ փոխ առնէ իւրացընէ ինչ բառ որ կը պակսի իրեն և անով գտնէ տակաւ իր հարուստ լիութիւնը:

3. Ոչ նուազ կարեւոր է գաւառացի բառահաւաքներուն ու բանահաւաքներուն նուրբ ու շաղթութիւնն ընկ տեղական հնչումներուն, եւ անոնց հարազատութիւնը չլսաթարել՝ սրբազրած ըլլալու կեղեքիչ ու ծիծաղելի յաւակնութիւնով: Այդ հնչումները՝ ձայնարանական որոշ օրէնքի ենթակայ՝ ոչ նուազ կարեւոր են ի վեր հանելու համար այլ և այլ գաւառաբարբառներու արժէքն ու նշանակութիւնը լեզուաբանական Գիտութեան մէկ ճիւղին՝ ձայնարանութեան համար, որուն վրայ շահեկան ուսումնասիրութիւն մը հրատարակեց այս տարի մեր լեզուաբան աշխատակից Հ. Աճառեան (Les Exploites de l'ancien Arménien, étudiées dans les dialectes modernes, Paris, 1899): Այս մասին, սակայն, մեր յարգելի աշխատակից բանահաւաքներուն համար հասկանալի եւ հետեւելի առաջնորդ մ'է Պ. Գր. Խալաթեանցի Մտազիբը, որուն թ. զլուխը նախորած է լեզուի և ճնչիւններու, ցոյց տրուելով հնչումներու եւ տառերու պայմանական ճեմները, որոնց շնորհիւ կարելի կ'ըլլայ կենդանի բարբառին հնչումներուն պէսպիսութիւնը, շնչաք, ձայնին ուժն ու եղանակաւորումը՝ զգա-

լի ընել (տե՛ս անդ, էջ 66-73, յօդուած 310—330):

Այս առթիւ խորհուրդ կուտանք նորէն կարողալ « Բիւրակն »-ի 41 թիւին մէջ (13 Հոկտ. 1899) Պ. Սահեան Մխիթարեանի յօդուածը, Հայ Բուսաբանութիւն, որ Հայ լեզուին համար շատ կարեւոր ըլլալէ զատ, տեղական պէս պէս բոյներու վրայ շահեկան ծանօթութիւններ կրնայ հայթայթել եւ առիթ տալ բաղդատելու այդ բուսական կեանքը զիտութեան մէջ ծանօթ բուսականութեան հետ: (Տե՛ս այս մասին, նաև Պ. Կ. Պատմաճանաչի գրածը, « Բիւրակն » թիւ 44):



Ս. Դ.

ԳՐԱԿԱՆ

Ամանորի առթիւ, հետեւեալ ոտանանաւորը կ'ուզեմք՝ որքան սրտով, նոյնքան ալ քակով հարուսաներուն:

Առ Բարաթիւն եւ առ Գեղեցկութիւն

Փայլուն արեւն երբ իր շողերն առաջին,
Սիւռն լրնին ալեկաց վրայ կապուակ,
Կամաց կամաց երկուքիս,
Ելլեն լիտանց կասարներ անագին,
Դիտեն վարը դասն ու անհառ, միայնակ,
Մտիկ ընենք, խօսինք, խոկանք ժպտալին:
Դաւօր աղուր գեղջկուծին,
Ձեռք բռնած փունջ փունջ, միխակ ու
հարկիս,
Մտղկաւեսէ պիտի փալից մեր ուղին:
Գեղեցկութիւն, զո՛ւ հրամայր լուներուն,
Դու յո՛յզն, հոգի՛ն արեւներուն հեռաւոր,
Քեզի համար առանձին,
Կը քափառիմ սարեք, ձորեք մոլորուն,
Քեզ կ'որոցնեմ ամեն վայրեք մեծաւոր,
Եւ քե մէկ օր իմ աչիքն,
Լոյսը մաքի, մացառուեսն երբ անցնիմ,
Թող քո շուններ — վայրի վնդոցի մտերիմ —
Ըզնի՛գ երգեն ինձ մելանոյց, վեսալին:
Եւ երբ քրիստը վայրեքու մէջ աւերակաց,
ողբերգուն,
Բուց, ֆաբրու վրայ կ'երգէ արատյոզ,
Եկուր անձայն, անբռուկ,
Երբան մաւած օճախին ֆոլ, երդին քակ,
Հոն հարցնենք քու առ որբերն ու անյոյս

լանք, փայլալայենք կեանքերն աւեր ու
անուրբ...

Երկնի աստղերն խուսափուկ,
Արփաւեանքն պիտի մըռայլ, անյասակ
Ուղին, փոս եւ անձուկ,
Ո՛վ Բարուրին, յոյսն աւխարհի, մարդ-
կուրեան,

Թե՛ ամեն ոք ենզի անօտ ու ճեսեր,
Ո՛ն այն ասն այն վիճեր
Կը ճասնէին, կը փոխուէին խնդուրեան,
Կը բուժուէին հոգւոյ վերերն կարեվեր,
Լացող կեանքը կը ժպտէ,
Ու սեւաբաղդ իմ Մուսան
Ամեն բոյնէ տարբեր ճուռող կը լքեր,
Ո՛ւր ես արդեօք, բարի ձայն...
(Թարգմ. Ո. Ռ.) Մ. Էմիլն պէշ

ՄՐՏԵՐՈՒ ՅՈՒՇԱՏԵՏՐԷՆ

Բարեկամիս Հրաչիկն

Գիտե՛ս, Հրաչ, իմ Յուլիան սուկի շո-
ղեր կը ցանցընէ արեւելքը պսպղուն,
ուր կը փթթի բոց հրայրքներով կեր-
տուած՝ սիրտ մը համակ, լի հրապոյր շող-
չողուն:

* *

Հաւտա՛, Հրաչ, անոր քնքուշ կուրծ-
քին վրայ կան մեղրածոր ստինքներ.
Լուսա-աղբիւրներ զոյգ, որոնց մէջէն կը
կաթկըթեն կաթ... ու մեղրեր:

* *

Գիտե՛ս, Հրաչ, հոգեցունց ժպտանե-
րուն մէջ՝ ես քնանալ կը բաղձամ. որ-
ուան յօգնութենէ՛ սթափ, ինկած մէկ
կողմ, հոն անբաժան կը մնամ:

* *

Հաւտա՛, Հրաչ, կը փնտռէի երկնա-
կամարը ծիլ ծիլ կապոյտին մէջ մինակ,
թէ կա՞յ արդեօք շուշան պարիկներու
իմ մէկ հատիկ՝ Յուլիան անուշակ:

* *

Գիտե՛ս, Հրաչ, իմ Յուլիան ունի բո-
սոր, շողակաթ այտեր, իսկ ունի՞ քու

լոյս հրեշտակներու ղեցուհիդ սիրածոր
չրթներ:

* *

Ա՛խ իմ Հրաչ. իմ Յուլիան ինձի
համար սէր ու նաղանք է պահած, քերձ
համբոյրներ լի սրտով, հրեշտակներու
հետ անկեղծութեամբ է ուխտած:

* *

Հաւտա՛ Հրաչ, շողբացիկ ու շողխը-
փիկ երկնի կապոյտն անհուն, չի ղիւ-
թեր զիս զերթ Յուլիան իր սուկէժան-
եակներովը սիրուն:

* *

Հմայքներով ստեղծուած է Յուլիան՝
համակ հրապոյր. ուշիկ ուշիկ ճակատս
կը շոյէ իր մատներովը խնկաբոյր:

* *

Ձկայ նման Յուլիայիս որ ունենայ
քաղցր շեշտերը ձայնին՝ դաւարներու դով
չուքին տակ նուազելով պէս ներգաշա-
նակ ջութակին:

* *

Հաւտա, Հրաչ, « հոն սրտերու մեծ
Աստուծոյն քով ուխտեցինք միմեանց
սէր սուրբ» թէ Յուլիան, ի՛նչ որ ըլլայ
անշուշտ օրին մէկ իմա ըլլայ:

Խարբերդ ԳԵՂԱՄ ՄՈՒՇԵՂ

ԳՐԱԿԱՆ ՔՄԱՅՔ

Թե՛ ինչպէս տուեց Ազամ հեծեսկնե-
րուն սխալումը:

«Լաւ չէ որ մարդը մինակ ըլլայ. ի-
րեն յարմար օգնական մը տանք իրեն»
ըսաւ Աստուած, տեսնելով որ Ազամ՝
Եղեմի մէջ միս մինակ կը ճեմէ, տխուր
ու մտազբաղ՝ իրեն ընկեր մը գտած
չըլլալուն համար այն ամէն արարածնե-
րուն մէջ որոնք իրմէ առաջ ստեղծուած
էին, եւ որոնց վրայ իշխելու կոչուած
է ինքը:

Ուստի Աստուած թմրութիւն մը ձգեց Ադամին վրայ, ու առաւ անոր կողերէն մէկը: Բայց այս կմախքին մարմին մը տալու համար, ուզեց որ արարչագործութեան լուսագոյն նրկներէն խառնուրդ մը ընէ՛, որպէս զի կինը զոր պիտի ստեղծէր, արժանաւոր պսակն ըլլայ արարածներու թագաւորին:

Եւ հրաման ըրաւ հրեշտակներուն որ բերեն իրեն, երկինքէն՝ տիեզերքի անհունութիւնն ու աստղերուն հուրը՝ անոր աչքերուն մէջ դնելու համար. հաստատութեան կապոյտը՝ անոր երակները ներկելու համար. ատուան սիւքը՝ անոր շունչը բազադրելու համար. հրեշտակներու թեւերէն թափած փետուրներ՝ անոր մազերը շինելու համար. ու եղեմէն վարդի կիսաբաց կոկոն մը՝ անոր շուրթերը կազմելու համար. շուշանի սպիտակ թերթեր՝ անոր մորթը ձեւելու համար. անրիժ ձերմակ աղաւնի մը՝ անոր սիրտը ձեւացնելու համար. նուրի հատիկներու կարմրուկ հիւթը՝ անոր արիւնին բազադրութեան համար. կեղուուած նուշի մանրիկ հատիկներ՝ անոր ակոսները շարելու համար. եղեմի ծաղիկներուն ամենէն քաղցրամորթներուն վրայ թառոյ մեղուններուն փեթակէն անարատ մեղրամոմ՝ անոր եղունգները շինելու համար. եւ շատ մը ազնիւ ու անուշահոտ հոյզեր ու բոյսեր՝ հողին հետ շաղուելով անոնց մարմինն ամբողջական զանգուածը կազմելու համար:

Ու այսպէս Աստուած շինեց կինը եւ տուաւ անոր շունչ կենդանի. ու տեսաւ որ բարի է, եւ տարաւ զրաւ զայն փափկութեան զրախտին մէջ Ադամին քովիկը:

Եւ ուրիշ հրեշտակներ, որ պաշտօն ունէին մաքրելու արարչագործութեան լուսեղէն տաշարը, որուն մէջ շաղած յօրինած էր Աստուած՝ կնոջ մարմինը, տաշտին պլշկած բազադրութեան մնացորդէն մէջ արմանքով գարմանքով տեսան թէ արարչագործութեան ստատուկու հրեշտակները սխալ ընել էին իրենց արարչագործութեան միջոցով:

խառնած էին բուռ մը զգայնիկ ու զգալ մը ցօղ. որը Աստուած ուրիշ բազադրութեան համար բերել տուած էր:

Եւ այս երկու աւելորդ տարրերուն մէկէն կազմուած էին Եւայի շիղերը, ու միւսէն ալ՝ աղցունքը, որոնց երկուքին ալ պէտք չէր տեսած Աստուած՝ ինսանելու համար Ադամին:


Ա. Գ.

ԱՉԳՈՍԻՆ

Ուսումն. Խորհուրդը իր վերջին թերթեր նստին մէջ որոշեց մէկդի թողուլ վարժապետանոցի մը հաստատութեան ծրագիրը և առայժմ հաստատել դասընթացք մը ուր աւանդուին լրացուցիչ ուսումներ՝ ուսուցչութեան պատրաստուողներուն: Բայլ առ քայլ առաջ երթալու սկզբունքին համապատասխանող այս գաղափարը աւելի նախամտածար է քան անկարելիին հետամտելու անօգուտ ջանքն ու վարչական ամուլ զբաղանքները: Արդարեւ, այս ձեռնարկը գործնականին մէջ օգտակար պիտի ըլլայ ուսուցչներուն համար, որոնք կը փափաքին իրենց հմտութեան թերին լրացնել եւ, ուսուցչական ընտրելիութեան հրահանգին համաձայն, պատրաստուել աստիճանաբար աւելի արժանիք եւ աւելի բարձր վկայագրեր ստանալու՝ հետեւելով նոյն դասընթացքին:

Բայց բոժոժը ո՞վ պիտի կախէ... փափաքելի է զիտնալ թէ ո՞վ, որո՞նք պիտի կոչուին դասախօսել այդ լրացուցիչ դասարաններուն մէջ:

Եւ յետոյ, միայն նախակրթութեան այս կամ այն ճիւղէ՞րը պիտի աւանդուին բարձրագոյն աստիճանով մը, թէ մասնավարժական զուտ պիտի կազմուի՞ Հոգեբանութեան հնական Մանկավարժութեան



դասեր ասանդելու համար, ու նորէն, ո՞վ է որ պիտի կոչուի այդ բեմին վրայ բաղմեւում, պիտի զբանուի՞ն անանկներ որ իրենց հմտութեամբ ու հեղինակութեամբ պատկառանք ու վստահութիւն ներշնչեն ու հետեւողներ գտնեն, թէ պիտի կոչուին թափուր սրահի մը մէջ, թափուր գրասեղաններուն դասախօսելու:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Ալաւելեռ, Յ. Յ. — Պէտք է կանխիկ զրկէք երկու թերթերուն տարեգները՝ 130 զրուշ:

Իզմիս, Տիկից Բ. Բ. — Դրկեցիք 100 հարաբ:

Ասանա, Յ. Յ. Զ. — Դրկեցէք ձեր հաւաքած թերթերն ու նութերը:

Կարին, Ս. Շ. — Չհասցանք Վեր պահանջը պահանջ կը մնայ խօսքը:

Կարին, Վ. Ա. — Դրկեցէք զաւտական հէքեաթներն եւ այլն:

Կարին, Ս. Ս. Ս. — Ժողովրդական կեանքէ առնուած ամէն ինչ շահեկան է, Դրկեցէք ձեր նութերը՝ բաժանորդագնին հետ:

Իւլպիե, Ա. Ա. — Կը կարգադրենք:

Էսկիեհնէր, Ս. Քիւլանեան. — Մինչեւ այսօր Գ. Մ. չմտարեց, զուք գանձելով զրկեցէք:

Թիֆլիս, Գ. Ք. Ա. — Ընտրակալուութեամբ ստացանք ձեր նուէրը:

ՉԵԿՈՅՑ ՄՄԱ

Բիւրակներ 50-51-52 թիւերը չենք զրկեր անոնց որ մինչեւ այսօր տարեգին վճարելու թերրացած են:

Երբ ուղղակի կամ մեծ. Գործակայներու միջոցա հաճին կարգադրել յետամնաց հաշիւները, այն ատեն պիտի կրնանք զրկել պակաս թիւերը:

ՀԱՅ ԹԷՅԱՎԱՃԱՌ

Ինքնուրուի իտալացիներն վաճառատունը (Պահճէ-գարու ձէլալ Պէյ խանի դրան քով) ամէն ճաշակի ու քսակի յարմար թէյեր ի վաճառ հանած է, եւ պատրաստ է դաւառներէն եղած խնդրանքներուն գոհացում տալ: Տեսակի լաւութիւն, գներու աժնութիւն եւ գործառնութեան ճշդութիւն:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ՏՂՈՅ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գործ Գեր. Մկրտիչ Վ. Աղաւնուշիի. Առաջնորդական Տեղապահ Կուտինայի:

ԿԱՐԵՒՈՐ

Այժմէութիւն ունեցող բանն է, նոր տարիին աւթին, Զ. Թորոսեանի ՅՈՒՇԱՏԵՏՐԸ որ լրջ տեսաւ այլ եւ այլ տեսակներով՝ պարզ, լաթակաղամ, կաշեկաղամ, սուկեղած, մատիտաւոր, փողոսկրեայ:

Ամէն բահանայ, բժիշկ, փաստաբան, ուսուցիչ պէտք ունին այս Յուշատետրին:

Դիմել Գաւթեան Գործակալութեան, 17 Գաղաքէր խան. Պահճէ Գարու:

ՅԱՆԿ ՆԻԹՈՅ

Ազգագրական

Ազամամութ Ս. Ն.	668
Աւանդութիւն մը Գ. Մ.	774
Բաղէի խաղերը Թ. Կ.	698-712
Գալեհիք ու Նա Ա. Գ.	648
Երեք խնձոր Ա.	475
Երկու հարցումներ. պատասխ. Մ. Ն.	633
Զարդարիչի վանքը Գ. Զ.	454
Թաւրիզի հայ գիւղ. կեանքէն Ս. Ա.	695
Լեւոնապաշտութիւն Թ. Գ.	584
Մրտիր ընտանեկան իրաւագիտութ. ամուսնութեան ատթիւ	422
Կախարդութիւն եւ թովչութիւն Մանինայի Գ. Ե. Ս.	438

Հարմնիքը Մալաթիոյ մէջ Հ. Պ. 424
 Հայպատ ու Ժամկոչ Սարգիս Ա. Գ. 791
 Հոգեպաշտակ նախապաշ. Բ. Թ. Շ 734
 Մանրասյի անցեալէն Մ. Ե. 570
 Մեր բաժինը Գ. Շ. 536
 Նախնիքներու անդամատրոնուրդ. Տ. 775
 Նախապաշարում. Կիրիւնի Հ. Կ. Տ. 820
 » Նիկոմիդիոյ Թ. Գ. 540
 » Քղիի մէջ Լ. Ս. 440
 » Մարզուանի Յ. Կ. Ս. 666
 » Մարզուանի Յ. Յ. Ա. 794
 » Սգերդի Ս. Ն. 455, 614
 » Մունճուս. Ի. Խ. Ա. 473, 487

Պատուաշունչ (Բարերդի նախապաշարումներ) Յ. Պ. 520-567-611
 Պահպան հրեշտակը Ա. 437
 Սիրլի՛իսարցի կիւնը 709-741-806
 Ստեփաննոս Ն. Ս. Տ. Ն. 794
 Վիշապը Յ. Տ. Ն. 684
 Քանի մը զիտողութիւններ Ա. 685
 Օձ մանուկը Ռ. 519
 Յալ բանալ (գուշակութիւն) Յ. Պ. 552

Քանասիրական

Անհրաժեշտը՝ մեր գրականութեան համար Խ. Բ. 517

Քարոյական

Գեղեցիկ եւ իմաստուն խօսքեր (Թարգմ.) Կ. 818

Վեղարուեստական

Թատերական նօթեր Ս. Դ. 621

Պատական

Ալաշկերտի մէջ եւ Վանի շուրջը Ա. 822
 Կեանքը (փիլիսոփայական կենսաբանութիւն Մ. Մ. 605
 Բժշկական երկու հարցում 659

Պրախօսական

Պէտք չէ շփոթել 588

Պրական

Ամառնային զրօսանքներ Մ. Թ. 465
 Ամպերը Ա. 547
 Անդունդը Մ. Թ. 637
 Առ բարութիւն եւ զեղեցկութիւն (Թարգմ. Ռ. Ո.) Մ. Էմին 828
 Առ վտակ Տ. Գ. 577

Արցունքի շիթը Խ. Բ. 450
 Աքատիա Մ. Լ. 747
 Արագախօսութիւն եւ զուարճալիք 634
 Բերկրանքի սէրը Յ. 720
 Բուզդայի ոսկեղէն խօսքերը Ա. 430
 Դանակը Դեղին տերեւներ Խ. Բ. 777
 Դարավերջիկ սերգ կրպոց՝ Շ. 636
 Երեք տառեր Թ. 703
 Զեփիւռ Խ. Բ. 719
 Զուարթ տխուր Մ. Վ. 592
 Թէ ի՞նչպէս տուժեց Ադամ Ա. Գ. 829
 Թղթէ սրտիկը Խ. Բ. 814
 Լօնկֆէլլօ Բ. 589
 Խորուրդներու, Երազներով Մ. Թ. 776
 Մովք Խ. Բ. 622
 Կանանչին մէջ Ա. 531
 Կրակը մարա՛ծ Յ. 673
 Հանեուկ Ա. 797
 Հանելուկ Ա. Գ. 659
 » » 578
 Հիւլէն ու սէրը Մ. Թ. 577
 Հիւտա Տ. Ա. 496
 Հոգիս, Կեանքս Մ. Թ. 719
 Մանկան երազը Լ. Ս. 816
 Մանկիկ մը Կ. 450
 Մայրիկին պատասխանը Լ. Ս. 638
 Մայրս Պ. Ս. 497
 Մութին երգը Ա. 736
 Նոր հոսանքը Մ. Ն. 672
 Նուէրներ (գրական քմայք) Ս. Գ. 718
 Ուսանողին աղօթքը Մ. Թ. 637
 Ուսուցիչը (Թ. Յ. Պ.) Մ. Թ. 623
 Պարապը Ն. Կ. Տ. 623
 Զութակ Ն. 481
 Սիրոս. Յոսեփներ Մ. Թ. 429
 Սիրախարին երկտողը Շ. Բ. 811
 Սէրն ու մնդուն Ն. Գ. Յ. 703
 Սրտերու յուշատետրէն Գ. Մ. 829
 Վաղամեծիկն Երուանց Կ. Ո. 689
 Վաճառուած կոյսը Յ. Մ. 749
 Վերացականին քսակը Լ. Մ. 796
 Վճերճնա՛տ Մ. Թ. 563
 Փորձենք քիչ մ'ալ զուարթ ըլլալ Մ. 674

Չամազանի

Արուեստահանգէտը Ա. Ն. 782
 Դպրոցական հանդէսներ 482
 Երկրագործական 783

Թիւ 28 հանելուկին լուծումը	508
» 36 » » »	675
» 41 » » »	767
Իզմիրի Հոգատար-Որբանանամը	617
Ի նպատակ հիւանդ ուսուցչին	617
Հայերէն ժողովրդ. երգերը Մ. Գ. Բ.	783
Ճարտար գործողութիւն մը	721
Մամուրեանի Յորեկեանին առթիւ	641
Մեր գրական լեզուն Ճ. Ն. Պ.	595
Մեր ընտրելիները Ս. Գ.	638
Յօդուածագիրներուն Ս. Գ.	591
Նախափորձին առթիւ	481
Նոր լուրքը Բալուէն Գ. Ք.	578
Պ. Աղաբեգեանի պաշտպանող.	507
Վերափոխման տունը Ս.	505
Տարեգրք Քահակալութեան	501

Ընկերական

Անհատականութ. մեր մէջ Գ. Ա.	469-549
Գեղեցիկ խորհուրդ Ս. Գ.	581
Դամբանականները	629
Դործնական քաղաքավարութիւն Ճ.	801
Զգուշանանք չափազանցութիւն. Է.	707
Ընթերցումը մեր մէջ Վ. Ք.	625
Ինքնատիպ գրականութիւնը Մ. Գ.	565
Խարբերք եւ Մէղրա Ա.	526
Կարգա՛լ թէ՛ գրել Մ. Թ.	421
Մէկ կայ հազար կ'արժէ Ս. Գ.	723
Մենաստանն ու իրենները Մ. Թ.	583
Մեր բարքերէն է.	648
Մրցումն անընդունակ Ս. Գ.	453
Յորեկեանին առթիւ Ս. Գ.	645
Յորեկեանին արդիւնքը Ս. Գ.	678
Սփոփարար օրինակ մը (քահանաներու կեանքէն) Ս. Գ.	661
Վերջը ո՛ր պիտի երթայ Ս. Գ.	771
Քանքարաթաքոյցներուն	485
ժողովրդական բանահիւսութիւն	
Ազնուականին տղան Յ. Խ.	458
Անէ՛ծք եւ օրննե՛ք Տիարպէ՛ք Մ. Գ.	545
Առածներ Կիրարին Հ. Կ. Տ.	452-478
Առածներ Հազոյի Յ. Դ.	805
Առած, ո՞ճ, հանելուկ Տարէն. Մ. Թ.	498
Առածներ Քղիի Լ. Ա.	554
» Խոտորջուրի Հ. Մ. Հ. Խ.	642
» Խիանի գաւառաբարբա. Մ. Գ.	650
» Մալաթիայէն	772

Բաղդը Գ.	664
Բուրու (աւանդա՛վէպ) Ն.	615
Բուռ մը սոկի (պարերգ Մուշի) Մ. Ն.	443
Գագօ, գագօ, գագօ Ա.	546
Գիինի խաղեր Տարէնտէի լեզ. Մ. Թ.	572
Գու՛թան (Ալաշկերտի լեզ. Մ. Մ. Հ.)	481
Եղեկիէլին հէքեաթը Թ. Գ.	555
Սրգ Կիտուտի Գ. Մ.	641
Սրգը իբր հոգեկան պէտք (ուսում-նասիրութիւն) Մ. Վ. Ս.	662, 679, 693, 728, 762 803
» Խնոյին հէքեաթը Կ. Չ.	731
» Հանելուկներ Բարբերդի Կ. Տ. Խ.	587
» Չուկն ու զժգո՛հ կնիկը (հէք.) Ս. Ա.	764
» Մժգուկն ու ծիծեռնակ » Յ. Մ.	683
» Նարմանցիին երգը Գ.	524
» Պլսուլ ու վարդ Մ.	666
» Սիրահարը Հ. Տ. Ն.	586
» Քաղղէական աւանդութիւն Խ. Ք.	616
» Օգգօ երէցն ու սատանան (Ունիոյ լեզուով) Ս. Գ.	545
» Օրինակելի գործունէութիւն (մարտավէպ) Լ. Ս.	618
» Օրոց (աւանդա՛վէպ) Գ. Մ.	572
Իմաստասիրական	
Հոգեբանական գեսը Ճ. Ն. Պ.	732
Լեզուաբանական	
Այն ժամանակ Բիւրական չիկար Ս. Գ.	827
Անտիօքի գաւառաբարբ. Չ. Կ.	433
Արդի աշխարհաբարբ լաւագոյն քերականութիւնները Ա.	688
Բ. նմոյշ Մաղնիսայի գաւառաբարբառէն Գ. Շ.	575
Երկու հարցումներու պատաս. Գ. Խ.	457
» հարցումներ Մ. Հ.	603
Ի՛լ վերջաւորող բայերուն ժխտական Ս. Գ.	556
» Խարբերդի գաւառաբարբառը Ա.	777
» Խիանի » Մ. Գ.	686
» Կարինի » Տ. Թ.	442
» Հայերէնէն փոխառեալ բառ. Մ. Ա. Թ.	797
» Հայ լեզուի քանի մը խնդիրներ Յ. Վ. Յ.	534-591
» Համաձայնութ. Մարաշի գաւառաբարբառին Յ. Վ.	425

Համէլէնի գաւառաբարբառը Բ. Վ. Կ. 508, 558, 603, 654, 699, 752, 779

Հայերէնէ փոխառ. բառ. Վ. Ք. Ա. 441

Հայ բուսաբանութիւնը Ս. Մ. 658

Հայ բուսաբանութ. առթիւ Կ. Յ. Բ. 699

Մանիսայի գաւառաբարբառին քերականական ուրուագիծը Գ. Շ. 528

Սթանոզի գաւառաբարբառը Ս. Մ. 670

Սիւլիշիսարի » Ս. Վ. 427, 709

Կենսագրական

Յակոբ բժ. Թօմայեան Թ. Տ. 746

Կրօնական

Ամուսնալուծութեան առթիւ Ա. 736

Բողոքական Հայերու երգարանը 816

Ս. Մինասի գերեզմ. Մ. Վ. Ա. 739

Կրթական

Մայրենի լեզուն տաճկ. գաւառներու մէջ 583

Հասկաբաղ

Բիւրակն, Բիւրակնի հասցէի՞ն. Զեռնեքեցութեան ողին մեր մէջ 674

Երկու բառազրքեր. Մեծ նահապետը. «եղբայր եմք մենք». Բազմազէպ անտեղեակ. Գազանճեանի երկը. Իւսկիւտարի կնճին 593

Հայոց հեթանոսական թուականներուն ութը մեհնանները 690

Հ. Ս. Էփրիքեանին. Ամէնուն բազմանքն. Օր. Օտեանի Սիրտը. 766

Համալսարան. Անօգուտ է պարտակել. Վերցնենք անուշի թէփսին 780

Ջեռնհասի մը վճիռը. Արաքը. Ի՞նչ կըզգան յորելեանները 704

Ղարաբաղի բարբառը 736

Յակոբջանի քերթուածները Հ. Ա. 720

Յ. Իզմիրեանց գրակ. հանդէսը 466

Հնայագիտական

Գամբըք անունը բեհեռագր. մէջ Բ. 686

Հազար տարուան հնութիւն մը 578

Մ. Լէնինի Լէքըլրին առթիւ Ա. 490

Հոգեբանական

Ատենախօսելու ձիրք փ. 619

Մանկավարժական

Աշխարհազրութեան ուսումը Ս. Գ. 700

Առանկն կրթութեան թանգր. Զ. Ն. 560

Կրթական Յեղաշրջում Ս. Գ. 787

Վախի զգացումը տղոց մէջ Զ. Ն. 462

Քանի մը խորհրդածութիւններ 588

Մատենախօսական

Անտիպ յիշատակարաններ Տ. Ե. Գ. 824

Համայնի մը առթիւ Ա. Գ. 715

Ջեռազիր Խորհրդատետրի մը տարբերութիւնը Մ. Վ. Ա. 631

«Նախափորձին» առթիւ Թ. Յ. Գ. 724

Փիլոն Եփրայեցիի եւ Եգիշէ Ս. Ե. Խ. 788

Պատմական

Մանիսայի հայ գաղութը Գ. Շ. 503

Վարչական

Մեր բաժանորդներուն 819

Կը շարունակենք 819

Յայտագիր Դաւթեան Գործակալ. 755

Ջրի ձայն Ս. Գ. 435

Տնտեսական

Ամասիոյ բերքերը Բ. 589

Տեղագրական

Ակնայ Կամարակապը Ա. Յ. Շ. 494

Դիտողութիւն մը Գ. Մ. 774

Ծրագիր տեղագ. ուսումնասիր. Ս. Գ. 716

1. Հնձուց կամ Կարմիր վանք 444

2. Հոբիփսիմէ Ս. Շ. 652

Հէրէկ Ո. 628

Մալկարա Յ. Ե.—Ս. Ա.—Յ. Գ. 492

Մարզուան Մ. Է. 492

Մոռցուած անկիւններ (Ղընիա եւ Եազուպէէ) Օ. Մ. 635

Չորում Զ. 574

Սեւ ջուր, շամբ, Ազ տաղ Ս. Շ. 773

Սլիվան գաւառակ (Միւֆարդին)Ս. Ն. 542

Վան Վ. 608

Վարչական Յ. Թ. 461

Բնագիտական

Ակնարկ մը Բիւրակնի անցեալին վրայ Ս. Գ. 597

ՎԵՐՋ Բ. ՇՐՋԱՆԻ

Արտօնատը.— Հ. Ս. Խ. ԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՏԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ